ՓՈՓՈԽՎՈՂ ԱՇԽԱՐՀ

ՀԱՅԱՑՔ ԵՐԵՎԱՆԻՑ

2017/3
(10)

Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոնի (ՌԱՀՀԿ) վերլուծական-փորձագիտական եռամսյա հանդես

Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոն

ՀՀ, 0033 Երեւան, Երզնկյան 75
Հեռախոսներ՝ (+37410) 528780, 274818
Հետապատճեն՝ (+37410) 524846
Էլ. փոստ՝ root@acnis.am
Վեբկայք՝ www.acnis.am

Երեւան
2017

Փոփոխվող աշխարհ. Հայացք Երեւանից
Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական
կենտրոնի (ՌԱՀՀԿ) վերլուծական-փորձագիտական եռամսյա հանդես

Թիվ 3 (10), հուլիս-սեպտեմբեր 2017

2017/3
(10)

Գիտական խմբագիր՝ Մանվել Սարգսյան

Խմբագիր եւ սրբագրիչ՝ Գեւորգ Լալայան

Խմբագրական խորհուրդ՝ Կարապետ Կալենչյան
Աշխեն Մուշեղյան
Լիլիթ Սարուխանյան

*Համակարգչային ձեւավորող
եւ էջադրող՝* Աշոտ Թուրաջյան

ՌԱՀՀԿ եռամսյա պարբերականի՝ ***«Փոփոխվող աշխարհ: Հայացք Երեւանից»*** վերլուծական հանդեսի նպատակը հայաստանյան, տարածաշրջանային եւ համաշխարհային իրողությունների լույսի ներքո Հայաստանի այսօրվա ու վաղվա կարեւորագույն մի շարք խնդիրների, մարտահրավերների, հեռանկարների համայնապատկերի արտացոլումն է՝ թարմ հայացքով մատուցվող գաղափարների, առաջարկների, այլընտրանքային մոտեցումների միջոցով, որոնք կարող են լավագույն բանալի լինել պետության առջեւ ծառացած բազում կնճռոտ հարցերին լուծում տալու տեսանկյունից: Թիրախային ընթերցողը քաղաքացիներ, անհատ փորձագետ-վերլուծաբաններ եւ ոլորտում գործող հաստատություններ են Հայաստանում, Արցախում եւ Սփյուռքում:

© Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոն (ՌԱՀՀԿ), 2017
© Armenian Center for National and International Studies (ACNIS), 2017
© Армянский центр стратегических и национальных исследований (АЦСНИ), 2017

Հոդվածագիրների տեսակետները կարող են չհամընկնել ՌԱՀՀԿ դիրքորոշումներին:
The views of the authors do not necessarily reflect those of the Center.
Мнения авторов публикаций не всегда совпадают с позицией АЦСНИ.

Արտատպման դեպքում հղումը «Փոփոխվող աշխարհ. Հայացք Երեւանից» հանդեսին պարտադիր է:
While citing the content, the reference to “The Changing World: Viewpoints from Yerevan” is obligatory.
При перепечатке ссылка на журнал «Изменяющийся мир. Взгляд из Еревана» обязательна.

Վաճառքի ենթակա չէ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՌԱՀՀԿ գիտական ծրագրերի տնօրեն
Մանվել Սարգսյանի ներածական խոսքը 4

Հոդվածներ

ՀԱՅԿ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Թուրքիայի սիրիական քաղաքականությունը 2011-2017թթ. 5

ՄԱՆՎԵԼ ՍԱՐԳՍՅԱՆ
Ինքնորոշման ուժը. կանխորոշվա՞ծ էր արդյոք
Հայոց ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում 19

ՀԱՄԼԵՏ ՁԱՔԱՐՅԱՆ
Տնտեսական անվտանգության եւ
տնտեսության զարգացման խնդրի շուրջ 50

ՄԵՐՈՒԺԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Միաբանությունն ի՞նչ ենք անելու *(շարունակություն)* 58

Հայաստան-2017, հուլիս-սեպտեմբեր.
փաստեր, իրադարձություններ 78

ՌԱՀՀԿ գիտական ծրագրերի տնօրեն Մանվել Սարգսյանի ներածական խոսքը

Հարգելի ընթերցողներ,

Ձեր ձեռքին է «Փոփոխվող աշխարհ. Հայացք Երեւանից» եռամսյա հանդեսի վերջին համարը: Սկսած 2012 թվականից՝ Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոնը (ՌԱՀՀԿ) որոշ ընդհատումներով հրատարակում էր այդ պարբերականը, որտեղ զետեղվում էին հետազոտություններ Հայաստանի եւ Մեծ մերձավոր արեւելքի տարածաշրջանի քաղաքական ու սոցիալ-տնտեսական հրատապ հիմնախնդիրների վերաբերյալ:

Այդ ուսումնասիրությունների հեղինակները մեր երկրի հայտնի քաղաքագետներ էին, ինչպես նաեւ երիտասարդ տաղանդավոր փորձագետներ ու քաղաքական վերլուծաբաններ: Ի սկզբանե մենք որդեգրել էինք հեղինակային մտքի լիակատար ազատության ապահովման գործելակերպը, ընդորում՝ պահանջելով խստորեն պահպանել նյութի շարադրանքի՝ ՌԱՀՀԿ-ի կողմից ընդունված չափորոշիչները: Այդպիսի մոտեցումը նպատակ ուներ խթանելու ինչպես քաղաքագիտական մշակույթը, այնպես էլ Կենտրոնի տպագիր արտադրանքի մատուցման անհատական ոճը:

Նախագծի իրականացման առաջին տարիներին առանձին համարներ խստիվ թեմատիկ էին, իսկ վերջին երկու տարիների թողարկումները հեղինակներին արդեն տալիս էին թեմաների ընտրության լայն ազատություն: Ամեն դեպքում գլխավոր մեր պահանջը արհեստավարժությունն էր: Արագ փոփոխվող աշխարհը պահանջում է մեր իրականության վերլուծության նորանոր ձեւերի մշտական փնտրտուք: Մենք փորձում էինք հետեւել ժամանակի այդ հրամայականին:

Եվ հիմա ՌԱՀՀԿ-ն որոշել է ավարտել տվյալ նախագիծը եւ անցնել աշխատանքի նոր ձեւերի, որոնք ի զորու են ապահովել հետազոտական մեր գործունեության պատշաճ շարժընթացը: Հետայսու աշխատելու ենք Կենտրոնի վերլուծական արտադրանքը մատուցել այլ ռիթմով ու ծրագրահենքով՝ օգտագործելով էլեկտրոնային տեղեկատվության միջոցների բազմապիսի առավելությունները:

Հուսով ենք՝ ՌԱՀՀԿ հետազոտությունների նկատմամբ ընթերցողների հետաքրքրությունը միայն կաճի:

Թուրքիայի սիրիական քաղաքականությունը 2011-2017թթ.

ՀԱՅԿ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Թուրքագետ

Թուրք-սիրիական հարաբերությունները 1998-2011թթ.

Դեռեւս 1998թ. Թուրքիան ու Սիրիան պատերազմական իրավիճակի շեմին էին: Հիմնական պատճառն այն էր, որ Սիրիան մեծապես աջակցում էր Թուրքիայում ահաբեկչական հռչակված Քրդստանի աշխատավորական կուսակցությանը (PKK): Ավելին՝ PKK-ի առաջնորդ Աբդուլլահ Օջալանը գտնվում էր Սիրիայում, իսկ Թուրքիան պահանջում էր նրան վտարել այնտեղից: Սակայն այն ժամանակ բանը չհասավ պատերազմի, քանի որ Սիրիան, ի վերջո, տեղի տվեց թուրքական կողմի ճնշումներին ու սպառնալիքներին, ինչն էլ ավարտվեց 1998թ. հոկտեմբերի 20-ին կնքված Ադանայի համաձայնագրով, որով Սիրիան պարտավորվեց չաջակցել PKK-ին, փակել նրա ֆինանսավորման հոսքերը, Օջալանին վտարել երկրից: Ադանայի համաձայնագրից հետո որոշակի ջերմացում սկսվեց երկկողմ հարաբերություններում: Դրան նպաստեց նաեւ այն, որ 2000թ. մահացավ Սիրիայի նախագահ Հաֆեզ Ասադը, որին փոխարինեց նրա որդի Բաշար Ասադը: Բացի դրանից, 2002թ. նոյեմբերի 3-ին Թուրքիայի խորհրդարանական ընտրություններում հաղթեց «Արդարություն եւ զարգացում» կուսակցությունը (ԱԶԿ), որը որդեգրեց արաբական աշխարհի հետ մերձենալու քաղաքականություն:

2000-ականներին մեծ զարգացում ապրեցին թուրք-սիրիական հարաբերությունները. 2007թ. ուժի մեջ մտած ազատ առեւտրի մասին համաձայնագրի շնորհիվ աճեց ապրանքաշրջանառությունը, 2009թ. ստեղծվեց թուրք-սիրիական բարձր մակարդակի ռազմավարական համագործակցության խորհուրդը, առաջընթաց գրանցվեց զբոսաշրջության, ներդրումների եւ այլ ոլորտներում, 2000-2005թթ. իրականացվեց 55 պաշտոնական այց, որոնցից առավել հիշարժան են երկուսը: 2004թ. հունվարի սկզբին Թուրքիա այցելեց Սիրիայի նախագահ Բաշար Ասադը, ինչն աննախադեպ իրադարձություն էր Սիրիայի նախագահի համար, իսկ 2004թ. դեկտեմբերին Սիրիա այցելեց Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Էրդողանը (վերջին անգամ Թուրքիայի վարչապետներից Թուրգութ Օզալն էր այցելել Սիրիա՝ 1987թ.): Այդ այցերի արդյունքներով ընդգծվեց, որ Թուրքիան Սիրիայի համար բաց դարպաս է դեպի Եվրոպա, իսկ Սիրիան Թուրքիայի համար բաց դարպաս՝ դեպի իսլամական աշխարհ: 2003թ. Սիրիան ողջունեց Թուրքիայի խորհրդարանի մերժումը ԱՄՆ-ին՝ կապված Իրաքում ռազմարշավ սկսելու նպատակով երկրում զորք տեղակայելու հետ: 2008թ. Թուրքիան միջնորդություն էր իրականացնում Սիրիայի ու Իսրայելի միջեւ: Բացի դրանից, Թուրքիային ու Սի-

րիային միավորում էին քրդերի դեմ պայքարը եւ Համաարաբական գազատարի կառուցումը: Կարելի է ասել, որ 1998-2011 թվականները եղել են թուրք-սիրիական հարաբերություններում թերեւս միակ դրական ժամանակաշրջանը, քանի որ այդ հարաբերություններն ավելի հաճախ հագեցած էին խնդիրներով (Ալեքսանդրետի սանջակ (Հաթայ), PKK, Եփրատ գետի վրա թուրքական ջրային խոշոր նախագծեր եւ այլն): Սիրիայի հետ հարաբերությունները Թուրքիայի համար Է՛լ ավելի կարեւորվեցին Իսրայելի հետ հարաբերությունների կտրուկ վատթարացումից (2010թ. «Մավի Մարմարայի» միջադեպից) հետո:

Այսպիսով՝ մենք տեսնում ենք, որ 2011թ. «Արաբական գարնան» շրջանում թուրք-սիրիական հարաբերությունները բավական բարձր մակարդակում էին եւ, կարելի է ասել, Սիրիան Մերձավոր Արեւելքում Թուրքիայի համար որոշակի փոխատեղում էր կատարել Իսրայելի հետ: Բացի դրանից, երկու երկրների ղեկավարների միջեւ կար ընտանեկան մտերմություն. Էրդողանն ու Ասադն իրենց կանանց հետ անգամ համատեղ արձակուրդ են անցկացրել (թեեւ դրանից հետո Ասադի կին Ասման ամուսնուն խնդրել է այլեւս չանել նման բան, քանի որ Էրդողանները չունեն կրթություն ու ճաշակ): Հավելենք, որ Սիրիայի ճգնաժամի մեկնարկից ընդամենը 1 ամիս առաջ՝ 2011թ. փետրվարին, երկու երկրների վարչապետները (Էրդողան, Նաջի Օտրի) մասնակցեցին սահմանային Օրոնտաս (Ասի) գետի վրա «Բարեկամության» ամբարտակի կառուցման հիմնարկեքին: Փաստորեն Թուրքիան ու Սիրիան հենց նման պայմաններում թեւակոխեցին «Արաբական գարնան» ժամանակաշրջան:

Սիրիայում ժողովրդական հուզումների մեկնարկը, Թուրքիայի դիրքորոշումը

Թեեւ Սիրիայում հակակառավարական առաջին ելույթները սկսվեցին 2011թ. հունվարի վերջին, սակայն ժողովրդական զանգվածային հուզումները մեկնարկեցին մարտի 15-ին՝ աստիճանաբար վերաճելով քաղաքացիական պատերազմի: Այդ ժամանակ Էրդողանը հայտնվել էր շատ ծանր վիճակում. նախ խալիֆի հավակնություններով Էրդողանը վերջին շրջանում ինքնակամ ստանձնել էր աշխարհի մուսուլմանների իրավունքների պաշտպանի դերը եւ ելնելով նաեւ դրանից՝ շարունակ դատապարտում էր պաղեստինցիների հանդեպ Իսրայելի գործողությունները: Բացի դրանից, Էրդողանը Սիրիայից առաջ, թեկուզեւ որոշակի ուշացումով, բայցեւայնպես դատապարտել էր Եգիպտոսում ու Լիբիայում իշխող վարչակարգերի՝ Հոսնի Մուբարաքի ու Մուամմար Քադաֆիի կողմից սեփական ժողովրդի դեմ ուժ կիրառելը, եւ հետեւաբար նա չէր կարող պարզապես լռություն պահպանել Ասադի պարագայում: Եվ չնայած դրան՝ Էրդողանը սկզբում պահպանեց այդ լռությունը: Ավելին՝ արդեն մարտի 26-ին նա՝ գիտակցելով, որ Ասադը կարող է արժանանալ Մուբարաքի կամ Քադաֆիի ճակատագրին, հեռախոսազրույց ունեցավ Ասադի հետ ու ողջունեց բարեփոխումներ կատարելու՝ նրա որոշումը: Էրդողանը շահագրգռված էր, որ Սիրիայում արագորեն մարեին ժողովրդական հուզումները եւ պահպանվեր ստատուս-քվոն: Թուրքիայի համար տվյալ ժամանակ գերխնդիրը Սիրիայի քրդերի անջատողական շարժումները կանխելը կամ վերահսկելն էր: Էրդողանը տեսել էր, որ Ասադի իշխանության ժամանակ դրանք վերահսկողության տակ են, եւ խիստ շահագրգռված էր, որ վերջինս Սիրիայում մնա իշխանության ղեկին:

Ապրիլի 6-ին Սիրիա գործուղվեց Թուրքիայի արտգործնախարար Ահմեթ Դավութօղլուն, ով Ասադին կոչ արեց վերացնել 1963 թվականից գործող արտակարգ դրության ռեժիմը (դա տեղի ունեցավ ապրիլի 21-ին), քրդերին տալ քաղաքացիություն (ապրիլի 7-ին Ասադը սկսեց քաղաքացիություն տալ Հասեկե նահանգի քրդերին), իսկ բանակը հեռու պահել քաղաքներից: Ապրիլի 28-ին Էրդողանի հատուկ ներկայացուցչի կարգավիճակով Սիրիա մեկնեց Թուրքիայի Ազգային հետախուզական կազմակերպության (MIT) ղեկավար Հաքան Ֆիդանը (այցից հետո Թուրքիան սկսեց Սիրիայից ընդունել փախստականներին): Մայիսի 7-ին Դավութօղլուն եւս մեկ անգամ բարեփոխումներ անցկացնելու կոչ արեց Ասադին, իսկ օգոստոսի 9-ին վերստին այցելեց Դամասկոս եւ 6.5 ժամանոց հանդիպում ունեցավ Ասադի հետ (2015թ. հունվարին Դավութօղլուն, հիշեցնելու համար թուրք-սիրիական հարաբերությունների սերտ լինելը, հայտարարեց, որ 10 տարում 62 անգամ այցելել է Սիրիա)[1]: Փաստորեն Ասադն անսաց Թուրքիայի հորդորներին, կատարեց բարեփոխումներ, սակայն դա չկանխեց Թուրքիայի ու Սիրիայի հարաբերությունների վատթարացումը, որի պատճառներն են.

1) Էրդողանը սկսեց Ասադին մեղադրել իրեն բազմաթիվ խոստումներ (14 կետանոց «ճանապարհային քարտեզ») տալու, սակայն չկատարելու համար: Ասադն էլ Էրդողանին մեղադրում էր անիրատեսական պահանջներ առաջ քաշելու մեջ՝ ընդգծելով, որ 30 տարի նոր Սահմանադրություն չընդունած Թուրքիան Սիրիայից պահանջում է այն ընդունել ընդամենը 3 ամսում: Ապա Էրդողանը սկսեց Ասադին մեղադրել սեփական ժողովրդի դեմ բռնություններ գործադրելու մեջ, իսկ Ասադն իր հերթին Էրդողանին հիշեցրեց Թուրքիայի քրդերի դեմ բռնությունների մասին: Արդյունքում գործը հասավ երկու երկրների միջեւ դիվանագիտական հարաբերությունների խզմանը (2011թ. սեպտեմբերին CNN-ի հետ զրույցում Էրդողանը հայտարարեց, որ ավելի քան համբերատար է գտնվել Ասադի հանդեպ, սակայն իր համբերության բաժակն արդեն լցվել է): Այդ ժամանակ եգիպտական «Ալ-Ահրամ» թերթը գրեց, որ Ասադից Էրդողանի հիասթափվելու պատճառը բարեփոխումների հետ չի կապված. «Հունիսին Էրդողանն Սիրիայում հակակառավարական ելույթների դադարեցման հարցում աջակցություն է առաջարկել Ասադին, եթե նա կառավարությունում 3-4 նախարարական պորտֆել հատկացնի Սիրիայում արգելված «Մուսուլման եղբայրներ» (ՄԵ) կազմակերպությանը: Սակայն Ասադը կտրուկ մերժել է Էրդողանի այդ առաջարկը՝ նշելով, որ քաղաքական կուսակցության տեսքով իսլամիստների վերադարձը բացառվում է, որ ՄԵ-ի կրոնական բնույթը չի համապատասխանում Սիրիայի աշխարհիկ բնույթին, որ ՄԵ-ն Սիրիայի համար նույնն է, ինչ Թուրքիայի համար PKK-ը»[2]:

2) Սիրիայի հանդեպ Թուրքիայի դիրքորոշման փոփոխմանը նպաստեց նաեւ 2011թ. հուլիսի 25-ին «Իրան-Իրաք-Սիրիա-Լիբանան» (շիական) գազատարի կառուցման մասին պայմանագրի կնքումը: Թուրքիայում խստապես ցանկանում էին, որ իրանական գազը ԵՄ-ին մատակարարվի հենց իր տարածքով եւ, ելնելով նաեւ դրանից, նպատակահարմար համարվեց բորբոքել լարված իրավիճակը Սիրիայում (նաեւ Իրաքում), ինչը (պատերազմը, իշխանափոխությունը) Իրանին կդներ փակուղային իրավիճակում, անհնարին կդարձներ «շիական» գազատարի կառուցումը, Իրանին կստիպեր ընտրել թուրքական երթուղին: Դա տարանցիկ մեծ եկամուտներ կապահովեր Թուրքիային, Իրանին տարանցիկ կախվածության մեջ կդներ

Թուրքիայից, կմեծացներ Թուրքիայի աշխարհաքաղաքական դերը, ներդրում կունենար ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության վերաբերյալ բանակցություններում: Ի դեպ, 2009թ. Ասադը մերժել էր «Կատար-Սիրիա-Թուրքիա-Եվրոպա» գազատարի նախագիծը, ինչը որոշ փորձագետների կարծիքով՝ դարձել է Սիրիական վեճի բուն պատճառը:

3) Սակայն Թուրքիայի դիրքորոշման փոփոխման հիմնական պատճառն այն էր, որ 2011թ. օգոստոսի 18-ին ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման առաջին անգամ բացեիբաց հայտարարեց, որ Ասադը պետք է հեռանա: ՆԱՏՕ-ի գծով ԱՄՆ դաշնակից Թուրքիան որոշեց, որ Ասադի օրերը հաշվված են, եւ արդեն պետք է աջակցել սիրիական ընդդիմությանը (սեպտեմբերին CNN-ի հետ զրույցում Էրդողանը չբացառեց, որ 1 տարի անց Ասադը չի լինի իշխանության ղեկին[3]): Սակայն Թուրքիայում հաշվի չառան այն, որ ԱՄՆ-ը չունի Ասադին տապալելու հստակ ռազմավարություն, թերագնահատեցին հենց Ասադին, ինչպես նաեւ նրան իշխանության պահելու հարցում Իրանի ու ՌԴ-ի վճռականությունը: Օբամայի հայտարարությունից ընդամենը 5 օր անց Ստամբուլում ձեւավորվեց սիրիական ընդդիմության կոալիցիոն խումբը՝ Սիրիական ազգային խորհուրդը: Եվ Թուրքիան սկսեց մեծապես աջակցել սիրիական ընդդիմությանը՝ գտնելով, որ. ա) եթե շարունակի աջակցել Ասադին, ապա շուտով կստանա թշնամաբար տրամադրված ռեժիմ՝ ի դեմս սիրիական ընդդիմության, բ) եթե սիրիական ընդդիմությունն իր աջակցությամբ գա իշխանության, ապա պարտական կլինի իրեն, եւ Սիրիան կվերածվի Թուրքիայից կախյալ պետության, գ) սիրիական ընդդիմության միջոցով կկարողանա հետագայում վերահսկել Սիրիայի քրդերի հնարավոր անջատողական շարժումները[4]:

Բաց դռների քաղաքականություն

Սիրիայում բախումներ սկսվելուց հետո Թուրքիան փախստականների հանդեպ որդեգրեց բաց դռների քաղաքականություն՝ նրանց համար մոտակա նահանգներում կառուցելով վրանային ու տնակային ճամբարներ: Թուրքիայի տվյալ դիրքորոշման հիմքում ընկած էին մի շարք գործոններ, որոնք աստիճանաբար էլ ավելի շատացան:

1) Արդեն նշվեց, որ խալիֆի հավակնություններով Էրդողանն իրեն հռչակել էր մուսուլմանների իրավունքների պաշտպան, եւ սիրիացի փախստականներին ընդունելը հրաշալի առիթ էր դա վերահաստատելու, մուսուլմանական աշխարհում իր իմիջը բարձրացնելու համար (չնայած դրան՝ հետագայում Էրդողանին մեղադրեցին «Ինջիրլիքի» ավիաբազան մուսուլմաններին հարվածելու նպատակով ԱՄՆ-ին տրամադրելու համար):

2) Սիրիացի փախստականներին ընդունելը նպաստում էր Թուրքիայի իշխանությունների առաջ քաշած այն թեզի հաստատմանը, որ Սիրիան Թուրքիայի համար Լիբիա չէ, որ ի տարբերություն (2011թ.) Լիբիայի դեպքերի, Սիրիայի դեպքերն անմիջականորեն ազդում են Թուրքիայի վրա՝ չէ որ վերջինս Սիրիայի հետ ունի իր ամենաերկար ցամաքային սահմանը՝ 911 կմ: Այսինքն՝ Թուրքիան դրանով հիմք էր ստեղծում Սիրիայի հարցում իր «պահանջատիրությունը», Սիրիայի դեպքերին իր ապագա միջամտությունը «օրինականացնելու» համար:

3) Սիրիացի փախստականներին ընդունելը պետք է նպաստեր Թուրքիայի կողմից Սիրիայի հյուսիսում «անվտանգության եւ թռիչքազերծ գոտու» ստեղծմանը, ուր կկարողանային պատսպարվել փախստականները: Եվ որքան երկրում շատանում էր փախստականների թիվը, այնքան բարձրանում էր Թուրքիայի ձայնը: Սկզբում հայտարարվում

էր, որ եթե սիրիացի փախստականների թվաքանակը գերազանցի 10.000-ը (հետո 50.000-ը), ապա Թուրքիան «միայնակ չի կարողանա կրել այդ ծանր բեռը» եւ ստիպված կլինի դիմել միջազգային կառույցների օգնությանը: 2012թ. օգոստոսին Դավութօղլուն որպես «կարմիր գիծ» սահմանեց 100.000 փախստականի առկայությունը[5], սակայն հոկտեմբերին Թուրքիայում սիրիացի փախստականների թիվը հասավ 100.363-ի՝ հատելով հոգեբանական շեմը[6]: Այդ ժամանակ Թուրքիայում դեռ չգիտեին, որ փախստականների թիվը հասնելու է ավելի քան 3.5 միլիոնի, ինչն ապացուցում է «ծանր բեռը միայնակ կրել չկարողանալու» Թուրքիայի դիրքորոշման սնանկությունը: Իրականում «անվտանգության գոտին» պետք է սեպի դեր խաղար Թուրքիայի, Սիրիայի ու Իրաքի քրդերի միջեւ (դրա համար էլ տվյալ գոտու ստեղծման վայր ընտրվել էր Քամըշլըի շրջանը) եւ պետք է ծառայեր Սիրիայի հյուսիսում թուրքական ռազմական ներկայության հաստատմանը:

4) Սիրիացի փախստականներին ընդունելը Թուրքիայի իշխանություններին հնարավորություն տվեց հիմնավորել Սիրիայի հետ սահմանը բաց պահելը, որով ակտիվորեն իրականացվում էր զինյալների, զենք-զինամթերքի երկկողմ ելումուտ (զինյալները Թուրքիայից մեկնում էին Սիրիա՝ Ասադի զորքերի դեմ կռվելու համար, իսկ Սիրիայից Թուրքիա բերվում էին վիրավոր զինյալները՝ բուժում ստանալու, հանգստանալու եւ այլնի համար): 2013թ. հունվարին Ասադը հայտարարեց, որ եթե չլինեն Թուրքիայի սահմանով զինյալների, զենք-զինամթերքի մատակարարումները, ապա սիրիական հակամարտությունը կավարտվի երկու շաբաթում[7]:

5) Սիրիացի փախստականների մուտքը Թուրքիային հնարավորություն տվեց հավաքագրման աշխատանքներ կատարել նրանց շրջանում: Այդ երկրի հատուկ ծառայություններն ակտիվ աշխատանքներ ծավալեցին երկրում հանգրվանած սիրիացի փախստականների շրջանում՝ մարզելով, զինելով եւ ուղարկելով Սիրիա՝ Ասադի զորքերի դեմ կռվելու համար:

6) Սիրիացի փախստականներին ընդունելը եւ այդպիսով թուրք-սիրիական սահմանը բաց պահելը Թուրքիային հնարավորություն տվեց զբաղվել նաեւ հարեւան երկրի թալանով: 2013թ. հունվարին Սիրիայի ԱԳՆ-ը հայտարարեց, որ Հալեպի նահանգում թալանվել է ավելի քան 1000 գործարան, որոնց սարքավորումներն ուղարկվել են Թուրքիա, ինչը նա որակեց ծովահեներություն եւ դիմեց ՄԱԿ-ին: Թուրքական մամուլի պնդմամբ՝ Սիրիայի տնտեսական մայրաքաղաք Հալեպի գործարանների թալանն իրականացվել է Էրդողանի հրամանով, ով դրանով ցանկացել է ծնկի բերել Սիրիայի տնտեսությունը եւ հատկապես ձերբազատվել Թուրքիայի համար արդյունաբերական մրցակցային մի շարք ոլորտներից՝ մանվածք, տեքստիլ, սնունդ, բժշկական պարագաներ, ցեմենտ: Տնտեսագետ Հայան Սուլեյմանի խոսքով՝ դա ակնհայտ հափշտակության երկրորդ դեպքն էր Սիրիայի պատմության մեջ. առաջին դեպքը գրանցվել էր 1865թ., երբ Օսմանյան կայսրությունը տարբեր մասնագիտություններով խմբերին, արհեստավորներին Սիրիայից տեղափոխեց Ստամբուլ: Հետագա տարիներին էլ Թուրքիան Սիրիայում գործող ԻՊ ահաբեկչական խմբավորումից գնում էր էժան նավթ, բամբակ, անտիկ իրեր եւ այլն՝ այդպիսով ֆինանսավորելով ահաբեկչությանը[8]:

7) Սիրիացի փախստականներին ընդունելով եւ հետագայում նրանց ուղղելով դեպի ԵՄ՝ Թուրքիան հասավ միգրացիոն հայտնի գործարքի կնքմանը, որով ԵՄ-ը պարտավորվեց Թուրքիային տրամադրել 3 մլրդ € (ավելի ուշ եւս 3 մլրդ €), արագացնել Թուրքիայի քաղաքացիների համար վիզային պայմանա-

կարգի չեղարկման գործը, ակտիվացնել ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության գործընթացը: Թուրքիայի իշխանությունները շարունակ հայտարարում են, թե սիրիացի ու իրաքցի փախստականների վրա «ծախսել են» 10-20 մլրդ € եւ միջազգային հանրությունից ստացել են ընդամենը 0.5 մլրդ €, սակայն իրականում փախստականների միայն 10%-ն է բնակվում ճամբարներում. մեծ թվով փախստականներ ապրում են նկուղներում, կամուրջների տակ եւ անմարդկային այլ պայմաններում:

8) Թուրքիայի իշխանությունները նպատակադրվել են սիրիացի փախստականների միջոցով փոխել երկրի քրդաբնակ նահանգների ժողովրդագրական պատկերը: Նրանց մեծապես վախեցնում է, որ մի շարք նահանգներ գերազանցապես բնակեցված են քրդերով, եւ պատահական չէ, որ Էրդողանը քանիցս հայտարարեց փախստականներին Թուրքիայի քաղաքացիություն տալու հնարավորության մասին: Տվյալ քաղաքականության շրջանակներում տեղավորվում է նաեւ Դոնբասից բերված մեսխեթցի թուրքերի վերաբնակեցումը Թուրքիայի քրդաբնակ նահանգներում:

9) Սիրիացի փախստականներին ընդունելով ու քաղաքացիություն տալով՝ Թուրքիայի իշխանությունները ցանկանում են մեծացնել քրդաբնակ նահանգներում իրենց ընտրազանգվածը: Թուրքական կողմի հաշվարկներով՝ փախստականները պետք է պարտական լինեն Էրդողանին, ով երկրի դռները չի փակել պատերազմի արհավիրքներից փախչողների առջեւ, որոնց զգալի մասը չի ունեցել փախչելու այլ տարբերակ (հատկապես սահմանային շրջանների բնակիչները): Ակնկալվում է, որ փախստականները ընտրություններում կքվեարկեն ԱԶԿ-ի օգտին, ով 2015թ. խորհրդարանական վերջին ընտրություններում զգալի բարդությունների հանդիպեց քրդաբնակ նահանգներում:

10) Թուրքիայի իշխանությունները՝ ի դեմս սիրիացի փախստականների, ստացան էժան աշխատուժ: 2016թ. աշնանը BBC-ի թիմը բացահայտեց, որ բազմաթիվ անչափահաս սիրիացիներ անբարենպաստ պայմաններում աշխատում են Թուրքիայի տեքստիլ արդյունաբերությունում: Նրանք հիմնականում գրանցված չեն, քանի որ չունեն աշխատելու թույլտվություն, աշխատում են օրական 12 ժամ, 1 ժամ աշխատանքի համար ստանում են շուրջ 1.25 $: Այդ աշխատավարձը Թուրքիայում սահմանված նվազագույն ժամավճարից անհամեմատ ցածր է: Բացի դրանից, պետք է նշել Թուրքիայում սիրիացի փախստականների ներքին օրգանների լայնածավալ վաճառքի մասին: 2014թ. ապրիլին լիբանանյան մամուլը գրեց Թուրքիայի պետական հիվանդանոցների կողմից սիրիացի փախստականների (երեխաների) ներքին օրգանների հափշտակման մոտ 16.000 դեպքի մասին: Ամենամեծ պահանջարկը վայելել են երիկամները (Թուրքիայում 1 երիկամն արժե 10.000 $): Թուրքիայի Անթաքիա, Իսքենդերուն քաղաքների հիվանդանոցներ բերված սիրիացի վիրավորներին ներարկում են քնաբեր, սպանում են, հանում առողջ օրգանները եւ վաճառում «սեւ շուկայում»[9]:

Սահմանային սադրանքների քաղաքականություն

Տեսնելով, որ սիրիական ընդդիմությանը չի հաջողվում հասնել Ասադի տապալմանը՝ Թուրքիան որոշեց արագացնել գործընթացը: Այդ ձգտումն էլ ավելի ուժգնացավ այն բանից հետո, ինչ Ասադը 2012թ. իր զորքերը հետ քաշեց քրդաբնակ նահանգներից՝ Հալեպի ճակատամարտին մասնակցելու համար, ինչից հետո դրանցում սկսեցին հայտնվել տեղի քրդերի (PYD) դրոշները, որոնք տեսանելի էին Թուրքիայի տարածքից եւ սարսափ էին առաջացնում: Հասկա-

նալի է, որ Թուրքիան ռազմական առումով ի զորու էր ներխուժել Սիրիա եւ հասնել Ասադի տապալմանը, սակայն Թուրքիայում գիտակցում էին, որ Ասադի աջակիցներ ՌԴ-ն ու Իրանը խստիվ դեմ են թուրքական ռազմական միջամտությանը: Թուրքիայում հարցի ելքը գտան ՆԱՏՕ-ի կանոնադրության 5-րդ (հավաքական պաշտպանության մասին) հոդվածը խաղարկելու մեջ՝ ՆԱՏՕ-ի միջոցով Ասադի տապալմանը հասնելու համար: Թուրքիան, այդպիսով, անցում կատարեց սահմանային սադրանքների քաղաքականությանը:

2012թ. ապրիլի 9-ին թուրքական մամուլը գրեց, որ սիրիական բանակը գնդակոծել է Թուրքիայի Քիլիս նահանգի սահմանը հատած փախստականներին (զոհվեց 2, վիրավորվեց 4 մարդ): Միջադեպից հետո չինական այցի ժամանակ Էրդողանին ուղեկցող Ա.Դավութօղլուն ստիպված եղավ վերադառնալ Թուրքիա, իսկ Էրդողանը Պեկինում հայտարարեց, որ սիրիական բանակը «կոպտորեն խախտել» է Թուրքիայի սահմանը՝ սպառնալով ձեռնարկել պատասխան միջոցներ: Չնայած դրան՝ Թուրքիայի տարածքի գնդակոծման մասին հաղորդվեց նաեւ ապրիլի 10-ին: Սիրիայի արտգործնախարար Վալիդ Մուալեմը հայտարարեց, որ Թուրքիայի սահմանի գնդակոծումն այդ երկրի կառավարության կազմակերպած սադրանքն է: Չինաստանից վերադարձած Էրդողանը չբացառեց, որ Անկարան կարող է դիմել ՆԱՏՕ-ի օգնությանը, Դավութօղլուն էլ նշեց, որ սահմանի խախտման մասին իրազեկել են ՄԱԿ-ին եւ ՆԱՏՕ-ին: Սակայն Կանադայի արտգործնախարար Ջոն Բեյրդը հայտարարեց, որ ՆԱՏՕ-ն Թուրքիային օգնության կգա միայն այն դեպքում, եթե սիրիացի զինվորները հատեն նրա սահմանը: Պենտագոնի ղեկավար Լեոն Փանեթան էլ հայտարարեց, որ 5-րդ հոդվածի կիրառման համար անհրաժեշտ է, որ Սիրիան ուղիղ սպառնալիք ներկայացնի Թուրքիային՝ ընդգծելով, որ 5-րդ հոդվածը ցայժմ կիրառվել է միայն մեկ դեպքում՝ 2001թ. սեպտեմբերի 11-ին ԱՄՆ-ում ահաբեկչական հարձակումից հետո:

Սահմանային 2-րդ խոշոր սադրանքը գրանցվեց 2012թ. հունիսի 22-ին, երբ Միջերկրական ծովի արեւելքում խոցվեց Թուրքիայի ՌՕՈՒ F-4 հետախուզական ինքնաթիռը: Թուրքական կողմի պնդմամբ՝ «F-4-ը եղել է անզեն, խոցվել է միջազգային օդային տիրույթում եւ միայն ընկնելիս է հայտնվել Սիրիայի տարածքային ջրերում»: Միջադեպից հետո Թուրքիան վկայակոչեց ՆԱՏՕ-ի կանոնադրության 4-րդ հոդվածը, ըստ որի՝ ՆԱՏՕ-ի երկրները պետք է խորհրդակցեն այն դեպքերում, երբ իրենց կարծիքով վտանգված են սեփական տարածքային ամբողջականությունը, քաղաքական անկախությունը կամ անվտանգությունը: Եվ, թեեւ ՆԱՏՕ-ի նիստը գումարվեց, սակայն Թուրքիան որեւէ շոշափելի արդյունքի չհասավ. գործի չդրվեց 5-րդ հոդվածը:

2012թ. հոկտեմբերի սկզբին նոր խոշոր միջադեպ գրանցվեց թուրք-սիրիական սահմանին: Սիրիայից արձակված հրետանային արկերն ընկան Թուրքիայի Շանլըուրֆա նահանգի Աքչաքալե շրջանում (զոհվեց 5, վիրավորվեց 10 մարդ): Թուրքիան պատասխանեց T-155 Fırtına հաուբիցի հարվածներով (զոհվեց 14, վիրավորվեց 25 սիրիացի զինծառայող): Թուրքիան՝ հենվելով ՆԱՏՕ-ի կանոնադրության 4-րդ հոդվածի վրա, գումարել տվեց ՆԱՏՕ-ի նիստ, որում բավարարվեցին Սիրիայից պահանջելով վերջ դնել «Թուրքիայի հանդեպ ագրեսիվ գործողություններին»: Փաստորեն Թուրքիային վերստին հիասթափություն էր սպասվում: Թուրքական Yurt թերթի գլխավոր խմբագիր Մերդան Յանարդաղն իր «Արյունալի սադրանք» հոդվածում գրեց, որ հենց Թուրքիան է կանգնած Աքչաքալեի հրետակոծման

հետեւում, որ Թուրքիան է հրետանային այդ սարքն ու դրա արկերն ուղարկել Սիրիական ազատ բանակին, որն էլ հրետակոծել է Թուրքիայի տարածքը[10]: 2012թ. հոկտեմբերի երկրորդ կեսին ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը հեռախոսազրույց ունեցավ Էրդողանի հետ եւ սպառնաց, որ որ եթե գեթ մեկ թուրք զինվոր հատի Սիրիայի սահմանը, ապա ՌԴ-ը շատ կոշտ կարձագանքի դրան[11]: Այդպիսով՝ Թուրքիայի սահմանային սադրանքների քաղաքականությունը տապալվեց. ՆԱՏՕ-ն տուրք չտվեց Թուրքիայի սադրանքներին, իսկ ՌԴ-ի կոշտ արձագանքից հետո Թուրքիայի սահմանային սադրանքները հիմնականում դադարեցվեցին[12]:

Հիշատակման արժանի է 2013թ. ամռանը Դամասկոսի արվարձան Արեւելյան Գուտայում քիմիական զենքի կիրառմամբ կատարված հարձակումը: Դրանից առաջ Բ.Օբաման Ասադի համար «կարմիր գիծ» էր սահմանել քիմիական զենքի կիրառումը: Ակնհայտ է, որ դրանից հետո Ասադի հակառակորդները պետք է ցանկանային օգտվել դրանից, եւ Սիրիայում անպայմանորեն պետք է կիրառվեր քիմիական զենք, որի պատասխանատվությունը պետք է դրվեր Ասադի զորքերի վրա: Ապա սկսվելու էր ԱՄՆ-ի ռազմական միջամտությունը Սիրիայում, որն էլ հանգեցնելու էր Ասադի տապալմանը: Եվ ահա Թուրքիան 2013թ. ամռանը սկսեց ռազմական տեխնիկա կուտակել Սիրիայի հետ սահմանին՝ փափագելով ԱՄՆ-ի գլխավորած միջազգային ուժերի կազմում շուտափույթ ներխուժել Սիրիա: Սակայն երբ Ասադն ընդունեց ՌԴ-ի առաջարկը, հրաժարվեց քիմիական զենքի պաշարներից, տեղի չունեցավ արտաքին ռազմական միջամտություն: Ի դեպ, ամերիկացի լրագրող Սեյմուր Հերշը 2014թ. ապրիլին չբացառեց, որ Սիրիայում քիմիական զենքի հարձակման հետեւում կարող է կանգնած լինել Էրդողանը[13]: Նշենք, որ Թուրքիան Ասադի վարչակարգի տապալման ամենամեծ ջատագովներից մեկն էր (է) եւ թուրքական մամուլի հաղորդմամբ՝ Սիրիայում կիրառված քիմիական զենքն արտադրվել է Թուրքիայում, որտեղից էլ ուղարկվել է Սիրիա[14]: Ընդգծենք, որ 2013թ. ռազմական միջամտությունից հրաժարվելը դարձավ ԱՄՆ-ից Թուրքիայի ամենամեծ հիասթափությունը. արդեն նշել ենք, որ Թուրքիան որոշակիորեն ԱՄՆ-ի պատճառով է թշնամացել Ասադի հետ եւ սկսել վնասներ կրել դրանից (խարխլվել էր Սիրիայի տարածքով Թուրքիայի ցամաքային առեւտուրը Մերձավոր Արեւելքի երկրների հետ ու մեծացել էր Սուեզի ջրանցքի կարեւորությունը Թուրքիայի համար եւ, հետեւաբար, Եգիպտոսից Թուրքիայի կախվածությունը):

Սիրիայի քրդեր, ԻՊ

2014թ. հունվարին Սիրիայի քրդերը հայտարարեցին ինքնավար 3 կանտոնի (շրջան) ստեղծման մասին՝ շեշտադրելով, որ դրանք Սիրիայի տարածքի մի մասն են: Խոսքը Թուրքիային սահմանակից Ջիզրե (արեւելք), Քոբանի (կենտրոն) եւ Աֆրին (արեւմուտք) կանտոնների մասին է: Եվ պատահական չէր, որ Թուրքիան դրանից հետո սկսեց ուժգնորեն աջակցել ԻՊ-ին, որը Սիրիայում զբաղվում էր նաեւ տեղի քրդերի հարցի լուծմամբ: Թուրքիայի այդ պահվածքն ակնհայտ էր 2014թ. Քոբանիի պաշտպանության ժամանակ, երբ նա թույլ չտվեց, որ Թուրքիայի քրդերն օգնության հասնեն Քոբանիի պաշտպաններին եւ միայն ԱՄՆ ճնշման ներքո թույլատրեց իր տարածքով Քոբանիին Իրաքի քրդերի (Փեշմերգա) օգնության հասնելը, սակայն, դրա հետ մեկտեղ նվազեցրեց նրանց քանակը եւ ձգձգեց տվյալ գործընթացը: Եվ, այնուամենայնիվ, ԻՊ-ին չհաջողվեց գրավել Քոբանին: 2015թ. Սիրիայի քրդերը մեծ հաջողությունների

հասան ԻՊ-ի դեմ պայքարում. ամռանը գրավեցին Թել Աբյադը, որը սեպի պես խրված էր Ջիզրե եւ Քոբանի շրջանների միջեւ, միավորեցին դրանք, կտրեցին տվյալ հատվածում Թուրքիայի ու ԻՊ-ի միջեւ կապը, իրենց վերահսկողության տակ առան Իրաքի սահմանից մինչեւ Եփրատ գետն ընկած տարածքները, սպառնալիք ստեղծեցին ԻՊ-ից ազատագրելու համար Ջերաբլուս-Ազեզ 98 կմ-անոց հատվածը, որը կհանգեցներ հետեւյալին. ա) ամբողջովին կմիավորվեին քրդական 3 կանտոնները, թուրք-սիրիական սահմանի մոտ 700 կիլոմետրը կհայտնվեր քրդերի վերահսկողության տակ (նման ցամաքային սահման Թուրքիայի հետ չունի որեւէ հարեւան, այժմ այդ ցուցանիշը կազմում է 500-550 կմ, ինչը համարժեք է թուրք-իրանական սահմանին), բ) ամբողջովին կկտրվեր Թուրքիայի ու ԻՊ-ի միջեւ ցամաքային կապը, Թուրքիան կզրկվեր ցամաքով նրան օժանդակելուց, նրանից նավթ եւ այլն գնելուց, գ) վտանգ կստեղծվեր, որ Սիրիայի քրդերը 3 շրջանների միավորումից հետո կշարժվեին դեպի Միջերկրական ծով, դ) թուրք-սիրիական սահմանի մեծ մասում կհաստատվեր կայունություն, եւ Թուրքիան, Սիրիայի հետ սահմանին դեմ առնելով քրդական պատնեշին (քրդական միջանցք), կզրկվեր Սիրիայի դեպքերից դժգոհելու, իրեն սպառնացող վտանգների մասին ահազանգելու, ԻՊ ահաբեկչության դեմ պայքարի պատրվակով Սիրիայի հյուսիսում (Ազեզ-Ջերաբլուս գոտի) ռազմական ներխուժում ձեռնարկելու հնարավորությունից, ե) Թուրքիան կզրկվեր հետպատերազմյան Սիրիայի հստակեցման հարցում ձայնի իրավունքից, զ) կփոխվեր տարածաշրջանի ժողովրդագրական պատկերը (Թուրքիան Սիրիայի քրդերին մեղադրում է արաբներին ու թուրքմեններին հալածելու մեջ):

Դրա համար էլ պատահական չէր, որ Թել Աբյադի անկումից եւ դրան հաջորդած (ըստ ամենայնի՝ Թուրքիայի տարածքից) Քոբանիի վրա ԻՊ-ի նոր հարձակման ձախողումից օրեր անց Թուրքիայում գումարվում է Ազգային անվտանգության խորհրդի նիստ, որում որոշվում է Սիրիայի քրդերի համար «կարմիր գիծ» սահմանել Եփրատի արեւմտյան ափը: Դա պատճառաբանվում է նրանով, որ Ջերաբլուսի վրա Սիրիայի քրդերի հարձակման դեպքում կմեծանա դեպի Թուրքիա փախստականների ալիքը: Հետաքրքիր է, թե ինչու ավելի վաղ Թուրքիան նույնպիսի զգուշացում չէր արել (եւ ամենակարեւորը՝ չէր հարվածել) Քոբանիի վրա հարձակվող ԻՊ-ին, ինչի հետեւանքով Քոբանիից Թուրքիա գաղթեց ավելի քան 130.000 մարդ: Եվ, ընդհանրապես, Թուրքիան ԻՊ-ի հարցում կարող էր վարվել Իրանի նման, ով ԻՊ-ին զգուշացրել էր իր սահմանին չմոտենալ 40 կմ-ից ավելի:

Եվ երբ Թուրքիան տեսավ, որ ԻՊ-ը սկսել է պարտություններ կրել եւ այլեւս ունակ չէ զբաղվել «Քրդական հարցի» լուծմամբ, սկսեց ավելի մերձենալ Սիրիայի քրդերին աջակցող ԱՄՆ-ի հետ: Բանն այն է, որ երբ ԱՄՆ-ը դրանից առաջ Թուրքիային կոչ էր անում ակտիվորեն ներգրավվել ԻՊ-ի դեմ պայքարում, Թուրքիան չընդառաջեց նրան: Արդյունքում, ԱՄՆ-ը սկսեց ավելի շատ հենվել Սիրիայի քրդերի վրա: Գիտակցելով սխալը՝ Թուրքիայում փորձեցին շտկել դա, եւ Թել Աբյադի գրավումից մոտ 1 ամիս անց՝ 2015թ. հուլիսի վերջին, ԱՄՆ-ին թույլատրվեց ԻՊ-ի դեմ պայքարում օգտվել «Ինջիրլիքի» ավիաբազայից, ինչին Թուրքիան ընդդիմանում էր երկար ժամանակ՝ առաջ քաշելով Սիրիայի քրդերի, Բ.Ասադի, անվտանգության գոտու վերաբերյալ մի շարք պահանջներ: Արդեն օգոստոսի վերջին թուրքական օդուժը ԱՄՆ գլխավորած դաշինքի կազմում առաջին անգամ հարվածեց Սիրիայում ԻՊ-ի օբյեկտներին: Իսկ նոյեմբերի 15-ին՝ Անթալիայում G20-ի

գագաթնաժողովի մեկնարկից անմիջապես առաջ, Թուրքիան հրաժարվեց զենիթահրթիռային համալիրներ գնել ամերիկյան պատժամիջոցների ներքո գտնվող չինական CPMIEC ընկերությունից, որը դեռեւս 2013թ. աշնանը հաղթել էր Թուրքիայի անցկացրած մրցույթում՝ հարուցելով ԱՄՆ-ի մեծ դժգոհությունը: Թուրքիայի այս 3 խոշոր զիջումներից հետո ԱՄՆ-ը դեմ չէր, որ Թուրքիան ցամաքային ռազմական գործողություն սկսի Սիրիայի հյուսիսում՝ ընդդեմ ԻՊ-ի: 2016թ. օգոստոսի 23-ին՝ «Եփրատի վահան» թուրքական ռազմական գործողության մեկնարկի նախօրեին, թուրք հոդվածագիր Աբդուլքադիր Սելվին գրեց, որ, եթե չլիներ 2015թ. նոյեմբերի 24-ին թուրքական օդուժի կողմից ռուսական SU-24M ռմբակոծչի խոցման միջադեպը, ապա Թուրքիան, սիրիական ընդդիմությունն ու ԱՄՆ-ը պետք է այդ օրը համատեղ սկսեին Ջերաբլուսն ԻՊ-ից մաքրելու գործողությունը. թուրքական բանակն ու սիրիացի ընդդիմադիրները պետք է Սիրիա մտնեին ցամաքից, իսկ ԱՄՆ-ը ցուցաբերելու էր աջակցություն օդից: Սակայն SU-24M-ի միջադեպը խառնեց այդ պլանները[15]:

SU-24M-ի միջադեպը, «Եփրատի վահան» ռազմական գործողությունը

SU-24M-ի միջադեպից հետո Սիրիայում ռուսական ռմբակոծիչներին սկսեցին ուղեկցել կործանիչները, եւ բացի դրանից, ՌԴ-ը Սիրիայում տեղակայեց S-400 նորագույն ՁՀՀ: Դրանից հետո Թուրքիան դադարեցրեց Սիրիայի օդային տիրույթում իր ավիացիայի թռիչքները՝ վախենալով ՌԴ-ի վրեժխնդրությունից: Էրդողանը հայտարարեց, որ եթե ՌԴ-ը Սիրիայի օդային տիրույթում կործանի Թուրքիայի մարտական ինքնաթիռ, ապա դա կորակի ագրեսիա, եւ ստիպված կլինի պատասխան միջոցներ ձեռնարկել: Պատահական չէ, որ թուրքական ավիացիան Սիրիա վերադարձավ միջադեպից միայն 9 ամիս անց՝ «Եփրատի վահան» ռազմական գործողության ժամանակ[16]:

Թեեւ «Սու-24»-ի միջադեպից հետո ՌԴ-ը տնտեսական, վիզային մի շարք սահմանափակումներ սահմանեց Թուրքիայի հանդեպ, որոնք զգալի վնաս հասցրին նրա տնտեսությանը, քաղաքացիներին, այնուամենայնիվ, դրանք չխաղացին վճռորոշ գործոնի դեր, որը Թուրքիային կստիպեր գնալու ՌԴ-ի հետ հարաբերությունների կարգավորմանը: 2016թ. ՌԴ-ի հետ հարաբերությունների կարգավորման հարցում Թուրքիայի թիվ մեկ դրդապատճառը եղել են Սիրիայի քրդերի ռազմական հաջողությունները: 2016թ. մայիսի 31-ին Սիրիայի քրդերը գետանցեցին Եփրատը եւ սկսեցին ԻՊ-ից ազատագրել Ազեզ-Ջերաբլուս գոտին՝ այդպիսով հատելով Թուրքիայի սահմանած «կարմիր գիծը»: Ընդ որում՝ Սիրիայի քրդերն այդ անգամ Եփրատը գետանցեցին Թուրքիայի սահմանից բավական հարավ, ուր թուրքական հրետանին չէր կարող հասնել նրանց (2015թ. Թուրքիայի սահմանի մոտից Եփրատը գետանցելու փորձերի ժամանակ թուրքական օդուժն ու հրետանին հարվածել եւ խորտակել էին Սիրիայի քրդերի նավակները): Արդեն 2016թ. հունիսի 23-ին Սիրիայի քրդերն ԻՊ-ից ազատագրեցին Մանբիջ քաղաքը, եւ Թուրքիայի համար առավել իրատեսական դարձան Ազեզ-Ջերաբլուս գոտուն առնչվող վերոնշյալ բոլոր վտանգները: Թուրքիան հայտարարեց, որ ԱՄՆ-ը խոստացել էր, որ Սիրիայի քրդերը չեն հայտնվի Եփրատի արեւմտյան ափին, նրա բողոքներից հետո ԱՄՆ-ը խոստացավ, որ Սիրիայի քրդերը կվերադառնան Եփրատի արեւելյան ափ, եւ թեեւ դա տեղի չունեցավ, Սիրիայի քրդերը շատ չզարգացրին իրենց հաղթարշավը Եփրատի արեւմտյան ափին: Արդեն հունիսի 27-ին՝ Մանբիջի ազատագրումից

ընդամենը 4 օր անց), Կրեմլը հայտնեց, որ Պուտինն Էրդողանից ստացել է ներողություն բառը պարունակող նամակ, որում թուրք առաջնորդը ՌԴ-ն անվանել է Թուրքիայի բարեկամ ու ռազմավարական գործընկեր: Դրանով տրվեց ՌԴ-ի ու Թուրքիայի հարաբերությունների կարգավորման մեկնարկը, եւ օգոստոսի 24-ին Սիրիայի հյուսիսում սկսվեց «Եփրատի վահան» գործողությունը (անգամ դրա անվանումն է վկայում, որ իրականում այն ուղղված է ոչ թե ԻՊ-ի, այլ՝ Սիրիայի քրդերի դեմ, Եփրատը նրանց դեմ որպես վահան ծառայեցնելուն): Ի դեպ, թուրքական մամուլը գրեց, որ օսմանների թոռներն ուղիղ 500 տարի անց վերստին Ձերաբլուսում են. 1516թ. օգոստոսի 24-ին օսմանյան սուլթան Սելիմ Ահեղի բանակը Մերջիդաբըքի ճակատամարտում (Հալեպից 44 կմ հյուսիս) պարտության էր մատնել մամլուքների բանակին, ինչից հետո գրավել էր Սիրիան, Պաղեստինը, Լիբանանը: Փաստորեն, «Եփրատի վահանը» տեղավորվում է Թուրքիայի նեոօսմանյան քաղաքականության շրջանակներում, որի բաղադրիչներից մեկը «ռազմակայանային» քաղաքականությունն է (Օսմանյան կայսրության նախկին տարածքներում ռազմական ներկայության հաստատումը)[17]: «Եփրատի վահան» գործողությունը տեւեց 7 ամիս եւ 5 օր ու ավարտվեց 2017թ. մարտի վերջին: Թուրքիան դրա շնորհիվ կարողացավ սեպ խրել Սիրիայի քրդերի Քոբանի ու Աֆրին շրջանների միջեւ, ապօրինաբար իր ռազմական ներկայությունը հաստատել Սիրիայի տարածքում, վտանգ ստեղծել քրդական հիմնական շրջաններից կտրված Աֆրինի գրավման համար: Եվ այնուամենայնիվ, Թուրքիան չկարողացավ ամբողջովին հասնել նպատակին «անվտանգության գոտու» հարցում. ավելի վաղ Էրդողանը քանիցս հայտարարել էր, որ իրենք նպատակադրվել են Սիրիայի հյուսիսում ձեւավորել 5000 կմ^2 տարածքով «անվտանգության գոտի», մինչդեռ այդ ցուցանիշը կազմեց միայն 2060 կմ^2: Սա վկայում է, որ Թուրքիան «Եփրատի վահան» գործողության միջոցով հասել է մասնակի հաջողության (ՌԴ-ն ու ԱՄՆ-ը թույլ չտվեցին, որ այն շարունակվի)[18]:

Ամփոփում

Ամփոփելով 2011-2017թթ. Թուրքիայի սիրիական քաղաքականությունը՝ նշենք, որ այն ընդհանուր առմամբ ձախողվեց: Արդյունքում Թուրքիան չկարողացավ հասնել երկու հիմնական նպատակի. ա) Բաշար Ասադի վարչակարգի տապալում, բ) Սիրիայի քրդերի անջատողական շարժումների զսպում: Թուրքիան այժմ ստիպված է որոշակի հետքայլ անել Ասադին տապալելու իր քաղաքականությունում: 2016թ. ամռանը գնալով ՌԴ-ի հետ հարաբերությունների կարգավորմանը՝ Թուրքիան փաստացիորեն հրաժարվեց Ասադին տապալելու իր վաղեմի երազանքից: Կարելի է ենթադրել, որ Թուրքիան Ասադի վարչակարգն ուժային ճանապարհով տապալելու անհնարինության մասին սկսեց լրջորեն մտորել 2015թ. սեպտեմբերի 30-ին Սիրիայում ՌԴ ռազմական միջամտության մեկնարկից հետո: Եվ եթե չլիներ «Եփրատի վահան» գործողությունը, ապա կարելի կլիներ փաստել, որ Թուրքիայի սիրիական քաղաքականությունը ձախողվել է կատարելապես:

Ինչ վերաբերում է Սիրիայի քրդերին, ապա չնայած Թուրքիային հաջողվեց սեպ խրել նրանց շրջանների միջեւ, ներկայում Սիրիայի քրդերը շատ ավելի ուժեղ եւ շահեկան դիրքերում են, քան Սիրիական հակամարտությունից առաջ էր: «Եփրատի վահան» գործողության ավարտի ժամանակ թուրքական ԶԼՄ-ները գրեցին, որ Սիրիայի քրդերը ներկա դրությամբ վերահսկում են Սիրիայի տարածքի 21%-ը՝ 38.500 կմ^2 եւ

ընդհանրապես Թուրքիային սահմանակից Սիրիայի շրջանների 65%-ը: Թուրքական կողմի պնդմամբ՝ այդ ժամանակ ԻՊ-ի վերահսկողության տակ էր Սիրիայի տարածքի 41%-ը՝ 75.500 կմ^2, եւ փաստորեն Սիրիայի քրդերի ու ԻՊ-ի (Թուրքիայի բնորոշմամբ՝ ահաբեկիչների) վերահսկողության տակ էր Սիրիայի տարածքի ավելի 60%-ը[19]:

Բացի դրանից, Սիրիայի քրդերը վերջին շրջանում ազդեցիկ ուժ են դարձել ռազմական առումով: Դոնալդ Թրամփի նախագահության ժամանակ ԱՄՆ-ը սկսել է ռազմական օգնություն ցուցաբերել Սիրիայի քրդերին՝ չնայած Թուրքիայի կոշտ հակազդեցությանը: ԱՄՆ-ը խոստացել է Սիրիայի քրդերի կողմից Ռաքքայի ազատագրումից եւ ԻՊ-ի պարտությունից հետո Սիրիայի քրդերից ետ վերցնել իր տված զենքը, սակայն Էրդողանը հայտարարել է, որ չի հավատում այդ խոստմանը: Այստեղ հարցն ըստ էության ամերիկյան զենքը վերադարձնել-չվերադարձնելու մեջ չէ. խնդիրն այն է որ Սիրիայի քրդերը դրա միջոցով ավելի են զորեղանում, ունենում են տարածքային ձեռքբերումներ, մեծացնում են սեփական ազդեցությունը, վերածվում են տարածաշրջանային գործոնի: Կան կարծիքներ, որ ԱՄՆ-ը Սիրիայի քրդերին վերածում է հետԻՊ-յան ժամանակաշրջանում Ասադին հակադիր ուժի:

Ի դեպ, Թուրքիան ինքն էր ցանկանում մասնակցել Ռաքքայի ազատագրմանը՝ մեծացնելու համար հետԻՊ-յան, հետպատերազմյան Սիրիայում իր ձայնի իրավունքը, կանխելու համար Ռաքքայի ազատագրմանը Սիրիայի քրդերի մասնակցությունը, ԱՄՆ-ին ապացուցելու համար, որ «միֆ» է այն, թե միայն Սիրիայի քրդերն են ցամաքային արդյունավետ ուժ ԻՊ-ի դեմ պայքարում: Ուշագրավ է, որ Թուրքիան նպատակադրվել էր Ռաքքային հարվածել ոչ թե նրանից 210 կմ հեռավորության վրա գտնվող Ալ Բաբից (որի գրավման համար Թուրքիայից, ի դեպ, պահանջվեց 177 օր, քանի որ Թուրքիան չգիտեր, թե ինչ էր անելու դրանից հետո), այլ՝ Ռաքքայից 90 կմ հեռու ընկած Թել Աբյադի շրջանից: Փաստորեն Թուրքիան ձգտում էր այդկերպ նոր սեպ խրել Սիրիայի քրդերի շրջանների, տվյալ դեպքում՝ Ջիզրեի եւ Քոբանիի միջեւ: Սակայն ԱՄՆ-ը թույլ չտվեց Թուրքիայի մասնակցությունը Ռաքքայի ազատագրմանը: Չենք բացառում, որ ԻՊ-ին Ռաքքայից (Սիրիայից) վտարելուց հետո նոր ուժով կբորբոքվի Թուրքիա-Սիրիայի քրդեր դիմակայությունը: Թուրքիան նաեւ ձգտելու է հնարավորինս երկար պահպանել իր ռազմական ներկայությունը Սիրիայի հյուսիսում, որն այդ դեպքում Թուրքիայի համար կվերածվի ճահճուտի (պարտիզանական պայքար): Դա կարող է խնդիրներ առաջացնել շահագրգիռ երկրների հետ, ինչպես նաեւ բացասաբար ազդել Թուրքիայի ներքաղաքական, ներհասարակական զարգացումների վրա (Թուրքիայում խստապես դժգոհ են, որ սիրիացիները հանգրվանել են երկրում, մինչդեռ իրենց զավակները զոհվում են Սիրիայում): Արդեն նշվեց, որ Սիրիայի քրդերը գերտերությունների եւ տարածաշրջանային ուժերի համար վերածվել են Թուրքիայի վրա ազդեցության լուրջ լծակի եւ Թուրքիան խոցելի դարձրել նրանց համար: Մասնավորապես, հենց Սիրիայի քրդերի ռազմական հաջողությունները 2015թ. Թուրքիային ստիպեցին միանգամից 3 խոշոր զիջում անել ԱՄՆ-ին, իսկ 2016թ. ներողություն խնդրել ՌԴ-ից:

Այժմ Թուրքիայի թիրախում է քրդական հիմնական շրջաններից կտրված Աֆրինը, որի օկուպացմամբ («Եփրատի սուր» գործողություն) նա ձգտում է ձերբազատվել Սիրիայի քրդերի շրջանների միավորման վտանգից: Սակայն դա քիչ հավանական է եւ, առաջին հերթին, կախված է ԱՄՆ-ի ու ՌԴ-ի հետ Թուր-

քիայի հարաբերությունների բնույթից: Ներկայում Սիրիայի քրդերը շարունակում են հավակնել Սիրիայի վերաբերյալ ժնեւյան բանակցություններին մասնակցելուն եւ չենք բացառում, որ Դոնալդ Թրամփի նախագահության ժամանակ ԱՄՆ-ը կարտոնի ժնեւյան բանակցություններին Սիրիայի քրդերի մասնակցությունը: Սա նշանակում է, որ Սիրիայի քրդերը հետագայում նույնպես մեծապես ազդելու են ԱՄՆ-ի, ՌԴ-ի, Իրանի, նաեւ Ասադի հետ Թուրքիայի հարաբերությունների վրա: Ի դեպ, Սիրիայի քրդերի անջատողական շարժումները զսպելու հարցում համընկնում են Թուրքիայի ու Ասադի շահերը (Իրանը մի կողմից ողջունում է ԻՊ-ի դեմ Սիրիայի քրդերի պայքարը, մյուս կողմից էլ չի ցանկանում նրանց զորեղացումը): 2016թ. մարտին Սիրիայի քրդերը հայտարարեցին Սիրիայի հյուսիսում դաշնության ստեղծման մասին, իսկ դեկտեմբերին ընդունեցին դաշնության Սահմանադրությունը: Սիրիայի քրդերի այս հաջողությունները կարող են ոգեւորություն առաջացնել նաեւ Թուրքիայի քրդերի շրջանում: Բացի դրանից, Սիրիայի քրդերն ապագայում կարող են ընթանալ Իրաքի քրդերի ճանապարհով՝ անցկացնելով անկախության մասին հանրաքվե: Թուրքիային բարդ ժամանակներ են սպասվում. տարածաշրջանում քրդական պետության (Քրդստան) ստեղծման հեռանկարը գնալով դառնում է ավելի իրատեսական: Չենք բացառում, որ այն կարող է ի հայտ գալ Թուրքիայում հենց Էրդողանի նախագահության ժամանակ (ով տեսականորեն այդ պաշտոնում կարող է մնալ ցմահ): Դա կատարյալ ֆիասկո կլինի Էրդողանի համար, ով այրվում է Թուրքիայի Հանրապետության պատմության մեջ իր ուրույն տեղը զբաղեցնելու եւ անգամ երկրի հիմնադիր Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքին ստվերելու մղումից:

ՀՂՈՒՄՆԵՐ

1 Հայկ Գաբրիելյան, Սիրիական զարգացումները եւ Թուրքիան, Նորավանք ԳԿՀ, 01.07.2011

2 Հայկ Գաբրիելյան, Թուրքիան եւ իր հարեւանները, Նորավանք ԳԿՀ, 04. 11.2011

3 Erdoğan: Beşar Esad Er yada Geç Gidecek, Gültekin Parlak, 24.11.2011

4 Габриелян Айк, Американо-турецкие разногласия по Сирии и Ираку, Институт Ближнего Востока, 02.06.2015

5 Davutoğlu'ndan Suriye için 100 bin uyarısı, En Son Haber, 20.08.2012

6 Mülteci sayısı psikolojik sınırı aştı, Sabah, 16.10.2012

7 Esad: İsyanın uzamasının nedeni Türkiye, Ulusal Kanal, 28.01.2013

8 Հայկ Գաբրիելյան, ԻՊ-ին Թուրքիայի չքողարկված աջակցության շուրջ, Նորավանք ԳԿՀ, 04.04.2016

9 Հայկ Գաբրիելյան, ԻՊ-ին Թուրքիայի քողարկված աջակցության շուրջ, Նորավանք ԳԿՀ, 04.04.2016

10 Suriye provokasyonu ve AKP'nin kirli savaşı, Yurt, 07.10.2012

11 Erdoğan ve Putin'in sert Suriye görüşmesi, En Son Haber, 22.10.2012

12 Հայկ Գաբրիելյան, Թուրքիան որպես ՆԱՏՕ-ի խնդրահարույց անդամ, ՄԱՀՀԻ, 17.01.2017

13 Seymour M. Hersh, The Red Line and the Rat Line, LRB, 17.04.2017

14 'O silahlar Türkiye'de üretildi', Vatan, 29.07.2013

15 Габриелян Айк, США, Турция и сирийские курды Институт Ближнего Востока, 28.06.2016

16 Հայկ Գաբրիելյան, Ռուս-թուրքական հարաբերություններ. 1-ամյա վթար՝ հաշտեցման ելքով, ՄԱՀՀԻ, 24.11.2016

17 Հայկ Գաբրիելյան, Թուրքիայի «ռազմակայանային» քաղաքականության շուրջ, Նորավանք ԳԿՀ, 30.06.2016

18 Հայկ Գաբրիելյան, Թուրքիայի «Եփրատի վահան» գործողությունը, Նորավանք ԳԿՀ, 04.04.2017

19 Suriye'nin yüzde 61'i iki terör örgütünün işgalinde, Anadolu Ajansı, 31.03.2017

Айк Габриелян

Сирийская политика Турции в 2011-2017гг.

В данной статье представлены и проанализированы акцентировки турецкой политики в отношении Сирии в 2011-2017гг., те условия, в которых Турция и Сирия встретили «Арабскую весну», начальная позиция Турции и причины ее постепенного изменения, побудительные мотивы приема сирийских беженцев, турецкая политика пограничных провокаций, а также обострение вопроса сирийских курдов для Турции. В статье выделено значение роли сирийских курдов во взаимоотношениях Турции с США и Россией, и обоснование целом провальной сирийской политики Турции.

Hayk Gabrielyan

Turkey's Syrian policy during 2011-2017

The article presents and analyzes accents of Turkish policy on Syria during 2011-2017, the conditions in which Turkey and Syria met the "Arab Spring", the initial position of Turkey and the reasons for its gradual changes, motives for accepting refugees from Syria, Turkish policy of the provocations on the border and escalation of the issue Syrian Kurds for Turkey. The article emphasizes the Syrian Kurds factor importance in relations between Turkey-US and Turkey-Russia, and justifies the failure of Turkey's Syrian policy.

Ինքնորոշման ուժը: Կանխորոշված էր արդյոք Հայոց ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում

ՄԱՆՎԵԼ ՍԱՐԳՍՅԱՆ
ՌԱՀՀԿ տնօրեն, քաղաքագետ

Իսկական պարտությունը սեփական իրավունքներից ինքնակամ հրաժարվելն է:

Ջավահարլալ Ներու

Արմատական գլոբալ քաղաքական փոփոխությունների ժամանակներում բոլոր ժողովուրդների առջեւ ծառանում է մի հարց. ինչպիսի՞ մարտավարություն ընտրել՝ ոչ միայն սպառնալիքները քեզնից վանելու, այլեւ փոփոխությունները քո շահերին առավելագույնս ծառայեցնելու համար: Որպես կանոն, կատարված ընտրության բնույթը կախված է ժողովրդի քաղաքական աշխարհընկալումից՝ թե՛ կորուստները, թե՛ հաջողությունները այս կամ այն ընտրության արդյունք են: Ըստ այդմ էլ ազգային քաղաքական աշխարհընկալման բանականության կամ առասպելաբանականության աստիճանը ժողովուրդների համար ունենում է ճակատագրական նշանակություն:

Հետեւելով աշխարհակարգի փոխակերպումների ներկա շրջափուլում (սկսած 1985 թվականից) շատ պետությունների ու ժողովուրդների պատուհասած աղետներին, կարելի է մատնանշել աշխարհի բանական ընկալման ցածր աստիճանի հանգուցային պատճառը՝ հակվածությունը «սառը պատերազմի» ժամանակաշրջանի մտակաղապարներին: ԽՍՀՄ-ը, Հարավսլավիան, Ուկրաինան այդպես էլ չկարողացան գիտակցել, որ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ձեւավորված կայուն աշխարհակարգը՝ աշխարհում ուժերի հարաբերակցության կտրուկ փոփոխության պատճառով, կորցրել է իր արդյունավետությունը: Չգիտակցվեց այն հանգամանքը, որ «սառը պատերազմի» շրջանում կազմավորված սահմաններն ու միջազգային հաստատությունները չեն կարող պաշտպանված լինել ո՛չ միջազգային իրավունքի նորմերով, ո՛չ համաշխարհային առանցքային տերությունների ազգային շահերով: Չգիտակցվեց նաեւ այն, որ պետությունները կորցրել են իրենց միջազգային դերերը, քանի որ դրանք կանխորոշված էին նույն աշխարհակարգի բնույթով:

Էլ ավելի բարդ եղավ մյուս՝ աշխարհի քաղաքական քարտեզում հայտնված նոր պետությունների վիճակը: Այդ պետությունների առաջին քաղաքական ընտրախավերը ոչ միայն դրսեւորեցին հակվածություն «սառը պատերազմի» ժամանակաշրջանի մտակաղապարներին, այլեւ արագ խճճվեցին ավանդական ազգային քաղաքական առասպելաբանության ցանցում: Իրեն զգալ տվեց նաեւ այդ ընտրախավերի մասնակի կամ լիակատար քաղաքական տգիտությունը, որոնք ի զորու չէին հասկանալ միջազգային հարաբերությունների տարրական հիմունքները: Թե ինչպես նման աշխարհընկալմամբ կարելի է

ապահովել տվյալ պետության անկախ գոյությունը (ընդ որում՝ շատերը հակամարտ հարաբերությունների մեջ էին իրենց հարեւանների հետ կամ ուղղակի փլուզվել էին), դժվար չէ ենթադրել:

2011 թվականից սկիզբ առած «արաբական գարունը» շատ արագ ցույց տվեց, որ աշխարհում արդեն տրվել է Առաջին համաշխարհային պատերազմի արդյունքների վերանայման մեկնարկը: Մերձավոր Արեւելքի՝ այդ շրջանում ձեւավորված պետությունները արեւմտյան տերությունների քաղաքականության ճնշման տակ սկսեցին փլուզվել: Միաժամանակ այդ պահից ի հայտ եկավ մեկ այլ միտում. այս կամ այն չափով կաթվածահար եղան կամ սկսեցին փլուզվել աշխարհակարգի բազմաթիվ հանգուցային հաստատություններ՝ 2011 թվականին ԵԱՀԿ-ն Աստանայի իր գագաթաժողովում չկարողացավ նույնիսկ գործողությունների ծրագիր ընդունել, իսկ Եվրամիությունը կանգնեց իր հետագա գոյության նպատակահարմարության փաստի առջեւ:

Ամեն դեպքում աշխարհում արդեն ոչ ոք չի բացառում, որ գնալով միջազգային հաստատությունները ստիպված են իրենց գործառույթները իրավաքաղաքական կարգավորման հանձնել միջազգային կոալիցիաներին, որոնք կազմավորվում են այս կամ այն խնդրի շուրջ եւ հակված են կարգավորման ռազմաքաղաքական եղանակներին: Մարդու իրավունքի՝ 1975թ. Հելսինկյան եզրափակիչ ակտում օրինականացված սկզբունքը դարձել է վարչակարգերի պաշտոնանկության եւ պետությունների վերաձեւման քաղաքականության հիմքը: «Միջազգային հանրություն» հասկացությունն ամորֆ իմաստ է ձեռք բերել: Այդպիսին են փոփոխությունների ժամանակաշրջանի ունիվերսալ իրողությունները: Եվ այդ իրողությունները բոլոր ժողովուրդների համար մշտապես ստեղծում են ճգնաժամային պայմաններում կենսապահովման ուղիների փնտրտուքի հրամայականը:

Ճիշտ տեղում չի փնտրվում փրկարար ուժը

Ինչո՞ւ այս հոդվածի նախաբանում հարկ եղավ ներկայացնել անցման շրջանների հիմնախնդիրների հակիրճ տեսությունը: Պատասխան. որովհետեւ սույն հոդվածում կփորձենք հիմնավորել աշխարհակարգերի արմատական փոփոխությունների շրջաններում իրենց կենսակայունության ապահովման գործում ժողովուրդների ու պետությունների՝ հաջողված եւ չհաջողված լինելու ունիվերսալ պատճառը: Ինչպես ցույց է տալիս պատմությունը, շատերին չի հաջողվում դիմակայել կորուստների եւ ազգային աղետների հանգեցնող պայմաններում: Իսկ դա տեղի է ունենում այն դեպքում, երբ ազգային գիտակցության մեջ լիովին բացակայում են այնպիսի *հասկացություններ*, որոնք ի զորու են ապահովել ժողովրդի կենսունակության յուրահատկությունները:

Այդ առումով համարձակվենք պնդել, որ նշված *հասկացություններն* առնչվում են Ինքնորոշման [1] եւ Ինքնիշխանության ոլորտին: Ժողովրդի կողմից այդ հասկացությունների խորքային իմաստի թերըմբռնման պարագայում փրկարար ուժ փնտրելու՝ նրա ցանկացած գործողություն կտանի միայն կորուստների ուղիով: Քանզի ճիշտ տեղում չեն փնտրվում ուժի աղբյուրն ու ռեսուրսը: Ժողովրդի ինքնորոշումը քաղաքական ընտրություն է՝ ունիվերսալ անորոշության պայմաններում: «Հենց մարդու եւ նրա հանրույթների ինքնորոշումն է, որ իրերի ու երեւույթների օբյեկտիվ աշխարհի հետ փոխգործողությամբ, կերտում է այնպիսի *հանգամանքներ եւ հարաբերություններ,* որոնք իրենցից ներկայացնում են տվյալ փոխգործողության օբյեկտիվա-սուբյեկտիվ եւ իդեալա-նյու-

թական արդյունքներ: Արդյունքներ, որոնք պատմություն են կերտում» [2]:

Այստեղ պետք չեն հայտնագործություններ. ինքնորոշման գործողությունն ինքնին ժողովրդին քաղաքական ազգի վերածելու եղանակ է՝ քաղաքական միավորի, որն ընտրում եւ հայտնում է իր ռազմավարական նպատակը, արժեքներն ու սկզբունքները: Եվ այստեղ ամենագլխավորն այն է, որ Ինքնորոշմամբ ձեւավորված Ինքնիշխանությունը ծնում է ազգի Ուժի աղբյուր եւ բավականաչափ ռեսուրս, որն ի զորու է ապահովել նրա կենսունակությունն ու կենսակայունությունը: Այդպիսի ռեսուրս ձեւավորվում է «իրերի ու երեւույթների օբյեկտիվ աշխարհի հետ» հարաբերություններից, քանի որ ինքնորոշվող սուբյեկտը շատ արագ դեր է ստանում միջազգային հարաբերություններում՝ դեր, որը բոլորին կստիպի հաշվի նստել իր հետ: Ծնվող օբյեկտը իր հանդեպ վերաբերմունքն ի սկզբանե կբաժանի «բացասական» եւ «դրական» մասերի՝ դրանով իսկ ապահովելով իր շուրջ եղած ուժերի հավասարակշռությունը եւ, հետեւաբար, իր անկախությունը:

Ինչպես տեսնում ենք, այնքան էլ հեշտ չէ հասկանալ Ինքնորոշման եւ ինքնորոշվող սուբյեկտի Ուժի (կենսունակության եւ կենսակայունության) կապի տրամաբանությունը: Հենց այդ կապի չըմբռնումը հաճախ ծնում է վախ Ինքնորոշումից՝շատերն այդպիսի գործողության մեջ տեսնում են «*իրերի ու երեւույթների օբյեկտիվ աշխարհին*» նետված մարտահրավեր եւ իր իսկ գոյությանն ուղղված սպառնալիքի աղբյուր: Դրա համար ավելի հաճախ մենք հանդիպում ենք Ինքնորոշումից եւ Ինքնիշխանությունից հրաժարվելու հակվածության, ինչպեսեւ սուբյեկտի՝ իրենից դուրս ուժ փնտրելու չգիտակցված հակվածության: Որպես կանոն, այս վերջին հակումն էլ ծնունդ է տալիս ապակառուցողական գործոնների մի շարանի, ինչը տեսնում ենք բազմաթիվ ժողովուրդների ու պետությունների պատմության մեջ: Սակայն դրանից ճիշտ հետեւություններ սովորաբար չեն արվում, եւ անհաջողությունն էլ պայմանավորվում է «ուժեղ հովանավորների» բացակայությամբ:

Բերված պնդումների փաստարկմանն էլ կնվիրվեն հետագա դատողություններն այս հոդվածում: Ինչպես թվում է, ավելի հրատապ թեմա չկա, համենայն դեպս՝ հայ ժողովրդի համար, որն ազգային աղետի ենթարկվեց 1914-18 թվականների Առաջին համաշխարհային պատերազմի շրջանի գլոբալ փոփոխությունների հետեւանքով, եւ որը բարդ պայմաններում է գտնվում նաեւ մեր օրերում: Թե՛ Օսմանյան կայսրության անկման պատմությունը, թե՛ ԽՍՀՄ-ի 1991թ. ապամոնտաժման ժամանակաշրջանը ակներեւաբար ցուցադրում են ճգնաժամային պայմաններում ներգրավված ժողովուրդների ազգային ծրագրերի արդյունավետության եւ անարդյունավետության օրինակները: Այդ պատմության մի շարք դիտանկյունների վերլուծությունը լավ հնարավորություն է տալիս բնութագրելու եւ հասկանալու ինչպես Ինքնորոշման, այնպես էլ Ինքնորոշումից հրաժարվելու ֆենոմենը:

Ինքնորոշումը եւ իրավունքներից ինքնակամ հրաժարվելը

Հպանցիկ անդրադառնանք ԽՍՀՄ փոխակերպումների շրջանի փաստերին եւ հայ ժողովրդի գործողությունների տրամաբանությանը: ԽՍՀ միության ապամոնտաժման շրջանում Հայաստանի անկախ պետականության կառուցումն ընթացավ չափազանց հակասական գաղափարախոսական մթնոլորտում: Տակավին չհասցնելով գնահատել ԽՍՀՄ-ում սկսված «Վերակառուցման» քաղաքականությունը, հայ ժողովուրդը բախվեց Լեռնային Ղարաբաղի ինքնա-

վար մարզի (ԼՂԻՄ) ժողովրդի ինքնորոշման փաստին, որն արտահայտվեց մարզը Հայկական ԽՍՀ-ի հետ վերամիավորելու պահանջով: Երկու տարվա ընթացքում (1988-1989) ժողովրդի միջավայրում բյուրեղացավ համընդհանուր ինքնորոշման գործընթացը՝ որպես իրավաքաղաքական գործողությունների կուռ ալգորիթմ: Ժողովրդի զանգվածային գործողություններին շատ արագ միացան այն ժամանակվա կոմունիստական իշխանությունները: Իրենց հերթին՝ միութենական իշխանությունները զինվեցին բռնաճնշումների պրակտիկայով:

1988 թվականին պաշտպանելով Գերագույն խորհրդի որոշմամբ (1988թ. հունիսի 15-ի որոշումը) Հայկական ԽՍՀ-ի հետ վերամիավորվելու վերաբերյալ ԼՂՀ-ի որոշումը, Հայաստանի ղեկավարությունը համարձակվեց այդ հիմնախնդիրը դնել միութենական Կենտրոնի առջեւ: Կենտրոնը, բնականաբար, մնաց անդրդվելի: Եվ այստեղ մենք գործ ունենք հայ ժողովրդի կյանքում տեղ գտած՝ ռազմավարորեն կարեւոր ընտրության հետ: 1989 թվականը նշանավորվեց Հայկական ԽՍՀ-ի եւ ԼՂԻՄ-ի վերամիավորման մասին վավերագրի ի հայտ գալով (Հայկական ԽՍՀ-ի եւ ԼՂԻՄ-ի վերամիավորման մասին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի ու ԼՂԻՄ Ազգային խորհրդի 1889թ. դեկտեմբերի 1-ի համատեղ որոշումը): Այդ փաստաթուղթը կարելի է գնահատել որպես Ինքնորոշման դասական ակտ, որն արտահայտվեց միութենական Կենտրոնի եւ 1989թ. նոյեմբերի 28-ին ԼՂԻՄ-ում ստեղծված ու Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի ենթակայության տակ գտնվող, այսպես կոչված, Կազմակերպական կոմիտեի (Կազմկոմիտե) գործողությունների հանդեպ խաղաղ անհնազանդությամբ: ԽՍՀՄ իշխանությունները դիմեցին անանախադեպ քայլի՝ մարզում իշխանության մարմինների լուծարման եւ արտակարգ դրության ռեժիմի հաստատման: Ավելի ուշ մենք կվերադառնանք սույն թեմային՝ գնահատելով այդ իրավիճակում ԼՂԻՄ բնակչության գործողությունների իմաստը:

Իսկ այժմ անդրադառնանք հաջորդած երկու տարիներին (1990-91թթ.) Հայաստանի քաղաքական փոխակերպման դիտանկյանը: Այստեղ քաղաքական իրադարձությունների տրամաբանությունը փոխվում էր ԽՍՀՄ-ի նշմարվող ապասերտաճմանը համապատասխան: Հայկական ԽՍՀ-ում իշխանության եկած ժողովրդական շարժման (Հայոց համազգային շարժում՝ ՀՀՇ կուսակցություն) լիդերները 1990թ. օգոստոսին ընդունեցին անկախ պետության կառուցման մասին Հռչակագիր, որում Հայաստանի Հանրապետություն (ՀՀ) պետության տարածք էր նշվում այն երկրի տարածքը, որը միավորվել էր 1989թ. օգոստոսի 1-ի որոշմամբ: Մինչ այդ անցկացված խորհրդարանական ընտրություններին մասնակցել էր նաեւ ԼՂԻՄ-ը: Սակայն պետականակերտման ռազմավարությունը Հայաստանում արմատապես փոխվեց, երբ 1991թ. սեպտեմբերի 21-ին անկախության հանրաքվեն անցկացվեց միայն նախկին Հայկական ԽՍՀ տարածքում: ՀՀ նոր իշխանությունները փաստորեն հրաժարվեցին 1989 թվականի որոշումից: Լեռնային Ղարաբաղը դեկտեմբերի 10-ին առանձին անցկացրեց անկախության հանրաքվեն, իսկ մինչ այդ՝ 1991թ. սեպտեմբերի 2-ին, հռչակել էր Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը: Այնուհետեւ ՀՀ իշխանությունների նոր մոտեցումն էլ ավելի որոշակիացավ: 1991թ. դեկտեմբերի 21-ին, հետխորհրդային տարածքում ձեւավորված Անկախ պետությունների միության իրավական փաստաթղթերի շրջանակում, Հայաստանի Հանրապետությունը ճանաչեց [3] նրա բոլոր մասնակիցների, այդ թվում նորաստեղծ Ադրբեջանի Հանրապետության ինք-

նիշխանությունն ու գոյություն ունեցող սահմանները՝ չճանաչելով ԼՂՀ անկախությունը:

Փաստորեն Հայաստանի Հանրապետությունը հրաժարվեց ոչ միայն միավորված պետություն կառուցելու ռազմավարությունից, այլեւ ԼՂՀ անկախության ճանաչումից՝ ըստ էության ԼՂՀ-ի իրավաբանական իրավունքը տալով Ադրբեջանին: Պետական քաղաքականության առօրյա մտավ մի սկզբունք՝ Հայաստանի Հանրապետությունը զերծ պահել բոլոր այն խնդիրների համար ցանկացած իրավաքաղաքական պատասխանատվությունից, որոնք դուրս են նախկին Հայկական ԽՍՀ սահմանների շրջանակներից: Սակայն հատկանշականն այն է, որ 1991թ. սեպտեմբերի 21-ին անկախության մասին հանրաքվեի անցկացումից եւ Հայաստանի Հանրապետությունն անկախ պետություն հայտարարելուց հետո ՀՀ-ն չընդունեց պետական անկախության մասին հատուկ Հռչակագիր՝ իբրեւ այդպիսին, վկայակոչելով 1990 թվականի Հռչակագիրը: Այդ հանգամանքը լղոզեց Հայաստանի Հանրապետության իրավաքաղաքական մոդելը: Լղոզեց նաեւ պետական քաղաքականության տրամաբանությունը:

Ավելի շուտ՝ Ինքնորոշման հիման վրա անկախ պետության կառուցման սկզբունքից երկիրն անցել է «անկախություն՝ համաձայնությամբ» սկզբունքի: Խոսքը Ռուսաստանի հետ համաձայնեցված գործողություններին գերակայություն տալու մասին է, որտեղ մերժվում են ցանկացած այն գործողությունները, որոնց վերաբերյալ չկա Ռուսաստանի համաձայնությունը: Դրանով իսկ պետական քաղաքականության մեջ երեւան եկավ իրավունքներից ինքնակամ հրաժարվելու միտում՝ ի նպաստ համաձայնեցված անվտանգության: Բայց կյանքն իսկույնեւեթ ցուցադրեց այդպիսի քաղաքական փիլիսոփայության սնանկությունը. չէ՞ որ ԱՊՀ շրջանակներում ճանաչելով Ադրբեջանի ինքնիշխանությունն ու գոյություն ունեցող սահմանները, Հայաստանը միաժամանակ ճանաչել է ԼՂՀ-ի դեմ օրինական հիմունքով ուժ կիրառելու՝ նրա իրավունքները: Այդ կարեւոր հանգամանքը չէր գիտակցվել: Այդպիսի ուժ Ադրբեջանի կողմից կիրառվեց անհապաղ, ինչն արյունահեղության հանգեցրեց 1992-94 թվականներին: Ռուսաստանի հետ համաձայնեցված գործողությունները զերծ չպահեցին երկիրը պատերազմից: Իսկ Թուրքիայի հետ հարաբերությունները կարգավորելու մասին այդ շրջանում հայտարարված ռազմավարությունն այդպես էլ մնաց թղթի վրա՝ իբրեւ հռչակագիր:

* * *

Վերը նկարագրված իրադարձություններից քառորդ դար անց հայկական պետականության իրավաքաղաքական իրողությունները՝ ի դեմս երկու պետական կազմավորումների՝ ՀՀ-ի եւ ԼՂՀ-ի, ձեռք բերեցին բարդ ու հակասական ձեւեր: Հայաստանի Հանրապետությունը կաշկանդված մնաց ինչպես անվտանգության, այնպես էլ ֆինանսատնտեսական ոլորտներում Ռուսաստանի պարտադրած պայմանագրերի համակարգով: Թուրքիան 1993 թվականից ի վեր փակ է պահում Հայաստանի հետ սահմանը: Այդ սահմանը պաշտպանում են ռուսաստանցի սահմանապահները, իսկ երկրի տարածքում օրինականացված է ռուսական ռազմահենակետի մնալը: Միաժամանակ՝ ԼՂՀ-ն սեփական Սահմանադրությամբ ամրագրեց իր կողմից վերահսկվող տարածքները եւ հրաժարվեց արտաքին զորքերի մուտքը այդտեղ: ԼՂՀ-ի հիմնախնդրով արդեն ավելի քան քսանհինգ տարի զբաղվում է միջազգային մի կառույց՝ ԵԱՀԿ Մինսկի խումբը: Հաշտության պայմանակարգը պահպանվում է ՀՀ-ի, ԼՂՀ-ի եւ Ադրբեջանի զինված ուժերի հավասարակշռության հիման վրա: Բայցեւայնպես՝ ներկայում

մենք գործ ունենք անլուծելի եւ բավական վտանգավոր մի իրավիճակի հետ՝ կապված Արցախում «ստատուս-քվո»-ի բնույթի հետ: Դրա էությունը հանգում է նրան, որ Արցախի Սահմանադրությամբ ամրագրված տարածքը միջազգայնորեն ճանաչված է Ադրբեջանի օգտին: Սկզբնապես հայկական քաղաքականությունում պետական շինարարության իրավական կողմերի անտեսումը չէր կարող չհանգեցնել նման բարդությունների:

Ամփոփելով արված դատողությունները, հարկ է խոստովանել, որ տեղ գտած մոտեցման՝ հայկական պետականության կազմավորման արշալույսին ընդունված ոչ հայանպաստ որոշումների համար պետք է որ լուրջ հիմքեր լինեին: Հայաստանի այդօրինակ քաղաքականությունն ինչ-որ բացատրություն ստանում է, եթե նկատի ունենանք, որ 1991 թվականից սկսած՝ որպես հանգուցային ուղղություն, ընդունվել էր Թուրքիայի եւ Ադրբեջանի հետ հաշտության ռազմավարությունը՝ *«խաղաղություն ամեն գնով»* հայեցակարգի հիման վրա: Ընդ որում, պետք է նկատել, որ երկրի ղեկավարությունը ցուցադրաբար հրաժարվել էր Ինքնորոշման եւ անվտանգության ապահովման հարցերում լիակատար Ինքնիշխանության քաղաքականությունից: Ինքնորոշում հասկացության արժեքը չէր գիտակցվել: Համապատասխանաբար՝ նոր կազմավորված պետության անվտանգության եւ զարգացման ապահովման հույսերը այլ հասկացությունների ու գործոնների հետ էին կապվում: Պարզ է, որ այդ հասկացությունները պետք է փնտրել Ինքնորոշման փիլիսոփայության շրջանակներից դուրս: Ինչպես նշվել էր վերը, նշանաբան էր վերցվել *«անկախություն՝ համաձայնությամբ»* հայեցակարգը: Թե որն էր այդպիսի մոտեցման արմատավորման պատճառը՝ կփորձենք պարզաբանել հետագա դատողություններում:

Պատմության հոգեբանական բեռան թելադրանքը

Վերը բերված դատողություններից պետք է պարզ լինի, որ նոր կազմավորված՝ *«համաձայնության փիլիսոփայության»* հայկական պետականության անվտանգության եւ զարգացման ապահովման հույսերը սկզբնապես միջազգային հանրության հետ էին կապվում: Ընդ որում, Հայաստանի ղեկավարությունը յուրահատուկ պատկերացում ուներ այդ հանրության մասին:

Քանի որ Հայաստանի նոր քաղաքական ընտրախավի պետական ուղեգիծն ի սկզբանե կառուցվել էր Լեռնային Ղարաբաղի Ինքնորոշման գործոնի գերակշռության պայմաններում, արտաքին քաղաքականության ռազմավարությունն ու առանցքային դրույթները [4] բխում էին այդ հանգամանքից: Ընդհանրացված տեսքով այդ ռազմավարությունը կարելի է ներկայացնել հետեւյալ կերպ. «Լեռնային Ղարաբաղի հետ կապված իրավիճակը հակասում է աշխարհակարգին: Համապատասխանաբար՝ պետք է ենթարկվել ՄԱԿ-ի եւ ԵԱՀԿ-ի այն պահանջներին, որոնք արտահայտում են այդ աշխարհակարգի կամքը: Դա է Հայաստանի միակ ռազմավարական խնդիրը: Մեր կողմից նրանց պահանջների ընդունումը կլուծի հակամարտությունը եւ այնժամ կարելի է հասնել գլխավոր ռազմավարական նպատակին՝ Թուրքիայի եւ Ադրբեջանի հետ հաշտեցմանը: Հարկավոր է հատուկ սրտաճմլիկ վերաբերմունք ցուցաբերել Ռուսաստանի հանդեպ»:

Այդ մոտեցման մեջ մեզ պետք է հետաքրքրի մեկ կարեւոր տեսանկյուն. նախասկզբնական աներկբա համոզվածություն, որ միջազգային հարաբերությունների սուբյեկտ-երկրները հնարավորություն չունեն ազդելու նրանց դիրքորոշումների վրա, ովքեր հանդես են գալիս «աշխարհակարգի» անունից՝ միջազգա-

յին ատյանների դիրքորոշման վրա: Այսինքն՝ երկրների ինքնիշխան որոշումներն ու գործողությունները աշխարհակարգի վրա ներազդելու գործոն չեն հանդիսանում: Բացի դրանից, վստահություն այն բանում, որ միջազգային հանրության դիրքորոշումը մշակվում է բացառապես աշխարհակարգի կանոնների՝ միջազգային իրավունքի հիման վրա:

Բայց որտեղից հայկական ընտրախավի քաղաքական աշխարհընկալման մեջ հաստատվեց վախ աշխարհակարգից՝ ի դեմս «միջազգային ատյանների», իսկ իրականում՝ ի դեմս ազդեցիկ տերությունների: Ինչպես նաեւ՝ որտեղից է գալիս *ազդեցիկ տերությունների դիրքորոշման վրա սուբյեկտի ազդեցության անհնարինության համոզմունքը*: Ինչու՞ իրավունքներից հոժարակամ հրաժարումն ի նպաստ աշխարհակարգի՝ դիտարկվում է որպես ողջամտության բարձր արտահայտություն: Կրկին ընդգծենք, որ նշանակալի ինչ-որ բան պետք է բացակայի աշխարհընկալման համակարգում, որպեսզի «աշխարհակարգի» թելադրանքի ներքո գնալ իրավունքներից հրաժարվելու ուղիով՝ հանուն փրկության («խաղաղության ամեն գնով»:) Այստեղ խնդիրն այն է, որ միջազգային հարաբերություններով ու աշխարհակարգի խնդիրներով հետաքրքրվող ցանկացած մարդ գիտի, որ միջազգային հարաբերությունները խարսխվում են ազգային շահերի, ուժերի հավասարակշռության եւ միջազգային իրավունքի վրա: Համապատասխանաբար՝ այդ երեք «կետաձկների» վրա էլ հիմնած է աշխարհակարգը: Այսինքն՝ աշխարհակարգի իրավական ֆետիշացումը միշտ կասկածելի է, առավել եւս՝ համաշխարհային կարգի գլոբալ փոփոխությունների շրջանում: Բացի դրանից, ուժերի հավասարակշռության համակարգում ինքնիշխան սուբյեկտի դերի չմբռնումը կարող է ժողովրդին վերջնականապես խճճել միջազգային գործընթացների ճիրաններում:

Այս հարցերի պատասխանները շատ պարզ են. որեւէ դրական դեր չի տրվում միջազգային քաղաքականության մեջ ինքնորոշման միջոցով ինքնիշխան ռազմավարություն ձեւավորելու բացառիկությանը [5]: Ավելին՝ այդ բացառիկության մեջ դիտարկվում է միայն պետության անվտանգության եւ բուն գոյության սպառնալիքը: Այսպիսին է հայկական պետականության քաղաքական փիլիսոփայությունը: Եվ այդ փիլիսոփայությունն արդեն բերել է հայկական պետության ինքնիշխան իրավունքների անդառնալի կորուստներ եւ ստեղծել անվտանգության հարաճուն սպառնալիքներ: Այդու՝ հայկական քաղաքականության մեջ կիրառվող մոտեցումների վերանայման որեւէ փորձ չի արվում: Դա պետք է բացատրություն ունենա:

Վախ պատմությունից

Նպատակահարմար է այսօրվա քաղաքական համոզմունքների ձեւավորման ակունքները փնտրել պատմության մեջ: Ֆիզիկական բնաջնջում վերապրած (1915-20թթ. Ցեղասպանություն) հայ ժողովրդի համար ֆիզիկական գոյատեւման խնդիրը վերջին հարյուրամյակում չէր կարող գերակա չլիներ: Ընդ որում, ֆիզիկական բնաջնջման սպառնալիքների, ինչպես նաեւ ազգային անվտանգության մասին ժամանակակից պատկերացումները չէին կարող չձեւավորվել տեղ գտած ցեղասպանության փաստի ներգործությամբ: Ցեղասպանության շրջանի բուն իրողությունները, ինչպես նաեւ դրանից հետո արված զանազան հետեւությունները չէին կարող չմշակել աշխարհընկալման յուրահատուկ համակարգ: Այդ յուրահատկությունն ինքնօրինակ հոգեբանական վիճակի արդյունք է, որը ձեւավորվում է այնպիսի հասկացության ազդեցության ներքո, ինչպիսին է «ցեղասպանության համախտանիշը»: Այլ բան լինել չէր

էլ կարող, քանի որ ազգային այդպիսի մեծածավալ աղետը չէր կարող խոր հետք չթողնել հայերի հաջորդ սերունդների հոգեբանության մեջ: «Վախ պատմությունից» ֆենոմենը, ընդհանրապես, վճռական գործոն է ազգային աղետների փուլեր վերապրած շատ ժողովուրդների գիտակցությունում: «Պատմության վախի համախտանիշը» հստակ դրսեւորվում է բազմաթիվ ժողովուրդների գիտակցության մեջ, ինչպես օրինակ՝ թուրքերի, գերմանացիների, ճապոնացիների եւ այլոց: Նման համախտանիշի թելադրանքից ձերբազատվելն այնքան էլ դյուրին չէ:

Անզորությունից ծնվող ատելություն, ճակատագրից խռովածություն, «իրերի ու երեւույթների աշխարհի» հանդեպ մեղքի վերացական զգացում, կատարածի համար անխուսափելի հատուցման մոլուցք, թվացյալ կամ իրական հակառակորդի (մասնավորապես՝ վախ համաշխարհային տերություններից) դիվականացում, պատերազմի սարսափ եւ ամեն գնով խաղաղության հասնելու ձգտում… բոլոր այս հասկացությունները «պատմության վախի համախտանիշի» արտահայտություն են, որոնք ձեւավորում են մարդկանց շատ սերունդների անհամարժեք պատկերացումներն ու գործողությունները: Հաճախ մարդկանց դատողությունները եւ գործողությունները ձեռք են բերում ինքնաոչնչացնող բնույթ: Մարդիկ ջանում են ազատվել ցանկացած իրենց ձգտումներից՝ դրանց մեջ տեսնելով սպառնալիք իրենց ֆիզիկական գոյությանը: Սեփական պատմության եւ սեփական ազգային իրողությունների իմաստավորման ցանկացած ջանք վերածվում է սոսկ իր ազգային գժտությունները շարունակականորեն արդարացնելու փորձի: Իսկ իրական կյանքի ցանկացած հաջողություններ (առավել եւս՝ իրական հակառակորդի դեմ հաղթանակները) վերածվում են վերացական պատժի հանդեպ վախի զգացումի:

Դժվար է ժխտել, որ այդ զգացումներից շատերը խոր արմատներ ունեն հայերի ներկա սերունդների գիտակցության մեջ: Թվում է՝ հանուն արդարության հզոր շարժումը եւ 1991-94թթ. արցախյան պատերազմում տարած հաղթանակը կարող էին «ցեղասպանության համախտանիշը» հաղթահարելու խնդրում (որպես պատմության վախի համախտանիշի լոկալ դրսեւորում) նշանակալի գործոն դառնալ հայ ժողովրդի համար: Սակայն, ինչպես այդ պատերազմի շրջանում եղած արձագանքների, այնպես էլ «Խաղաղություն ամեն գնով», «Խաղաղություն ինքնիշխանության գնով» բանաձեւերով անվտանգության մասին ցայսօր հարատեւող բանավեճի դիտարկումները վկայում են, որ հասարակական գիտակցության մեջ կայուն կերպով արմատավորված են, համենայն դեպս՝ «մեղքի զգացումը», ինչպես նաեւ «հատուցման մոլուցքը»: Նույնիսկ կարելի է պնդել, որ արցախյան պատերազմում տարած հաղթանակը շատ մարդկանց գիտակցության մեջ մի քանի անգամ ուժեղացրել է այդ զգացումները: Այսինքն՝ այստեղ մենք գործ ունենք միանգամայն յուրօրինակ աշխարհընկալման հետ:

Այստեղ անհրաժեշտ է ճշտել, որ բավականաչափ տարածված «վրեժ թուրքերից» եւ թուրքերի հետ խաղաղությունից հրաժարվելու փիլիսոփայությունը (այսպես կոչված՝ Հայ Դատի «հեղափոխական» փիլիսոփայությունը) ոչ մի կերպ չի վկայում հայերի մեջ այլ աշխարհընկալման առկայության փաստի մասին: Արդարությունը վերականգնելու՝ աշխարհին ուղղված Պահանջի քաղաքականությունը («Պահանջատիրություն»), «հանուն ազատության» գիտակցված մահվան գնալու տրամադրվածությունը («Ազատություն կամ մահ») արտացոլում են «ցեղասպանության համախտանիշով» թելադրված նույն հոգեբանական վիճակը, տվյալ դեպքում՝ անզորության զգացողությունը: Կարելի

է համարձակորեն պնդել, որ ե՛ւ իրավունքներից հանուն փրկության Հրաժարվելու քաղաքականությունը, ե՛ւ աշխարհին ուղղված՝ Պահանջի քաղաքականությունը խարսխված են նույն կեղծ փիլիսոփայական հիմնէության վրա, որն արտահայտվում է հետեւյալ պարադիգմայով.

- «Ուժն է ծնում իրավունք. մենք թույլ ենք. աշխարհը մեր դեմ է եւ անարդար. մենք չենք կարող պայքարել ողջ աշխարհի դեմ. մենք չունենք հովանավորներ»:

Տարբեր են միայն այդ համոզմունքներից բխող հետեւությունները (բնականաբար՝ նույն կերպ կեղծ): Համարվում է, որ «աշխարհն անարդար է», իսկ մեր արդարությունը «աշխարհին նետված ձեռնոց է»: Հետեւությունը. կամ հաշտվում ենք իրողությունների հետ, կամ հեռանում ենք անհավասար պայքարի այս անարդար աշխարհից: Հետաքրքիրը սոսկ այն է, որ միեւնույն աշխարհընկալումն ունեցող մարդկանց կազմը հարյուր տարուց ավելի շարունակում է այդ հրապարակային բանավեճը՝ միմյանց մեղադրելով «ազգի դավաճանության» մեջ: Արմատացած փիլիսոփայության հիմնէությունը կասկածի տակ չի դրվում: Ստեղծված իրողություններում որեւէ այլ փիլիսոփայության օբյեկտիվ գոյության հնարավորությունը, որն ի զորու է ապահովել ժողովրդի երաշխավորված կենսունակային յուրահատկությունները, չի դիտարկվում:

Իր եւ աշխարհի նկարագրված տեսլականը չէր կարող կարճ ժամանակում ձեւավորվել: Բավական է աչքի անցկացնել պատմության փաստերն ու պատմագրական նյութերը՝ համոզվելու համար, որ նման աշխարհընկալումը եւ նշված բանավեճը գոյություն են ունեցել նաեւ 1915 թվականի Ցեղասպանությունից առաջ: Այդ ողբերգությունը դրանք սոսկ հասցրել է հիվանդագին համախտանիշի: Հասկանալի է դառնում նաեւ, որ այդպիսի բանավեճի մթնոլորտում ժողովրդի գործողությունների ձեւավորումը չէր կարող չհանգեցնել պարբերական խաթարումների, որոնք ինքնին խթանվում էին այդ բանավեճի վրա հիմնված տարբեր հասարակական խմբերի գործողություններում: Արդյունքում՝ ոմանք մահանում էին դիմադրության ժամանակ, մյուսները՝ ոչնչացվում առանց դիմադրության: 1915թ. Ցեղասպանությունը վերը նշված աշխարհայացքի ու դրանից սերված գործողությունների աստվածացումն էր: Պետք է խոստովանել, որ նկարագրված աշխարհայացքն ինքնին ժողովրդի գոյությունը քաղաքական ցանկացած օբյեկտիվ փոփոխությունների պայմաններում դարձնում է անհնար: Այդպիսի փոփոխություններին ցանկացած արձագանք հանգեցնում է մահացու արդյունքի, քանի որ ժողովրդին դարձնում են խոչընդոտ եւ, համապատասխանաբար, միջազգային քաղաքական գործընթացների թիրախ:

Որտեղ է ելքը կեղծ համոզմունքներից: Անխուսափելի էր արդյոք 1915 թվականի Ցեղասպանությունը

Իսկ ինչո՞ւմ է կայանում կենսունակության եւ կենսակայունության մեկ այլ փիլիսոփայությունը: Պատասխանը նույնն է. Ինքնորոշման տեխնոլոգիայի տիրապետման մեջ: Ուրեմն՝ ինչպիսի՞ հանգամանքներ ու հարաբերություններ կարող է ստեղծել ինքնորոշման այս կամ այն ձեւը՝ իրերի ու երեւույթների օբյեկտիվ աշխարհի հետ փոխգործողությամբ: Տվյալ դեպքում մեզ, առաջին հերթին, հետաքրքրում են այն հանգամանքներն ու հարաբերությունները, որոնք օժանդակում են ինքնորոշված հանրությանը, մասնավորապես ինքնորոշվող սուբյեկտին Ուժ տվող ռազմավարական նպատակի իրականացմանը: Կրկնենք, որ քաղաքական աշխարհի հենց տվյալ դիտանկյունն է առավել դժվարճանաչելի, ինչը եւ Ինքնորոշման

ֆենոմենի նկատմամբ քամահրական վերաբերմունքի պատճառն է: Իսկ այդպիսի քամահրանքի արդյունքները միշտ աղետալի են:

Առաջադրված հարցի պատասխանը որոնելու լավագույն ուղին համառոտ անդրադարձն է Օսմանյան կայսրության անկման եւ հայոց ազգային աղետի (1915-20-ական թվականների Ցեղասպանության) ժամանակաշրջանին: Մեզ որոշակիորեն հետաքրքրում է հայ եւ թուրք ժողովուրդների ընտրության այս կամ այն ձեւը, որն ի զորու է ստեղծել ինքնորոշված հանրության նպատակների իրականացմանն օժանդակող *հանգամանքներ ու հարաբերություններ*: Այդ նպատակով բերենք Օսմանյան կայսրության անկման պայմաններում հայ ժողովրդի համար ծագած իրավիճակի երկու առավել բանական գնահատական: Նկարագրվող շրջանն ուշագրավ է նրանով, որ այն վերլուծելիս կարելի է խոսել ժողովրդի համար բախտորոշ բնույթ ունեցող խնդիրների մասին: Մասնավորապես՝հնարավորություն կա գնահատելու ժողովրդի վարքագծի բնույթը եւ նրա փաստացի արդյունքը:

Բերենք երկու մտահասու գնահատական: Քննարկվող թեմայի գիտակ, ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը հետեւյալ համընդհանուր բնութագիրն է տալիս [6] հայ ժողովրդի համար ծագած խնդրին ու դրա արդյունքի օրինաչափությանը:

«Հայոց ցեղասպանությունը զուտ քաղաքական ծրագիր էր՝ թելադրված Օսմանյան կայսրության կոնկրետ պետական շահերից: Բալկանյան ժողովուրդների ազատագրումից հետո Թուրքիայի համար պարզ դարձավ, որ եւս մեկ պատերազմ, եւ նա կորցնելու է նաեւ Հայաստանը: Դրանից խուսափելու միակ միջոցը հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջումն էր… Եվրոպական տերությունները իրավիճակի իրենց անհամաձայնեցված միջամտությամբ ուղղակի վտանգ ստեղծեցին հայ ժողովրդի ֆիզիկական գոյության համար… Դժվար է չխոստովանել, որ կենացմահու այդ պայքարում հայերն ի սկզբանե դատապարտված էին կործանման, մանավանդ որ՝ հայերի մոտ, ցավոք սրտի, ակնհայտորեն բացակայում էր այդ ծրագրի գոյության գիտակցությունն անգամ»:

Գործնականում նույն բնութագիրն է տալիս [7] հայտնի հայ գործիչ, նկարագրվող ժամանակաշրջանի վկա եւ ակտիվ մասնակից Շահան Նաթալին.

«Հայ-թուրք կռիւը անխուսափելի էր: ... Ինչ էր մեր կռիւին հիմքն ու սկզբունքը. – Ըլլալ ազատ մարդ, տէրը մեր քրտինքին, ապրիլ մեր պատիւով եւ զարգանալ ազգային արժէքներով: ... Թուրքը մեր միջոցներով չէր, որ պիտի ճանչնար մեր ուխտը: Մենէ առաջ շատեր՝ Յոյներ, Սերպեր, Բուլգարներ, Ռումէններ, նման ուխտով իջեր էին հրապարակ եւ հասեր էին իրենց նպատակին՝ ի վնաս թուրքին: ... Թուրքը ըմբռներ էր գոյութեան այս կռիւին իմաստը, որ իր գոյութեան վրայ անդրադարձեր էր իրեն համար ալ գոյութեան կռիւի ձեւով: ... Թուրքը Յոյն, Սերպ, Բուլգար, Ռումէն ժողովուրդներու ապստամբութիւններէն եւ ազատագրական պայքարներէն եթէ դուրս եկած էր հսկայ հողեր եւ միլիոններով ժողովուրդ կորսնցնելով, նաեւ սորված էր շատ բան: Ինչ էր սորված Թուրքը այդ բոլորէն: Շատ ահաւոր մէկ բան, որ իր յաղթանակին գլխաւոր զէնքը եղաւ հայ-թուրք կռիւին մէջ: ... Թուրքերը Թուրք ազգ ստեղծելու համար բռնեցին շիտակ ճամբան: ... քաղաքական կեանքի մէջ օրէնքն է ղեկավարողը: Սուլթան Համիտ հարիւր հազարով կոտորելով, շրջանները այլասերելով ու լեզուները փոխելով, իսկ նոր Թուրքերը միլիոնով կոտորելով եւ յաջորդական քայլերով ստեղծեցին Թուրք ազգը եւ ապացուցին, որ շատ աւելի լաւ գիտեն ազգ կերտելու գիտութիւնը: ... Օտարին մեղքն ու պատասխանատուութիւնը ժխտած չենք

ըլլալ երբեք, մեր աղէտներուն մէջ, եթէ կրկնենք ու երեքնենք, որ որքան շատ յոյս դնենք օտարին վրայ, ով կ'ուզէ ըլլայ այս օտարը, այնքան քիչ կ'ըլլայ մեր իրաւունքը օտարի պատասխանատուութեան մասին խօսելու եւ ընդհակառակը: Ահա այս շատ էական սկզբունքին մէջ է, որ Թուրքերը շատ աւելի խելացի են, քան Հայերը: Եւ այս սկզբունքի կիրարկումը եղած է անոնց յաղթանակին պատճառներէն մէկը, ինչպէս նաեւ մեր պարտութեան: Որովհետեւ ան, անկախ բոլոր ուրիշ աղաղակներէ, ոչ միայն արտաքին աշխարհի աչքին արժէք մը դարձուցեր է Թուրքը, այլ նաեւ կարող դարձուցեր է Թուրք արգանդը Մուսթաֆա Քէմալներ ծնելու»:

Վերը բերված երկու գնահատականները համընկնում են այն բանում, որ Օսմանյան կայսրության փլուզումն *անլուծելի* խնդիր է ստեղծել հայ ժողովրդի համար: Այսինքն՝ հաստատվում է, որ այն ժամանակ ստեղծված հանգամանքների ուժեղ ճնշման տակ ժողովրդի բնաջնջման փաստը կանխորոշված էր: Պատմագրության մեջ ներկայում եղած գնահատականները շատ քիչ են տարբերվում վերոբերյալից: Այդպիսի կարծիքի հեղինակների գլխավոր փաստարկը ստեղծված հանգամանքներն իմաստավորելու եւ, առավել եւս, ոչ միայն իր ֆիզիկական պահպանման, այլեւ որեւէ դրական ազգային ծրագրի իրագործման նպատակով ողջամիտ ընտրություն կատարելու համար հայ ժողովրդի մեջ բավականաչափ քաղաքական հատկանիշների բացակայության դրույթն է:

Մենք կարող ենք համաձայնել սոսկ այն փաստի հետ, որ նկարագրվող պատմության մեջ տեղի չունեցավ հայ ժողովրդի (ինչու չէ, նաեւ կայսրության բազմաթիվ այլ բնաջնջված հանրույթների) համընդհանուր ինքնորոշման այն արդյունավետ ձեւը (համընդհանուր ռազմավարորեն ճշտված ընտրության իմաստով), որը «իրերի ու երեւույթների օբյեկտիվ աշխարհի հետ փոխգործողությամբ կարող էր ստեղծել այնպիսի *հանգամանքներ եւ հարաբերություններ*, որոնք իրենցից ներկայացնում են տվյալ փոխգործողության արդյունքները»: Արդյունքներ, որոնք կարող էին կերտել պատմության այլ ընթացք»:

Միաժամանակ՝ բազմաթիվ տեղեկություններն ու ուսումնասիրությունները խոսում են այն մասին, որ հայ ժողովրդի առանձին հատվածներ եւ կառույցներ փորձում էին մշակել վարքագծի զանազան դիրքորոշումներ ու տիպօրինակներ՝ ունակ դիմակայել Օսմանյան կայսրության փլուզման պայմաններում ծնված ապակառուցողական երեւույթների եւ գործընթացների էքսպանսիային: Այդ դիրքորոշումների հետ կարճ ծանոթությունն ինքնին ունակ է պարզաբանել մեզ հետաքրքրող շատ հարցեր: Այդ դիրքորոշումները կարելի է բաժանել ըստ հետեւյալ գծապատկերի.

Ա. *Հայկական ուժերի համախոհությունը Օսմանյան սահմանադրությանը եւ երկրի ներքին բարենորոգչության ուղղությամբ թուրքական կուսակցությունների հետ համակարգված քաղաքականության վարումը:* Այստեղ ներգծվում է նաեւ հակումը բարեփոխումների օժանդակման գործում եվրոպական տերություններ բողոքարկելու գաղափարին: Այն միտքը, թե անհրաժեշտ է լինել օրինակելի քաղաքացիներ, յուրովի է համոզել բոլորին՝ դրանում դիտարկվում էր երաշխիք թուրքերի ագրեսիայից: Այդպիսի քաղաքականությունը հայկական Դաշնակցություն եւ Հնչակյան կուսակցությունների կողմից տարբեր կերպ էր անցկացվում ընդհուպ մինչեւ 1913 թվականը (աջակցելով մերթ երիտթուրքերի հակասուլթանական հեղաշրջմանը, մերթ ընդդիմության հեղաշրջմանը ընդդեմ երիտթուրքերի): Այդ ամենն ավարտվեց, երբ Իթթիհադ կուսակցությունը հերթական հեղաշրջումն իրականացրեց երկրում [8] եւ «օրեն-

քից դուրս» դրեց հայ ժողովրդին ու նրա կուսակցությունը: Հայերի համանման պահվածք է նկատվում Առաջին համաշխարհային պատերազմի սկզբնական շրջանում, երբ պահանջվում էր հայերի մասով կողմնորոշվել պատերազմի մասնակցության ձեւաչափում: Օսմանյան հայերը մասնակցել են 1914 թվականի զորահավաքին եւ համալրել օսմանյան բանակի շարքերը: Այդ դիրքորոշումը նպատակ էր հետապնդում պահպանել հայ-թուրքական համերաշխությունը եւ հեռացնել կառավարության կողմից հալածանքների սպառնալիքը [9];

Բ. *Հույսը ռուսաստանյան քաղաքականության եւ պատերազմում Օսմանյան կայսրության պարտության հետ կապելը:* Այս դիրքորոշման վառ արտահայտություն է 1913թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո Օսմանյան կայսրության տարածքում ակտիվ գործունեություն ծավալելու եւ Ռուսաստանի քաղաքականության ներքո տեղի ունեցող գործընթացներին մասնակցելու մասին Դաշնակցություն կուսակցության որոշումը: Նույն մոտեցման մեկ այլ արտահայտություն է Վանի 1915թ. փետրվարյան ապստամբությունը, որտեղ Ռուսաստանի ծրագրերի հետ էին առնչվում հաջողության հույսերը;

Գ. *Համախոհությունը ինքնապաշտպանության գաղափարին:* Տարբեր շրջաններում այդպիսի մոտեցումն իրեն դրսեւորել է անջատ ձեւով: Այդպիսի համախոհությունը, ավելի շուտ, քաղաքական գործընթացների առջեւ անզորության արդյունք էր՝ առանց քաղաքական նպատակի ինքնապաշտպանության իմաստն այդպես էլ անհասկանալի մնաց:

Բոլոր դեպքերում համընդհանուր քաղաքական ինքնորոշման գաղափարը որեւէ կերպ չդրսեւորեց իրեն: Անկախ պետություն հայտարարելու եւ կառուցելու գաղափարի մեջ ոչ ոք որեւիցե փրկարարական իմաստ չէր տեսնում: Ընդհակառակն՝ այդ գաղափարը միահամուռ մերժվեց նույնիսկ կուսակցությունների կողմից, որոնք ի սկզբանե այդպիսի նպատակ էին հետապնդում: Եթե նման գաղափար կար էլ, ապա այդպիսի պետություն ստանալու հնարավորությունը դիտարկվում էր բացառապես համաշխարհային տերությունների աջակցության գաղափարի շրջանակներում: Այսինքն՝ ոչ թե ինքնորոշման, այլ Օսմանյան կայսրության հանդեպ արտաքին հարկադրանքի միջոցով: Ապստամբության եւ ինքնապաշտպանության գաղափարները գոյություն ունեին եւ իրականացվում էին տեղայնորեն՝ քաղաքական ինքնորոշման գաղափարի հետ կապից դուրս: Արդյունքում ընտրության բոլոր ձեւերը եւ դրանց վրա հիմնված վարքագծի տիպօրինակները ոչ միայն չարդարացրին իրենց, այլեւ ժողովրդին անօգնական դարձրին [10] 1915 թվականին հայերին կոտորելու՝ թուրքերի հրեշավոր ծրագրերի առջեւ: Պետությունը բռնազավթած երիտթուրքերի կողմից «պետական դավաճանության» մեջ մեղադրվեց եւ ոչնչացվեց օրինապաշտ մի ողջ ժողովուրդ:

Ի սկզբանե արծարծելով տվյալ հոդվածում ինքնորոշման թեման, մենք մասնավորապես նպատակ ունեինք ցույց տալու Օսմանյան կայսրության փլուզման շրջանում հայ ժողովրդի ազգային աղետի էական պատճառը: Այդպիսի աղետն անդառնալի էր, քանի որ ազգային գիտակցության մեջ բացակայում էր քաղաքական ինքնորոշման գաղափարը: Ապստամբության մասին, տերությունների օգնության, ինքնապաշտպանության, կայսրության բռնի փլուզման արդյունքում հաջողության մասին հայերի զինանոցում եղած վերացական գաղափարները չէին կարող ձեռք բերել որեւէ դրական իմաստ, եթե չկար ինքնորոշման ճանապարհով ինքնիշխան ազգային գործոնի ձեւավորման գաղափարի բախտորոշ փրկարարական

իմաստի ըմբռնումը: ***Չկար ըմբռնումն այն իրողության, որ գոյություն ունեցող քաղաքական միավորի փլուզման պայմաններում ինքնապահպանման եւ քաղաքական կայացման միակ ունիվերսալ եղանակը ինքնորոշման ճանապարհով նոր քաղաքական ինքնիշխան միավորի ձեւավորումն է:*** Այդ «գաղտնիքը» հասկանալ վիճակված էր կայսրության միայն մեկ ժողովրդի՝ թուրքերին: Նրանք էլ կարողացան ոչ միայն դուրս գալ համատարած ճգնաժամից, այլեւ ստեղծել ազգ եւ պետություն: Իսկ հայկական քաղաքական միտքը նույնիսկ հաջորդ տասնամյակների ընթացքում չկարողացավ գիտակցել նշյալ հանգամանքը: Նույնիսկ, փորձելով հասկանալ Հայաստանի առաջին հանրապետության (1918-20թթ.) բազմաթիվ անհաջողությունների պատճառները, չէր գիտակցվում, որ հօգուտ գոյատեւման իրավունքներից հրաժարվելու սկզբունքը ցույց է տվել իր իսկական կործանարար էությունը: Ընդհակառակը՝ համոզմունք էր արմատավորվել, թե բոլոր կորուստները հետեւանք են այն բանի, որ հայերն ուզում էին առավելագույնը:

Եվ դա պատահական չէ. չորս հարյուր տարի զրկված լինելով քաղաքական գործունեության համար պայմաններից, օսմանյան հայերը չկարողացան յուրացնել քաղաքական ուժին տիրապետելու գաղտնիքները: Հետագա դատողություններում այդ տեսանկյանը մենք դեռ կանդրադառնանք:

Թուրքերի ինքնորոշումը

Որ թուրքերն ունեին այդպիսի քաղաքական աշխարհընկալում, կարելի է դատել այն գործողություններից, որ ցուցաբերեցին Առաջին համաշխարհային պատերազմում կրած պարտության հետեւանքով իրեց պատուհասած ազգային աղետից հետո: 1919-21թթ. Քեմալ Աթաթուրքի շարժման պատմությունը կարող է Ինքնորոշման դասական օրինակի ուսումնասիրման համար դառնալ նմուշային թեմա՝ ցուցադրելով, թե ինչպես կարելի է ստեղծել *հանգամանքներ եւ հարաբերություններ,* որոնք կարող են, ի հեճուկս ողջ աշխարհի, ծնել այլ ընթացք:

Օգտվելով բացառապես քրեստոմատիական տվյալներից [11], հակիրճ ներկայացնենք այդ գործողությունները՝ ուշադրությունը կենտրոնացնելով գլխավոր հարցի վրա. որտեղի՞ց է ի հայտ գալիս ուժի պաշարը (ինչպես է ծնվում ուժը) ժողովրդի ինքնորոշման ժամանակ:

Անտանտի զորքերի կողմից Կոստանդնուպոլի զավթումից (1918թ. նոյեմբեր) եւ լիակատար կապիտուլյացիայի ստորագրումից հետո հաղթանակած տերությունները ստիպեցին սուլթանին ձեռնամուխ լինել պլանաչափ զինաթափմանն ու օսմանյան բանակի կազմալուծմանը: 1918թ. դեկտեմբերին սուլթանը լուծարեց պատգամավորների պալատը, այնուհետեւ իշխանությունները փակեցին քաղաքական եւ հասարակական կազմակերպությունները, միություններն ու ակումբները, ինչպես նաեւ որոշ գիտալուսավորչական ընկերություններ, արգելեցին ցանկացած հանրահավաքների ու ժողովների անցկացումը, խստիվ գրաքննություն մտցրին մամուլում: Սեւծովյան նեղուցները եւ սուլթանի խամաճիկային կառավարությունը հայտնվեցին հաղթողների լիակատար վերահսկողության տակ: Ստամբուլի ոստիկանությունը եւ ժանդարմերիան անցան բրիտանացի գեներալի ենթակայությանը, որն օսմանյան մայրաքաղաքում միութենական կայազորի հրամանատարն էր:

Հետագայում կայսրության տարածքում տեղակայվեցին այլ պետությունների զորքեր: Բալկաններից այստեղ հարյուր հազարավոր փախստականների հոսքերի, ինչպես նաեւ լուծարված

բանակի զինվորներից առաջացած զինված ավազակախմբերի պատճառով երկիրը քաոսի մեջ էր: Տերությունները կայսրության լիակատար մասնատման ծրագրեր էին մտմտում: Ստեղծվել էր մի իրավիճակ, որի դեպքում թուրքերը կարող էին ասել. «աշխարհը մեր դեմ է»: Սակայն, ինչպես ցույց տվեց ժամանակը, թուրքերին դա քիչ էր հուզում: 1919թ. մայիսի 19-ին ազդեցիկ գեներալ Մուստաֆա Քեմալը՝ հրաժարվելով բանակի կազմալուծման ծրագրերից, որպես 9-րդ բանակի հրահանգիչ, ժամանել էր Սամսուն: 1919թ. հունիսի 22-ին Ամասիայում Քեմալը հրապարակեց մի շրջաբերական, որտեղ ասվում էր, որ երկրի անկախությունը վտանգի մեջ է, ինչպես նաեւ պատգամավորների գումարում հայտարարեց Սվազի կոնգրեսին:

1919թ. հուլիսի 8-ին Քեմալը ազատ արձակվեց օսմանյան բանակից: 1919թ. հուլիսի 23-ից մինչեւ օգոստոսի 7-ը Էրզրումում տեղի ունեցավ կայսրության արեւելյան վեց վիլայեթների համագումարը (*Erzurum Kongresi*), որին հաջորդեց սեպտեմբերի 4-11-ը անցկացված Սվազի կոնգրեսը: Մուստաֆա Քեմալը՝ ապահովելով այդ համաժողովների հրավիրումն ու աշխատանքը, այդպիսով սահմանեց «հայրենիքի փրկության» ուղիները: Սուլթանական կառավարությունը փորձեց հակադարձել դրան, եւ 1919թ. սեպտեմբերի 3-ին հրամանագիր արձակվեց Մուստաֆա Քեմալին ձերբակալելու մասին: Սակայն վերջինս արդեն բավականաչափ կողմնակիցներ ուներ հակազդելու համար այդ հրամանագրի կատարմանը: 1919թ. դեկտեմբերի 27-ին Մուստաֆա Քեմալին ցնծությամբ դիմավորեցին Անգորայի բնակիչները:

1920 թվականի հունվարի 12-ին Ստամբուլում տեղի ունեցավ պատգամավորների նորընտիր պալատի նստաշրջանի բացումը, որի տեղերի մեծամասնությունը Քեմալի կողմնակիցներն էին ստացել: Փետրվարի 23-ին մայրաքաղաքի ստուգայցում երեւաց բրիտանական նավատորմիկը, մարտի 2-ին հրաժարական տվեց կառավարությունը, իսկ մարտի 10-ին բրիտանական զինվորական իշխանությունները ձերբակալություններ սկսեցին առավել ակտիվ պատգամավոր-ազգայնականների շրջանում: 1920թ. մարտի 15-ի լույս 16-ի գիշերը բրիտանական ծովային հետեւակի ջոկատները գրավեցին բոլոր կառավարական շենքերը:

Օսմանյան խորհրդարանի լուծարումից հետո (1920թ. մարտի 16-ին) Քեմալը Անգորայում հրավիրեց սեփական խորհրդարանը՝ Թուրքիայի ազգային մեծ ժողովը (ԹԱՄԺ), որի առաջին նստաշրջանը բացվեց 1920թ. ապրիլի 29-ին: Քեմալն ինքը ընտրվեց խորհրդարանի նախագահ եւ Ազգային մեծ ժողովի կառավարության ղեկավար, որն այն ժամանակ չճանաչեց տերություններից եւ ոչ մեկը: Ապրիլի 29-ին ԹԱՄԺ-ն ընդունեց օրենք, որով մահվան կդատապարտվի ցանկացած ոք, ով կասկածեր նրա օրինավորությունը: Դրան ի պատասխան՝ Ստամբուլի սուլթանական կառավարությունը մայիսի 1-ին հրապարակեց Մուստաֆա Քեմալին եւ նրա կողմնակիցներին մահվան դատապարտող հրամանագիր:

Քեմալականների հիմնական անմիջական խնդիրը պայքարն էր հայերի դեմ՝ արեւելքում, հույների դեմ՝ արեւմուտքում, ինչպես նաեւ ընդդեմ Անտանտայի կողմից կայսրության տարածքի բռնազավթման եւ դե-ֆակտո պահպանվող կապիտուլյացիայի պայմանակարգի:

1920 թվականի հունիսի 7-ին Անգորայի կառավարությունն անվավեր հայտարարեց Օսմանյան կայսրության բոլոր նախկին պայմանագրերը: Բացի դրանից, ԹԱՄԺ-ի կառավարությունը հերքեց եւ վերջնարդյունքում, ռազմական գործողությունների ճանապարհով, տապալեց սուլթանական կառավա-

ության եւ Անտանտի երկրների միջեւ 1920թ. օգոստոսի 10-ին ստորագրված Սեւրի պայմանագրի վավերացումը, որը նրանք համարում էին անարդար կայսրության թուրք ազգաբնակչության նկատմամբ: Օգտվելով այն իրավիճակից, որ պայմանագրով նախատեսված միջազգային դատական մեխանիզմ չէր ստեղծված, քեմալականները բրիտանացի զինծառայողների թվից պատանդներ էին վերցնում եւ նրանց փոխանակում երիտթուրքական կառավարության անդամների ու այլ անձանց հետ, որոնք հայերին կանխամտածված ոչնչացնելու մեղադրանքով ներկալված էին Մալթայում:

Այսպիսով՝ անմիջականորեն բռնազավթումից ազատ տարածքում ստեղծվեց նոր անկախ իշխանության կենտրոն, որը հիմնադրեց իր օրենքը եւ օրենքից դուրս դրեց սուլթանի կապիտուլյացիոն պայմանակարգը: Այդ պայմանակարգին եւ զավթողական ուժերին հայտարարվեց պատերազմ: Աթաթուրքն անձամբ վերջնագիր նշանակեց Բրիտանիայի ներկայացուցիչներին՝ նրանց առաջարկելով հեռանալ կայսրության տարածքից:

Հասկանալի է, որ առաջին պահերին Աթաթուրքի գործողությունները կարող էին սոսկ քմծիծաղ առաջացնել բոլոր կողմերից: Բայց քմծիծաղել կարող էին միայն նրանք, ովքեր չէին հասկանում ինքնորոշման ուժը եւ ուժի աղբյուրը, որին տիրապետում է ինքնորոշվող սուբյեկտը: Իսկ այդպիսի ուժի աղբյուր դառնում է դիրքորոշումների եւ շահերի նոր դասավորությունը նոր ինքնիշխան սուբյեկտի շուրջ: Հնուց ասվում է, որ «Ինքն իրեն ստեղծող ոգին դրվում է աշխարհը կառավարող ուժերի ալիքի վրա»: Այսինքն՝ ինքնիշխան սուբյեկտը փոխում է արտաքին վերաբերմունքն իր նկատմամբ եւ ստանում էներգիա՝ ի պաշտպանություն իրեն: Ինքնիշխանությունը ծնում է անկախության եւ զարգացման երաշխիքներ: Աթաթուրքի շարժման առիթով արժե հակիրճ խոսել այդ մասին, քանի որ հատկապես դիտարկվող օրինակով ամենից ակնառուն է երեւում «Ինքնորոշման առեղծվածային ուժը»:

Աթաթուրքն անհապաղ ձեռնամուխ եղավ արտաքին ուժերի հետ հարաբերությունների կազմավորման խնդրին: Արտաքին քաղաքական հայեցակարգը բխում էր նախկին կայսրության ավերակների վրա ազգային անկախ պետություն ստեղծելու եւ քաղաքակիրթ աշխարհից մարդկային վերաբերմունք պահանջելու՝ նրա ձգտումներից: Անատոլիա ժամանելու առաջին իսկ օրերից նա պահանջ դրեց Թուրքիան ազատել իմպերիալիստական վերահսկողությունից: Սվազի կոնգրեսում Աթաթուրքը հանդես եկավ ընդդեմ ամերիկյան մանդատի՝ Թուրքիայի եւ Օտտոմական կայսրության մնացյալ տարածքների նկատմամբ:

Բայց սոսկ պահանջը քաղաքականությունում քիչ բան է նշանակում: Աթաթուրքը վարպետորեն հասկացավ շահերի հավասարակշռություն հասկացության եւ այդ շահերն իր օգտին փոխելու տեխնոլոգիայի իմաստը: Եվ դա աշխատեց արագ ու արդյունավետ: Տերությունները սկսեցին անջատ հանդիպումների ու գործարքների գնալ՝ ձեռք բերելով իրենց համար շահավետ պայմաններ՝ զենքի եւ փողի փոխանակմամբ: Առաջինը «ծակվեց» Իտալիան, եւ այդպես շարունակ:

1920 թվականի դեկտեմբերի 24-ին Աթաթուրքը ստորագրեց [12] Խորհրդային Ռուսաստանի հետ «Բարեկամության մասին նախնական պայմանագիր», որում Անտանտի ներխուժման դեմ պայքարի պայմաններով Ռուսաստանից զենք եւ փող ստանալու հավաստիացում կորզեց: Բացի դրանից, Ռուսաստանը պարտավորություն ստանձնեց չճանաչել ոչ մի պայմանագիր, որը չի արժանացել Թուրքիայի ազգային մեծ ժողովի հավանությանը:

Այդ շրջանում կիրառվող դիվանագիտական մեթոդներն ուղղված էին գլխավորապես արեւմտյան տերությունների միջեւ հակասությունների օգտագործմանը եւ, առաջին հերթին, Անգլիայի համար դժվարություններ ստեղծելուն: Աթաթուրքն օգտագործում էր Սեւրի պայմանագրից Ֆրանսիայի դժգոհությունը եւ Թուրքիայի ամբողջականությունը պահպանելու գործում ֆրանսիացի կապիտալիստների շահագրգռվածությունը: Արդյունքում լուծվեց գլխավոր խնդիրը՝ տերությունները հրաժարվեցին Անատոլիան մասնատելու ծրագրերից: 1922թ. հոկտեմբերի 11-ին օտտոմանյան Մուդանիա նավահանգստային քաղաքում ստորագրվեց հաշտություն քեմալականների եւ Անտանտայի միջեւ: Եվ այդպես շարունակ … Թշնամիներն առանձին վերցրած վերածվում էին «համախոհների» ու դաշնակիցների, իսկ նոր կառավարության ամբողջ եռանդն ուղղված էր, ինչպես ծրագրել էին, երկրի հետագա մաքրմանը «ոչ թուրքերից»՝ հայերից, հույներից եւ այլ ժողովուրդներից: Աթաթուրքին հաջողվեց նույնիսկ հասնել բնակչության փոխանակության՝ իր երկրի եւ Հունաստանի միջեւ:

Ով ինչում հմուտ է

Սույն հոդվածի նպատակների համար Թուրքիայում նոր պետականության կայացման գործընթացի հետագա նկարագրությունն արդեն հրատապ չէ: «Հրեշը», որը նկատի ուներ Շահան Նաթալին, կայացավ բարձր նոտայի վրա: Ամբողջ մնացածը ժամանակի գործ էր: Այս հոդվածի նպատակների համար հետաքրքրություն է ներկայացնում մեկ այլ հանգամանք. հայերի աչքերի առջեւ տեղի ունեցած՝ նոր Թուրքիայի ինքնորոշման գործընթացը բոլորովին չգիտակցվեց հայ քաղաքական գործիչների կողմից: Հայկական քաղաքական միտքը մնացել էր ավանդական պատկերացումների շրջանակներում: Դարձյալ բոլոր դատողություններն ամբողջ տարիներ հանգում էին նրան, թե ում հետ գործ ունենալ՝ Ռուսաստանի՞, Անգլիայի՞, թե՞ Աթաթուրքի: Այսինքն՝ ո՞ւմ նախագծերում է նպատակահարմար ներգրվել: Միտքը, թե ինքնորոշման միջոցով ինքնիշխան ազգային ռազմավարությամբ զինվելը կարող է լրջորեն ազդել ցանկացած տերությունների դիրքորոշումների ու գործողությունների վրա՝ ձեւավորելով ինքնիշխան սուբյեկտի շուրջ ուժերի հավասարակշռություն, այդպես էլ չարմատավորվեց նույնիսկ «բախտի կամոք» առաջացած Հայկական առաջին հանրապետության քաղաքական ընտրախավի գիտակցության մեջ: Չկար նույնիսկ այն ըմբռնումը, որ 1918թ. Անդրկովկասյան սեյմի փլուզումից հետո առաջին գործը պետք է լինի Հայաստանի անկախության մասին հռչակագրի ընդունումը՝ նրա ռազմավարական նպատակների, տարածքի եւ այլնի հստակ սահմանումներով [13]: Իսկ արդեն այն բանի ըմբռնումը, թե ինչպես է ինքնիշխանությունը ստեղծում ուժի եւ անկախության պաշար, առհասարակ չկար: Ուժը եւ պաշտպանվածությունը տեսնում էին արտաքին հովանավորության մեջ:

Հատկանշական է, որ իրավունքի եւ ուժի պարզ փիլիսոփայությունն անհասանելի էր մնում նույնիսկ վերը հիշատակված Շահան Նաթալիի համար: Դրա հաստատումն են վերջինիս խոսքերը [14], թե՝ «Քաղաքական առումով ազգը եւ հայրենիքը նշանակում է բնակչության միասեռ մեծամասնություն որոշակի տարածքում: Ամբողջ մնացածը էությունը չի փոխում: … Մեր սխալն այն էր, որ մենք դա չենք տեսել, մենք թուրքի հետ չենք կռվել նրա մեթոդով ու նրա զենքով, եւ դա մեր մեղսակցությունն է մեր ժողովրդի բուն ֆիզիկական գոյության նկատմամբ: Հենց դրա համար, մեր կարծիքով, Հայաստանի հայացումն ավելի մեծ նշանակություն ունի, քան հայկական պետականության հռչակումը»:

Ըմբռնումը, որ այն ամենի հիմքում, ինչը նա նկատի ունի, ընկած է հենց ինքնիշխանությունը, այլ ոչ թե թուրքական մեթոդի պատճենումը, ի հայտ չեկավ անգամ տարիներ անց: Պարզ ճշմարտությունն այն է, որ ազգային մեծամասնությունը չի կարող հայտնվել ինքնիշխան ռազմավարություն չունեցող տարածքում: Թշնամաբար տրամադրված իշխանության կենտրոնի դեմ կարող է պայքարել միայն ինքնորոշմամբ կազմավորված իշխանության նոր կենտրոնը: Իսկ ամբողջ մնացածն առաջանում է անխուսափելի կանոնավոր պատերազմի եւ իրենց ազգային իշխանության ռազմաքաղաքական վերահսկողության տակ անցած ժողովուրդների զուգընթացական զտման արդյունքում: Աթաթուրքը բոլորին ցույց տվեց, թե ինչպես է դա արվում: Շատ տասնամյակներ անց նույնը մենք տեսանք Ադրբեջանի եւ Լեռնային Ղարաբաղի միջեւ:

Վերադառնանք այն հարցին, թե ինչու Օսմանյան կայսրության այլ ժողովուրդներ չկարողացան գալ այդպիսի քաղաքական պրակտիկայի: Չէ որ ստուգապես հայտնի է, որ 1839թ. Թանզիմաթը (իրավական բարեփոխումներ) պետական քաղաքականություն հայտարարելու պահից սկսած՝ կայսրության քրիստոնյա ժողովուրդները կարճ ժամանակաընթացքում մեծ հաջողությունների հասան մշակութային եւ սոցիալ-տնտեսական կյանքում: Կարելի է նույնիսկ պնդել, որ օսմանահպատակների ընդհանուր միջավայրում թուրքերն աստիճանաբար լուսանցք էին մղվում: Կայսրության բոլոր ժողովուրդների իրավունքների հավասարեցումը խթանում էր հատկապես ոչ թուրք ժողովուրդների զարգացումը: Մինչ այդ, բոլոր իրավունքները, առաջին հերթին, զենք կրելու եւ ձի թամբելու իրավունքը միայն օսման-մահմեդականներն ունեին: Իսկ 1876 թվականի Սահմանադրության ընդունումը քրիստոնյա ժողովուրդներին թույլ տվեց ուժեղ դիրքեր զբաղեցնել կայսրության քաղաքական կյանքում (պատահական չէ, որ սուլթանն արագ չեղարկեց Սահմանադրությունը):

Բայցեւայնպես՝ Օսմանյան կայսրությունում քրիստոնյա ժողովուրդների գրեթե 400-ամյա իրավազուրկ բնակությունը չէր կարող քաղաքական մտածողության հմտություններից չզրկել ամբողջ սերունդների: Հիմնված լինելով իրավունքների անհավասարության սկզբունքի վրա, կայսերական կյանքը օսման-քրիստոնյաների բազմաթիվ սերունդների դուրս է դրել քաղաքական գաղափարների եւ պրակտիկայի ոլորտից: Կայսրության փլուզման շրջանում տվյալ հանգամանքը ճակատագրական դեր էր խաղացել այդ ժողովուրդների համար: Նրանց տրված չէր հասկանալ, որ իրենց սպառած քաղաքական համակարգերի փլուզման ժամանակաշրջաններում կա կենսապահովման միայն մեկ եղանակ՝ ինքնորոշման միջոցով ինքնիշխան սուբյեկտի կազմավորումը: Դա տրված էր հասկանալ Անատոլիայի միայն մեկ ժողովրդի՝ թուրքերին: Նրանք էլ ստացան պետություն՝ հետագա ուժեղ դաշնակիցներով հանդերձ: Հայերը նույնպես կարող էին ստանալ, եթե 1913 թվականին երիտթուրքերի կողմից իշխանությունը բռնազավթելուց հետո ինքնորոշվեին եւ հայտարարեին Արեւմտյան Հայաստանում սեփական պետությունը ստեղծելու մասին: Բռնազավթիչների իշխանության դեմ գործել կարող է իշխանության միայն նոր կենտրոնը: Բոլոր տերությունները կդառնային ինքնորոշված այդ սուբյեկտի դաշնակիցները՝ նրանց համար Օսմանյան կայսրության փլուզման ծրագրերի առումով ավելի լավ գործոն այն ժամանակ չկար: Աթաթուրքի շարժման հաջորդ փորձը դարձավ իշխանության Նոր կենտրոն հասկացության բախտորոշ իմաստի վառ ապացույցը: Չգիտակցելով այդ ամենը, հայկական Դաշնակցություն եւ Հնչակյան կուսակ-

ցությունները տեղայնացրել էին իրենց գործողությունները համաօսմանական հիմնախնդիրների շրջանակներում՝ անզորություն դրսեւորելով ստեղծված իրավիճակի դեմհանդիման:

Դրա համար կային օբյեկտիվ պատճառներ: Հոգեբանական իմաստով հայերը շարունակում էին մնալ օսմանահպատակներ, որոնց ժամանակն ու դերը արդեն անցել էր: Չնայած կայսրությունում ապակառուցողական երեւույթների խորացման փաստին, 1890-ականների կեսից սկսած՝ թուրքերի ու հայերի միջեւ քաղաքական եւ քաղաքակրթական սահմանազատում տեղի չէր ունեցել: Մինչ թուրքերը նպատակամիտված կերպով իրագործում էին պետության բռնազավթման ուղեգիծ, հայ քաղաքական գործիչները երկրում սահմանադրական կարգի հաստատման գաղափարներ էին մտմտում:

Չնայած օսմանյան հայերի ճակատագրում նշանակալի դեր էին խաղում Ռուսաստանի գավառական գործիչներ, հայկական կուսակցությունների սկզբնավորման շրջանում դրանց քաղաքական գաղափարախոսությունների ու քաղաքական պրակտիկայի ձեւավորման համար գաղափարական պաշարամիջոցը օսմանահպատակության աշխարհայացքն էր: Համաձայնողականությունը՝ որպես կենսապահովման տեխնոլոգիա, կարող էր ծնունդ տալ կղերաբուրժուական շրջանակների քաղաքական փիլիսոփայությանը, այն դեպքում, երբ որպես հեղափոխական շերտերի հիմք, կարող էր դառնալ սոսկ ապստամբական տրամադրությունների քաղաքականացում: Անիմաստ է ենթադրել, թե քաղաքական մտածողության այդ երկու տեսակները կարող էին ողջամիտ քաղաքական աշխարհընկալում ստեղծել: Կարելի էր սոսկ ակնկալել անվերջանալի մի բանավեճ, որտեղ այդ երկու ճամբարների գաղափարակիրներն ազգային դավաճանության մեջ մեղադրում էին միմյանց: Այլ բան չէր էլ կարող լինել այնպիսի պայմաններում, երբ քաղաքական մտածողության մեջ բացակայում էր ինքնորոշման փիլիսոփայությունը՝ ցանկացած ողջամիտ քաղաքական աշխարհընկալման գաղափարական հենքը: Ո՛չ օսմանյան, ո՛չ ռուսական գավառներում հայերը նման կատեգորիաներով չէին մտածում:

Ինչ ունենք մենք այսօր

Այժմ պարզ է դառնում, թե ինչպես է 20-րդ դարասկզբի պատմությունը դետերմինացրել հաջորդ սերունդների հայերի քաղաքական աշխարհայացքը: Հայկական սփյուռքին դուրս թողնենք մեր դատողությունների համատեքստից: Ավելի կարեւորն այն է, որ 1991թ. Խորհրդային միության փլուզման եւ Հայաստանի Հանրապետության ի հայտ գալու պահից երկրում միանգամից հարություն առավ պատմության խնդիրների շուրջ դարավոր բանավեճը: Նորահայտ Հայոց համազգային շարժում (ՀՀՇ) կառավարող կուսակցությունը ձեւակերպեց մի դիսկուրս, որտեղ ՀՅԴ կուսակցության կողմից երկրում ծավալված բանավեճը խլացրեց քաղաքականության մասին բոլոր մնացյալ խոսակցությունները: ԽՍՀՄ-ի փլուզման իրողությունները պրոյեկցվեցին 20-րդ դարասկզբին Օսմանյան եւ Ռուսական կայսրությունների փլուզման իրողությունների վրա: Այդ դիսկուրսում քաղաքական աշխարհը Հայաստանի նոր քաղաքական ընտրախավի համար տեղայնացվեց հայ-թուրքական հարաբերությունների հիմնախնդրի շրջանակներում: Պատմական խնդիրների բեռն իրեն զգալ տվեց ոչ միայն քաղաքական բարդ իրողություններում (հայ ժողովրդի անջատվածություն, Արցախի հիմնախնդիր), այլեւ ներկա սերնդի հայերի աշխարհընկալման համակարգում: Եվ դա չէր կարող չանդրադառնալ նոր Հայաս-

տանի Հանրապետության ձեւավորվող քաղաքականության բնույթի վրա:

Ըստ էության, ՀՀՇ-ն եւ ՀՅԴ-ն բանավիճելու բան չունեին ոչ պատմության թեմայով, ոչ՝ արդիականության. երկուսն էլ միեւնույն աշխարհընկալման եւ միեւնույն համախտանիշի կրողներն էին: Ինքնորոշման բախտորոշ իմաստի հասկացություն չուներ նրանցից եւ ոչ մեկը, թեպետ երկու ուժերն էլ սկզբնապես ներգրավված էին Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման կապակցությամբ ռազմաքաղաքական գործընթացներում: Այսինքն՝ ապրում էին մի կյանքով, որի էությունը չէին գիտակցում: Ձեւավորվող պետական քաղաքականության մեջ «Ինքնիշխանություն՝ ինքնորոշմամբ» հասկացությունը փոխարինվել էր «Անկախություն արտաքին աշխարհի հետ համաձայնությամբ» դրույթով: Գործում էին՝ քննախույզ նայելով տերություններին: Արդյունքում, ինչպես նշվեց վերը, Հայաստանի Հանրապետության եւ Արցախի Հանրապետության իրավաքաղաքական իրողությունները ստացան վտանգավոր խեղաթյուրումներ՝ բազում որոշումների պատճառով, որոնք ընդունվել էին ի նպաստ իրավունքներից հրաժարվելու սկզբունքի:

Բայցեւայնպես՝ հայ ժողովրդի 1990-ական թվականների պատմությունն ակամա դուրս եկավ «պատմական ստատուս-քվո»-ի շրջանակից: Հայերի քաղաքական կյանքում իրեն դրսեւորեց ինքնորոշման ֆենոմենը, որի մասին արժե առանձին խոսել: Դա տեղի ունեցավ մի իրավիճակում, երբ Խորհրդային միությունը դուրս էր եկել քաղաքական մրրկայնության գոտի:

Արցախի հայերի ինքնորոշումը եւ համազգային արձագանքը

Լեռնային Ղարաբաղում (Արցախում) ինքնորոշման ալգորիթմը եւ այդ ռազմավարության մեջ Հայաստանի ներգրավվելը հետեւյալ տեսքն ունի. 1985 թվականին Խորհրդային միությունում նոր պետական գաղափարախոսություն հայտարարվեց Վերակառուցումը: Հասարակական կյանքում հռչակվեց հրապարակայնության քաղաքականություն՝ զանգվածային լրատվամիջոցներում գրաքննության մեղմացում եւ արգելքների վերացում այնպիսի թեմաներ քննարկելիս, որոնք նախկինում լռության էին մատնվում, առաջին հերթին՝ ստալինյան բռնաճնշումները:

1987 թվականին Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի (ԼՂԻՄ) բնակչությունը հանրագրի ներքո ստորագրահավաք էր սկսել, որով ԽՍՀՄ կենտրոնական իշխանություններից պահանջում էր մարզը վերամիավորել Հայաստանի հետ: 1988-ի փետրվարի 11-12-ին սկիզբ առան ԼՂԻՄ-ում Ադրբեջանի իշխանությունների բռնաճնշումները, որոնց հիմնական նպատակը տեղական եւ մարզային իշխանությունների կողմից մարզի բնակչության պահանջները դատապարտող համապատասխան փաստաթղթերի ստորագրումն էր: Մարզում բողոքի հուժկու ալիք բարձրացավ՝ զանգվածային հանրահավաքների տեսքով:

1988 թվականի փետրվարի 20-ին ԼՂԻՄ մարզային խորհուրդը պաշտպանեց ժողովրդի պահանջը եւ ընդունեց ԼՂԻՄ-ը Հայաստանի հետ վերամիավորելու խնդրանքով ԽՍՀՄ իշխանություններին ուղղված դիմում:

1988 թվականի փետրվարի 21-ին ԽՄԿԿ Կենտկոմն ընդունեց որոշում, որում ԼՂԻՄ բնակիչների պահանջը գնահատեց որպես Հայաստանի եւ Ադրբեջանի եղբայրական ժողովուրդների շահերին հակասող: Երեւանում եւ Ստեփանակերտում տեղի ունեցող հանրահավաքները ձեռք էին բերում աննախադեպ ծավալներ: Ժողովուրդն անցել էր անհնազանդության մարտավարության: Սկսվել էր համակարգող կառույցների

ձեւավորումը: 1988-ի մարտին Հայաստանում գումարվեց «Ղարաբաղ» կոմիտեի հիմնադիր համագումարը: Նույն օրը Ստեփանակերտում ձեւավորվեց «Կռունկ» կոմիտեն, որին անդամագրվեցին մի քանի տասնյակ ակտիվիստներ՝ այդ թվում կոմունիստական նոմենկլատուրայի թվից:

Ադրբեջանը սկսեց բռնաճնշումներ գործադրել հայ բնակչության դեմ: Սումգայիթ քաղաքում տեղի ունեցավ հայերի կոտորածների ու ջարդերի առաջին գործողությունը: 1988 թվականի մարտի 26-ին ԽՍՀՄ ներքին զորքերը մտան Ստեփանակերտ եւ Երեւան: Հայտարարվեց պարետային ժամ: «Կռունկ» եւ «Ղարաբաղ» կոմիտեների գործունեությունն արգելվեց:

Բայցեւայնպես՝ խաղաղ անհնազանդության շարժումն ուժ էր հավաքում: 1988 թվականի հունիսի 15-ին Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանը որոշում կայացրեց ԼՂԻՄ-ը Հայաստանի կազմ ընդունելու համաձայնության մասին եւ այդ հարցը քննարկելու խնդրանքով դիմեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդին:

1988 թվականի հուլիսի 12-ին ժողովրդական պատգամավորների ԼՂԻՄ մարզային խորհրդի նստաշրջանն ընդունեց որոշում ԼՂԻՄ-ը Ադրբեջանի կազմից միակողմանի դուրս բերելու մասին: Սակայն 1988-ի հուլիսի 18-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը քննարկեց Ղարաբաղի հիմնախնդիրը եւ աննպատակահարմար համարեց Հայաստանի հետ ԼՂԻՄ-ի վերամիավորման մասին պահանջը: Նորից Երեւան մտան ԽՍՀՄ Ներքին գործերի նախարարության զորքերը: Բայցեւայնպես՝ ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունները ԼՂԻՄ-ը դուրս բերեցին Ադրբեջանի ենթակայությունից՝ մարզն առնելով անմիջապես իր ենթակայության տակ: 1989 թվականի հունվարի 12-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի (ԳԽ) նախագահության հրամանագրով ԼՂԻՄ-ում մտցվեց կառավարման հատուկ ձեւ եւ կազմավորվեց հատուկ կառավարման կոմիտե (ՀԿԿ): Հրամանագրով դադարեցվեց ժողովրդական պատգամավորների ԼՂԻՄ մարզային խորհրդի եւ ԽՄԿԿ Լեռնային Ղարաբաղի մարզկոմի գործունեությունը:

1989 թվականի օգոստոսի 16-ին ԼՂԻՄ բոլոր աստիճանների պատգամավորների համագումարը կազմավորվեց Ազգային խորհուրդ՝ օժտելով նրան Սահմանադրության եւ ԽՍՀՄ գործող օրենքների հիման վրա մարզը ղեկավարելու լիազորություններով:

1989 թվականի նոյեմբերի 28-ին Հատուկ կառավարման կոմիտեն լուծարվեց: Նրա փոխարեն ստեղծվեց Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմին ենթակա Կազմակերպական կոմիտե (Կազմկոմիտե): Կազմկոմիտեին առընթեր ստեղծվեց Արտակարգ դրության շրջանի պարետություն: Հայտարարվեց արտակարգ դրության ռեժիմ: Մարզում հաստատվեց բռնաճնշիչ օկուպացիոն պայմանակարգ:

Խաղաղ անհնազանդության ռազմավարությունը նոր ծավալ ստացավ: 1989 թվականի դեկտեմբերի 1-ին Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի եւ Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի համատեղ նստաշրջանում ընդունվեց որոշում Հայկական ԽՍՀ-ի եւ Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին: Ուղենշվեց միավորված հայկական պետություն ստեղծելու գիծ: Այսինքն՝ ինքնորոշման գործընթացն ավելի լայն թափ ստացավ՝ տեղափոխվելով Հայաստան:

1990 թվականի մայիսի 20-ին Հայաստանում տեղի ունեցան Գերագույն խորհրդի ընտրությունները: ԼՂԻՄ տարածքում ընտրությունները տեղի ունեցան 12 օկրուգներից 10-ում՝ արտակարգ դրության ռեժիմի պայմաններում: Հայաստանի կոմունիստական կուսակցությունը հեռացվեց իշխանությու-

նից՝հաղթեց ժողովրդական շարժումը՝ ի դեմս նորաստեղծ Հայոց համազգային շարժում կուսակցության: 1990 թվականի օգոստոսի 23-ին, հիմնվելով «Հայկական ԽՍՀ-ի եւ Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին» Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի եւ Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի 1989թ. դեկտեմբերի 1-ի համատեղ որոշման վրա, Հայաստանի նոր խորհրդարանն ընդունեց Հռչակագիր [15] անկախ պետականության հաստատման գործընթացի սկիզբը հռչակելու մասին: Երկիրը վերանվանվեց Հայաստանի Հանրապետություն:

1989թ. վերջից մինչեւ 1991թ. կեսերն ընկած ժամանակաշրջանում օկուպացիոն պայմանակարգը ԼՂԻՄ-ում ապօրինի կերպով ամբողջովին լուծարեց պետական եւ հասարակական կառույցները՝այդպիսով վարելով մարզի բնակչության մեկուսացման ու ճնշումների բացահայտ ուղեգիծ [16]: Այդ քաղաքականության գագաթնակետը դարձավ հայկական գյուղերի գաղթեցումը ինչպես ԼՂԻՄ սահմաններում, այնպես էլ հարակից տարածքներում: 1991թ. ապրիլի 30-ից մինչեւ մայիսի 16-ն ընկած ժամանակաշրջանում խորհրդային բանակի ստորաբաժանումների եւ ադրբեջանական ոստիկանության ուժերով գաղթեցվեց 24 գյուղ:

Արցախում զինված դիմադրություն սկսվեց: Այստեղ ձեւավորված ջոկատներին միացան Հայաստանից եկած կամավորականներ: Սակայն տվյալ ժամանակաշրջանը բնութագրվում էր իբրեւ Երեւանի եւ Ստեփանակերտի իշխանությունների քաղաքական դիրքորոշումների սահմանազատման սկիզբ: Սկսեցին ի հայտ գալ Արցախում կազմավորվող ռազմական դիմադրությունից պաշտոնական Երեւանի բացեիբաց սահմանազատման միտումներ [17]: Արցախում զինված դիմադրության ուղեգծին աջակցում էր Դաշնակցություն կուսակցությունը, որն այդ ժամանակ արդեն հիմնավորվել եւ իր գործունեությունն էր ծավալել Երեւանում: Իսկ ինքը՝ պաշտոնական Երեւանը, ավելի հակված էր զերծ պահել Հայաստանի Հանրապետությունը Արցախի գործողությունների համար բացահայտ իրավաքաղաքական (առաջին հերթին՝ իրավաբանական) պատասխանատվությունից: Ժամանակի ընթացքում նման դիրքորոշումը վերածվեց կայուն քաղաքական գծի: Բացի դրանից, քաղաքական առօրյա մտավ Ադրբեջանի հետ բանակցությունների անհրաժեշտության գաղափարը:

Թվում էր՝ Հայաստանի իշխանությունների դիրքորոշումն ինչ-որ պահի սկսել էր ձեւավորել ինքնուրույն քաղաքական օրակարգ: 1991թ. հուլիսի 20-ին տեղի ունեցավ ԼՂԻՄ պատվիրակության մեկնումը Բաքու եւ հանդիպումը Ադրբեջանի նախագահ Ա.Մութալիբովի հետ: Արդեն 1991թ. օգոստոսի 8-ին Ստեփանակերտում, շրջանների ու քաղաքի ղեկավարների մասնակցությամբ մարզգործկոմում տեղի ունեցած խորհրդակցությունում, հնարավոր էր համարվում Ադրբեջանի նախագահի սեպտեմբերի 8-ի ընտրություններին մարզի բնակչության մասնակցությունը, եթե բավարարվեն որոշ պայմաններ, առաջին հերթին, վերականգնվեն ԼՂԻՄ իշխանական կառույցները:

Սակայն այդ ուղեգիծը ոչ ոքի կողմից, բացի խորհրդակցության մասնակիցներից, չընդունվեց: Արցախում զինված պայքար սկսվեց տեղահանված գյուղերի ազատագրման համար: Այդ պայքարը համընկավ Խորհրդային միության փլուզման ժամանակաշրջանի հետ: Արցախում օկուպացիոն ռեժիմի դեմ զինված դիմադրությունը ընդլայնվեց եւ ավելի ու ավելի ուղղվեց խորհրդային զորքերի դեմ: Օգոստոսի 14-ին Մարտակերտի շրջանի Հաթերք գյուղում տեղի ունեցավ հայկական զինված ջոկատների կողմից ԽՍՀՄ ՆԳՆ զորքերի զի-

նաթափումը: Սկսվեց ադրբեջանական ոստիկանական ջոկատների դուրսմղումը ԼՂՀ տարածքից:

Բայցեւայնպես՝ Հայաստանի Հանրապետության եւ ԼՂԻՄ-ի իրավաքաղաքական սահմանազատման ուղեգիծը գնալով խորանում էր: Այն բանից հետո, երբ Ադրբեջանը 1991 թվականի օգոստոսի 30-ին ընդունեց Ադրբեջանի Հանրապետության պետական անկախությունը վերականգնելու մասին Հռչակագիր (https://ria.ru/spravka/20110830/426282637.html), Հայաստանի իշխանությունների առաջարկով 1991թ. սեպտեմբերի 2-ին Ստեփանակերտում, ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների մարզխորհրդի եւ ժողովրդական պատգամավորների Շահումյանի շրջանային խորհրդի համատեղ նստաշրջանում, հռչակվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը (ԼՂՀ) [18]: Սեպտեմբերի 21-ին տեղի ունեցավ Հայաստանի անկախության հանրաքվեն, որին ԼՂՀ բնակչությունը չմասնակցեց: Այդուհանդերձ՝ Հայաստանի Հանրապետության անկախությունը հայտարարելիս նոր հռչակագիր չընդունվեց՝ 1991թ. սեպտեմբերի 23-ին Հայաստանի Գերագույն խորհուրդը հղում կատարեց 1990թ. օգոստոսի 23-ի Հռչակագրին, որտեղ Հայաստանի Հանրապետությունը հայտարարված է ԼՂԻՄ տարածքի հետ միասին:

Ամեն դեպքում Արցախի իրավաքաղաքական ինքնակազմակերպման հետագա գործընթացն առաջ գնաց առանձին ճանապարհով: 1991թ. նոյեմբերին ԼՂՀ ինքնապաշտպանության ջոկատների շտաբը վերջնագիր ներկայացրեց ԽՍՀՄ ՆԳՆ զորքերին՝ պահանջելով դուրս գալ ԼՂՀ տարածքից: Նոյեմբերի 6-ին Ստեփանակերտում արտակարգ դրության շրջանի պարետության սպայական ժողովն ընդունեց որոշում ԼՂՀ տարածքում ԽՍՀՄ ներքին զորքերի հետագա գտնվելու աննպատակահարմարության մասին: Մինչեւ ամսվա վերջը զորքերը դուրս բերվեցին: Նրանց հետ միասին ԼՂՀ տարածքը լքեց նաեւ Կազմկոմիտեն:

Նոյեմբերի 23-ին Ադրբեջանի Գերագույն խորհրդի նստաշրջանը լուծարեց Լեռնային Ղարաբաղի ինքնավարության կարգավիճակը: Նոյեմբերի 28-ին ԼՂԻՄ ինքնավարության կարգավիճակը լուծարելու մասին Ադրբեջանի ԳԽ որոշման կապակցությամբ տեղի ունեցավ ԼՂՀ ժողովրդական պատգամավորների խորհրդի նստաշրջանը: Ընդունվեցին ԼՂՀ-ում հանրաքվե անցկացնելու մասին որոշում, ինչպես նաեւ ընտրությունների մասին ժամանակավոր կանոնադրություն:

ԼՂՀ անկախության հանրաքվեն անցկացվեց 1991թ. դեկտեմբերի 10-ին՝ Ռուսաստանի, Ուկրաինայի եւ Բելառուսի նախագահների եռակողմ որոշմամբ Խորհրդային միության լուծարումից երկու օր անց: Սակայն հանրաքվեի հանդեպ Արցախում սկզբնական մոտեցումն ինքնին պետության կազմավորման հարցերում Հայաստանի Հանրապետության իշխանությունների զգալի անորոշության վառ վկայությունն է: Արցախին առաջարկվել էր քվեարկության դնել այսպիսի տեքստ. «Դուք ցանկանո՞ւմ եք արդյոք, որ Լեռնային Ղարաբաղը լինի նորացված Խորհրդային միության կազմում»: Այդ առաջարկությունը կարող է վկայել միայն ԽՍՀՄ ապամոնտաժման շրջանում Հայաստանի իշխանությունների լիակատար շփոթվածության մասին: Այդօրինակ առաջարկությունը չէր կարող անվստահություն եւ բողոք չառաջացնել Արցախում: Արդյունքում ամենավերջին օրը հարցի ձեւակերպումը փոխվեց (նույնիսկ քվեարկության համար շտապ տպագրվեցին նոր քվեաթերթիկներ), եւ հանրաքվեն անցավ ԼՂՀ անկախության հարցի վերաբերմամբ: Պայմաններ ստեղծվեցին ԼՂՀ Գերագույն խորհրդի ընտրությունների [19] անցկացման համար՝ անկախ պետականակերտման սկիզբը դրված էր:

ԼՂՀ անկախության մասին Հռչակագիրն [20] ընդունվեց ԼՂՀ Գերագույն խորհրդի 1992թ. հունվարի 6-ի առաջին նստաշրջանում: Հատկանշական է, որ դեկտեմբերի 21-ին Ալմաթի քաղաքում ստորագրելով Անկախ պետությունների միություն (ԱՊՀ) կազմավորելու մասին հռչակագիր, որտեղ ճանաչվում էր բոլոր մասնակից պետությունների ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը, Հայաստանի ղեկավարությունը հետագայում ձեռնպահ մնաց ԼՂՀ անկախությունը ճանաչելուց: ԼՂՀ-ի ճակատագիրը թողնվեց միջազգային հանրության դատին: Իսկ Հայաստանում եւ ԼՂՀ-ում պետական շինարարության հետագա գործընթացը գնաց միանգամայն այլ փիլիսոփայության հիմքի վրա: Դա գլխավորապես վերաբերում էր արտաքին գործոնի, մասնավորապես Ռուսաստանի հանդեպ հարաբերություններին:

ԽՍՀՄ փլուզման շրջանում Արցախում միութենական Կենտրոնի գործողությունները չէին կարող կասկածներ չառաջացնել նրա իրավահաջորդի՝ Ռուսաստանի նկատմամբ: ԼՂՀ Գերագույն խորհրդի նորընտիր առաջին նախագահ Արթուր Մկրտչյանը հրաժարվում էր Ռուսաստանի ղեկավարությանը «ներկայանալու» սեւեռուն առաջարկներից: Ինքնիշխան քաղաքականության արժեքն ի սկզբանե գիտակցվում էր օկուպացիայի եւ բռնաճնշումների տեւական մի շրջան վերապրած հանրապետությունում: Նույնիսկ կտրուկ բարդացել էին Հայաստանի ղեկավարության եւ Դաշնակցություն կուսակցության հետ ԼՂՀ նոր ղեկավարության հարաբերությունները: Պարզվեց, որ ԼՂՀ ինքնիշխան քաղաքականությունը շատերի մեջ ուժգին ջղաձգություն էր առաջ բերում: Բայց այդ քաղաքականության դրական պտուղները երեւան եկան անհապաղ՝ ԼՂՀ մայրաքաղաքում սկսեցին ժողովվել բարձրաստիճան անձինք ողջ աշխարհից: Երեք ամսվա ընթացքում Ստեփանակերտ Արթուր Մկրտչյանի հետ հանդիպման էին եկել Իրանի, Ռուսաստանի արտաքին գործերի նախարարները, Ֆրանսիայի ԱԳ փոխնախարարը, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի անձնական ներկայացուցիչը, ԵԱՀԿ պատվիրակությունը Իրժի Դինսբիրի գլխավորությամբ, «Կարմիր խաչի» միջազգային կոմիտեի խումբը:

Ինքնիշխան ուղեգիծը շարունակվեց նաեւ Ա.Մկրտչյանի ողբերգական մահվանից հետո: 1992 թվականի ապրիլի 22-ին ԼՂՀ ԳԽ նախագահությունը հայտարարեց ապրիլի 24-ին Մինվոդի քաղաքում հակամարտության կողմերի հանդիպում անցկացնելու ժամանակավրեպության մասին: Այն իրականանի օգտին Ռուսաստանի ԱԳ նախարարության միջնորդական առաջարկության փաստացի մերժում էր:

ԼՂՀ գործոնի ուժեղացումն ու ազդեցությունը շեշտակիորեն աճում էին պատերազմի մեծացող ծավալներին զուգընթաց: Մարտական գործողությունները դուրս էին եկել ԼՂՀ-ի հայտարարված տարածքի շրջանակներից: 1992 թվականի մայիսին ճեղքվեց շրջափակումը, իսկ հետո ԼՂՀ-ն ենթարկվեց ջախջախիչ հարվածի՝ կորցնելով Շահումյանի շրջանը եւ Մարտակերտի շրջանի մի մասը [21]: Այդուհանդերձ՝ 1993 թվականին սկսված՝ ԼՂՀ պաշտպանության ուժերի հարձակումներից հետո ադրբեջանական պետությունը քանդվեց: Քարվաճառի շրջանը կորցնելուց հետո [22] կործանվեցին բանակն ու այդ երկրի քաղաքական ղեկավարությունը: Բայց ամենազարմանալին ադրբեջանական հասարակության կործանման փաստն էր: Ադրբեջանական բնակչությունը կամավոր լքեց ԼՂՀ գրեթե բոլոր հարակից տարածքները՝ ոչ ոք ցանկություն չդրսեւորեց պաշտպանել նույնիսկ մարտական գործողություններից հեռու քաղաքներն ու շրջանները: Այստեղ ակնհայտորեն աշխատեց ադրբեջանական ժողովրդին հատուկ «պատմության վա-

խի» համախտանիշը՝ պատժի սպառնալիքի ձեւով: Յոթանասուն տարվա ընթացքում Արցախի նկատմամբ Ադրբեջանի ղեկավարության վարած ժողովրդագրական էքսպանսիայի եւ հալածանքների քաղաքականությունը չէր կարող ադրբեջանական բնակչության գիտակցության մեջ չծնել հատուցման վախ հայերի կողմից:

1994 թվականին ԼՂՀ-ի եւ նրան հարող տարածքներում ստեղծվել էր ռազմաքաղաքական մի գոյավիճակ կամ միավոր, որը միջազգային հանրության կողմից մինչ այժմ որակվում է իբրեւ Լեռնային Ղարաբաղում ստեղծված «ստատուս-քվո»: 1994 թվականի մայիսի 12-ին Ադրբեջանը ստիպված էր ստորագրել զինադադարի պայմանագիր, որտեղ ԼՂՀ-ն ճանաչվում է հակամարտության առանձին կողմ: Դիմակայության ողջ ընթացքում տեղի ունեցավ ազգաբնակչության խտրարարություն՝ ըստ էթնիկ սկզբունքի՝ հայ եւ ադրբեջանցի բնակիչներն անցան իրենց զինված ուժերի ու ազգային վարչակազմերի վերահսկողության տակ գտնվող տարածքներ:

Ինքնիշխանության հաղթարշավի վերջին գործողությունը հակամարտության գոտում Ռուսաստանի խաղաղարար ուժերի տեղադրումից ԼՂՀ ղեկավարության հրաժարվելն էր: Այդ որոշմանը նույնպես վիճակված էր կյանքի ուղի հարթել իր համար, քանի որ Հայաստանը կողմնակից էր տարածաշրջան արտաքին զորքեր մտցնելու գաղափարին: Այդուհանդերձ՝ արցախյան կողմին հաջողվեց 1994 թվականի օգոստոս-նոյեմբերին Ռուսաստանի ԱԳ նախարարության կազմակերպած հետպատերազմական եռակողմ բանակցություններում հասնել նման մտադրությունների տապալմանը: Այդ գործի հաջողության մեջ գլխավոր դեր խաղացին գաղտնի բանակցությունները ԼՂՀ-ի, ԵԱՀԿ-ի եւ Ադրբեջանի միջեւ, որոնք դեմ էին ռուսական զորքեր մտցնելուն, թեպետ Ռուսաստանն արդեն նախապես մանդատ էր ստացել ԵԱՀԿ-ից: Ռուսաստանն ու Հայաստանը այդ բանակցություններին չէին մասնակցում:

Այդ որոշումների վրա հիմնված ԼՂՀ գործողություններն ապահովեցին վերջինիս փաստացի միջազգային ճանաչումը՝ որպես հակամարտության առանձին կողմ, թույլ տվեցին ապրել արտաքին ուժերից ազատ, ինքնիշխան տարածքում, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության միջոցով ստանալ ժամանակակից սպառազինություն սեփական բանակը կազմավորելու համար: ԼՂՀ շուրջ ուժերի միջազգային հավասարակշռությունն ապահովում է այդ տարածքի անկախության բավարար մակարդակը եւ նրա պաշտպանությունը արտաքին թելադրանքից: Ավելին՝ միջազգային հանրությունը 1994թ. մայիսի 12-ի զինադադարի մասին եռակողմ պայմանագիրը ճանաչել է իբրեւ հանգուցային իրավաքաղաքական փաստաթուղթ, որը կարգավորում է հակամարտային իրավիճակի պարամետրերը: Հակամարտության կարգավորման առաջարկներում (այսպես կոչված՝ԵԱՀԿ Մինսկի խմբի Մադրիդյան սկզբունքները[23]) 2007 թվականին ճանաչվել էր նաեւ Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման իրավունքը՝ առանց սահմանափակումների հանրաքվե անցկացնելու միջոցով: Ինքնորոշման ապոթեոզը դարձավ ԼՂՀ Սահմանադրության [24] ընդունման փաստը 2006 թվականին:

Ամփոփում. ոչ այնքան մխիթարական եզրակացություն

Այսպիսով՝ ամփոփենք հոդվածում քննարկված գլխավոր գաղափարները: Վերջին 25 տարիների կյանքի իրողություններն ու հայ նոր քաղաքական ընտրանու աշխարհընկալումը գտնվել եւ շարունակում են գտնվել մշտական բախման մեջ: Այդ բախման էպիկենտրո-

նում հետեւյալ երկընտրանքն է. անկախության հասնել ինքնորոշման միջոցով (իրավունքների ձեռքբերում), կամ անկախության հասնել միջազգային համաձայնության միջոցով («դրսից» տրվող իրավունքներին հնազանդ): Ամբողջ այդ շրջանում հայկական պետականության անվտանգությունը կապվում էր ցանկացած այն իրավունքներից հրաժարվելու սկզբունքի հետ, որոնց վերաբերյալ չկա արտաքին աշխարհի համաձայնությունը [25]: Հայաստանի կողմից ԼՂՀ անկախության ճանաչումը մինչ օրս դիտարկվում է որպես հայ ժողովրդի անվտանգության սպառնալիք (ոտնձգություն աշխարհակարգի դեմ): Թե որքան խորն է այդ համոզմունքն արմատներ ձգել գիտակցության մեջ՝ վկայում է այն փաստը, որ նույնիսկ Ադրբեջանի պարտության խորապատկերին Հայաստանը ժամանակին ճիշտ չհամարեց ճանաչել ԼՂՀ անկախությունը: Ավելին՝ ջախջախված Ադրբեջանը 1993 թվականին ԱՊՀ ընդունվեց առանց Լեռնային Ղարաբաղի խնդրի վերաբերյալ որեւէ վերապահումների եւ պարտավորությունների: Իսկ ԼՂՀ տարածք ռուսական զորքերի մուտքը չթույլատրելու փաստի հենքին 1995-ին Հայաստանում ռուսական ռազմահանգրվանի կարգավիճակի օրինականացումն ընդհանրապես դժվարբացատրելի է: Հայաստանն ավելի ու ավելի խորն է ընկղմվում ռուսաստանյան քաղաքականության բավիղներում: Ադրբեջանի հետ Ռուսաստանի ռազմական համագործակցության վրա Հայաստանը ոչ մի ազդեցություն չունի:

Բայց ամեն ինչ հեշտ է բացատրել, եթե համաձայնվենք այս հոդվածի հիմնական գաղափարի հետ, այն է՝ հայերի քաղաքական գիտակցությունը հակված է մնում «պատմության վախի» թելադրանքին, որը ձեւավորում է աշխարհի աղճատված պատկերը: Պատկեր, որտեղ իրավունքներից հրաժարվելը նկատվում է որպես փրկության ուղի: Ընդ որում՝ վերջին քսանհինգ տարիների պատմությունը ոչ մի կերպ Ինքնորոշման եւ Ինքնիշխանության քաղաքական ուժի գաղափարը չդարձրեց համազգային համոզմունք: Դրա վկայությունն արդեն այն է, որ երկրի քաղաքական ընտրանու միջավայրում շարունակվում է բանավեճի առարկա մնալ ԼՂՀ ինքնիշխան տարածքը միջազգային հանության վերահսկողությանը փոխանցելու հնարավորության հարցը՝ ցայտուն մի օրինակ, թե ինչպես է ինքնիշխանությունից հրաժարվելը դիտարկվում իբրեւ անվտանգության ուժեղացման ուղի: Դրա արդյունքում 25 տարվա ընթացքում ձեւավորվեց հայ ժողովրդի վերահսկողությանը ենթակա մի տարածք, որի իրավունքը զգալի չափով պատկանում է այլ երկրների: ԼՂՀ-ի բոլոր իրավաբանական իրավունքները ճանաչվում են Ադրբեջանի օգտին, իսկ Հայաստանի անվտանգության համակարգը ինքնիշխանություն չունի որոշումներ կայացնելու հարցում: Ամենեւին պատահական չէ, որ Ադրբեջանի քաղաքականության առանցքային ուղղությունը ցայսօր մնում է «Լեռնային Ղարաբաղի դեմ օրինական կարգով ուժ կիրառելու մասին» դրույթը (ՄԱԿ-ի Կանոնադրության 51-րդ հոդվածի հղմամբ):Նույնքան էլ պատահական չէր 2016 թվականի ապրիլյան պատերազմը. Ադրբեջանը ցուցադրեց իր մտադրությունների լրջությունը: Աշխարհում տեղի ունեցող սրընթաց փոփոխությունների պայմաններում գործերի այսպիսի վիճակի վտանգավորությունը դժվար է գերագնահատել:

ՀՂՈՒՄՆԵՐ

[1] Ինքնորոշման իրավունքը ճանաչված է միջազգային հանրության կողմից: Հատկանշականն այն է, որ այդ ֆենոմենն ինքնին ինչ-որ մեկի ճանաչման կարիքը չունի՝ այն բոլորին ստիպում է հաշվի նստել իր հետ: Բայցեւայնպես՝ միջազգային հանրության կողմից ինքնորոշման իրավունքի դրական իմաստի գիտակցումը չափազանց կարեւոր է: Ինքնորոշման իրավունքի ճանաչման տեսությունը մեր հոդվածի համար հարմար դիտանկյունից տես՝ **Տիգրան Թորոսյան**, Կարծեցյալ հակասություն. տարածքային ամբողջականությունն, թե՞ ինքնորոշման իրավունք: http://www.globalaffairs.ru/number/n_9224

[2] Ինքնորոշման ֆենոմենի տվյալ բնորոշումն ավելի հաջող է թվում մեր հոդվածի նպատակների համար: Այդ բնորոշումը կարմիր թելի պես անցնելու է ամբողջ հոդվածի միջով՝ տվյալ հասկացության էությունը կոնկրետ օրինակներով բացահայտելու նպատակով: Տես՝ Ժողովրդի ինքնորոշումը որպես քաղաքականության եւ իրավունքի ֆենոմեն, http://elib.bsu.by/bitstream/123456789/29290/1/2001_1_JILIR_yevmenova_r.pdf

[3] «Խորհրդարանի նախագահ պրն Արարքցյանի հետ 1992թ. փետրվարի 18-ին հանդիպման ժամանակ պատվիրակությունը (ԼՂԻՄ-հեղ.) տեղեկացվեց առ այն, որ Լեռնային Ղարաբաղը Հայաստանին միացնելու մասին 1989թ. որոշումը կարճատեւ կյանք էր ունեցել եւ հետագա օրինական կիրառում չէր ստացել: Պրն Արարքցյանը նշեց նաեւ, որ **Հայաստանը լիազորություն չունի սահմանելու Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը, եւ նա մտադիր է ենթարկվել միջազգային իրավունքին»:** Նկարագրվող ժամանակաշրջանի որոշումների մասին հանգամանալից կարելի է կարդալ. Կ.Կալենչյան: Արցախի «ստատուս-քվո»-ի կազմավորման ակունքները եւ նրա փոփոխության հնարավորությունները http://acnis.am/index.php/activity/articles/476-230317

[4] Հավանաբար՝ Լեռնային Ղարաբաղում 2016 թվականի ապրիլյան պատերազմը նոր առիթ էր այդ պատկերացումների արդիականացման համար: Մեծ քաղաքականություն վերադարձած առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանն առաջարկեց ընդունել Մինսկի խմբի համանախագահների նախաձեռնությունը եւ ձեւափոխել ԼՂՀ տարածքի նկատմամբ ռազմաքաղաքական վերահսկողությունը:

Բնութագրելով Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման խնդիրը, Տեր-Պետրոսյանը 2017 թվականի խորհրդարանական ընտրությունների շրջանի իր մի քանի ելույթներում ձեւակերպել է հետեւյալ հայեցակարգը.

«Մենք Ադրբեջանի հետ խնդիր չունենք, մենք երկու վիճաբանող կողմեր ենք, որոնք ներկայացել են միջազգային ատյաններ՝ մեր խնդրի համար լուծում գտնելու: Հիմա ինչ լուծում տվեց այդ ատյանը՝ եւ Հայաստանը, ե՛ւ Ադրբեջանը պարտավոր են ենթարկվել: … Այս ծրագիրը կա՝ մեզնից անկախ: Խնդիրը մեր եւ Ադրբեջանի միջեւ չէ: Խնդիրը մեր եւ աշխարհակարգի միջեւ է»:

Խոսելով ադրբեջանական կողմի տարածքային զիջումներից, որոնց մասին ասված է սեղանին դրված բանակցային փաստաթղթերում, Տեր-Պետրոսյանը նկատել է. «Մենք այդ տարածքները հանձնում ենք միջազգային հանրությանը, Ադրբեջանն ինչքան ուզում է պահանջի՝ դա մեզ համար ոչ մի նշանակություն չունի: Մենք պարտավոր ենք ենթարկվել ՄԱԿ-ի եւ ԵԱՀԿ-ի պահանջին: … Ադրբեջանը չի սահմանելու Ղարաբաղի կարգավիճակը, Ղարաբաղի կարգավիճակը սահմանելու է Մինսկի խմբի համանախագահությունը: … Եթե Հայաստանը հենց այսօր վճռականորեն հայտարարի, որ պատրաստ է ստորագրել այդ փաստաթուղթը, ապա միջազգային հանրության ողջ ճնշումն ուղղվելու է Ադրբեջանի դեմ»: Հետագայում, նրա խոսքով, Ղարաբաղի տարածքի եւ Լաչինի միջանցքի նկատմամբ ոտնձգությունների դեպքում Հայաստանն արդեն օրինական կերպով կարող է միջամտել եւ կանխարգելել դրանք»:

Խաղաղություն, հաշտություն, բարիդրացիություն, http://ru.aravot.am/2016/12/18/229597/, https://ru.armeniasputnik.am/armenia/20170322/6767161/ter-petrosyan-prishlo-vremya-pogasit-karabahskij-pozhar.html

[5] Այդ իմաստով ուշագրավ է Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության հիմնադիրներից մեկի, նախագահի նախկին գլխավոր խորհրդատու Ժիրայր Լիպարիտյանի տեսակետը: Բնութագրելով Իսրայել պետության հաջող ազգային ռազմավարության փաստը, նա նշում է. «Իսրայելի պարագայում այդ հասկացության (ազգ-բանակ հայեցակարգի-*հեղ.*) գործնականացումն ունի հաջողության տարբեր պատճառներ: Դրանցից ամենակարեւորն այն էր, որ Իսրայելը կարողացավ ապահովել մի մեծ եւ ուժեղ պետության՝ ԱՄՆ-ի ամբողջական, գրեթե՝ անսակարկ ռազմական, քաղաքական, ֆինանսական եւ դիվանագիտական օժանդակությունը: Մենք չունենք նման պետություն մեր կողքին»:

Այսինքն՝ Լիպարիտյանը արմատապես մերժում է ինքնիշխան քաղաքականության իմաստը՝ չպատասխանելով հարցին, թե «իսկ ինչպե՞ս Իսրայելը կարողացավ այդպիսի վերաբերմունք ապահովել իր հանդեպ»: Այստեղ դրսեւորվում է այն վստահությունը, որ հաջողության տանող ուղին միայն տերությունների հովանավորությունն է (իրենց ցանկությամբ), ինչպես նաեւ տերությունների կամքին հլու-հնազանդ ենթարկվելը:

Ժիրայր Լիպարիտյան. Յուրաքանչյուր պետական գործչի համար կգա պատասխանատվություն վերցնելու պահը, http://www.aravot.am/2016/12/30/842291/

[6] Ելույթ՝ 1995 թվականի ապրիլի 21-ին Հայոց ցեղասպանության 80-ամյակին նվիրված միջազգային միջազգային գիտաժողովում http://www.ilur.am/news/view/28464.html

[7] Շահան Նաթալի, Թուրքերը եւ մենք (վերահրատարակվում) http://nzhdeh.narod.ru/Shahan_natali.htm

[8] Տարիներ անց իրենք՝ Դաշնակցության ներկայացուցիչներն էլ, զարմանում էին այն փաստի առնչությամբ, թե ինչու իրենց կուսակցության **օրինակելի** վարքը ոչ մի կերպ չազդեց հայ ժողովրդին բնաջնջելու՝ երիտթուրքերի ծրագրերի վրա: Օրինակ կարող են լինել Ռուբեն Տեր-Մինասյանի հետեւյալ խոսքերը. «Օսմանականության անունով հանդես եկած թուրքիզմի քաղաքականությունը ծայրաստիճան գրգռում ու զայրացնում էր պետության բոլոր բաղադրատարրերին, բացի հայերից եւ, հատկապես, ՀՅԴ-ից: Ե՛վ հայ ժողովուրդը, ե՛ւ նրա առավել ուժեղ՝ Դաշնակցություն կուսակցությունը անգնահատելի ծառայություն են մատուցել երիտթուրքերին թե՛ հեղափոխական շարժումների օրերին, թե՛ Սահմանադրության հրապարակման ու կիրարկման ժամանակ: Սակայն դրա փոխարեն հասկացան, որ իրենց դավաճանորեն մատնել են: Այդ մեծ ծառայությանն ի պատասխան՝ տեղ գտավ Ադանայի հայկական ջարդը: … Եվ, չնայած դրան, ՀՅԴ-ն որոշել էր հանգիստ մնալ եւ, նույնիսկ, իր ուժերի ներածին չափ ամրապնդել Սահմանադրությունը …» («Հայ-թուրքական կնճիռը», Կահիրե-1924, էջ 130

[9] Օսմանյան կայսրությունում հայկական կուսակցությունների գործունեության մասին հանգամանորեն կարելի է ծանոթանալ. Մերի Քոչար, Հայ-թուրքական հասարակական-քաղաքական հարաբերությունները եւ Հայկական հարցը XIX դարի վերջ – XX դարի սկիզբ ժամանակահատվածում, 1988, գլուխ IV, http://az-ar.narod.ru/me-ko_0.html

[10] Վերլուծելով ցեղասպանության հետ կապված հարցերը, Դաշնակցություն կուսակցության հայտնի գործիչ Կ.Սասունին հետագայում գրեց. «Կոստանդնուպոլսից մինչեւ Վան Դաշնակցություն կուսակցության անդամներն անդադար կրկնում եւ հրահանգում էին, որ մենք գտնվում ենք վտանգի դեմհանդիման, որ անհրաժեշտ է աշխատանք տանել ինքնապաշտպանության նախապատրաստվելու ուղղությամբ, անհրաժեշտ է խոհեմություն ցուցաբերել՝ դժբախտությունը ժողովրդից հեռացնելու համար: Չոհաբերեք ինքզինքն, եթե պետք է, միայն թույլ մի տվեք որեւիցե սադրանք: Այն պայմաններում մեր հնազանդությունը ոչ այլ ինչ էր, քան թշնամուն ձեռնտու ինքնաբացասում, որը նրան հնարավորություն է տալիս դյուրին իրականացնել հղացածը, իսկ պասիվ ինքնապաշտպանությունը ինքնախաբեություն է, կենդանի մնալու ապարդյուն ճիգեր: Այդ շրջանում Թուրքիայում ինքնապաշտպանության կազմակերպումը նշանակում էր ապստամբության կազմակերպում հերոսական Վանից մինչեւ Կիլիկիա … Չկար ապստամբության հոգեբանություն, չկար եւ այդ դեպքի համար նախապես մշակված ծրագիր: Հայերը եւ Դաշնակցություն կուսակցությունը պատրաստ

չէին այդպիսի միջոցառման: Դա էր պատճառը, որ երիտթուրքերը կարողացան իրենց տրամադրության տակ եղած ուժերով իրականացնել հայերի ցեղասպանությունը»: Սասունի Կ., Ապրիլյան կոտորածը քննադատական ակնոցի միջով, Բեյրութ, 1931, էջ 43

[11] Վիքիպեդիա, Աթաթուրք, Մուստաֆա Քեմալ, https://ru.wikipedia.org/wiki/Ататюрк,_Мустафа_Кемаль, https://ru.wikipedia.org/wiki/История_османского_Стамбула

[12] Քեմալը ռուսների օգնությամբ ավարտին էր հասցնում հայերի կոտորածները. Փաստաթղթեր http://www.lragir.am/index/arm/0/society/view/152174

[13] «Հռչակագրում, ելնելով քաղաքական եւ հոգեբանական որոշակի գործոններից, կոնկրետ չէր խոսվում անկախության մասին, սակայն դիվանագիտական միջոցներով ձեւակերպված միտքը, թե Հայկական ազգային խորհուրդն իրեն հայտարարեց հայկական գավառների վրա միակ իշխանություն, ինքնաբերաբար նշանակում էր Հայաստանի անկախության հռչակում»: Հայաստանի առաջին Հանրապետության անկախության Հռչակագիր, http://www.historyofarmenia.am/ru/Encyclopedia_of_armenian_history_HH_kazmavorumy_ev_ankaxutyan_hrchakumy

[14] Շահան Նաթալի, նույն տեղում, http://nzhdeh.narod.ru/Shahan_natali.htm

[15] Ամբողջական տեքստը տես՝ http://www.parliament.am/legislation.php?ID=2602&lang=rus&sel=show

[16] Մանրամասն այդ շրջանի իրադարձությունների մասին տես՝ Nagorno Karabagh: War and Politics (1990-1993). *War in Nagorno Karabagh and Domestic Conflict in the Armenian Society*, Manvel Sargsian, June, in Russian http://acnis.am/oldsite/old/publications/2010/Nagorno%20Karabagh%20-%20War%20and%20Politics%20(1990-1993).pdf

[17] Պաշտոնական Երեւանի նոր մոտեցումները բարդ ներքաղաքական գործընթացների շղթա ստեղծեցին ինչպես Արցախում, այնպես էլ բուն Երեւանում: 1991 թվականի մայիսի 6-ին Ստեփանակերտում ԼՂԻՄ լիազոր ներկայացուցիչների ժողովը հայտարարություն էր արել բանակցություններին եւ սահմանադրական կարգին հակվածության պատրաստակամության մասին (տեքստը՝ «Ռեսպուբլիկա Արմենիա» թերթում, №131 (173) от 18.07.91):

Ստեղծված իրավիճակը շիկացրել էր Հայաստանում ներքաղաքական դրությունը: Հուլիսի 11-ին «Ռեսպուբլիկա Արմենիա» թերթում հրապարակվեց «Լեռնային Ղարաբաղում հայ ժողովրդի պայքարը ազգային-ազատագրական շարժում ճանաչելու մասին Հայաստանի Գխ որոշման» նախագիծը: («Ռեսպուբլիկա Արմենիա», №126 (168), 11.07.91): Այդ նախագիծն առաջ էր քաշել Դաշնակցություն կուսակցությունը: ՀՀՇ կուսակցությունն առաջարկել էր «ԼՂԻՄ լիազոր ներկայացուցիչների քաղաքական նախաձեռնությանն աջակցելու մասին» իր նախաձեռնությունը:

Հուլիսի 15-ին Հայաստանի Գերագույն խորհրդի նստաշրջանում քննարկվեց երկու փաստաթուղթ. «Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության պայքարը ազգային-ազատագրական շարժում ճանաչելու մասին» եւ 1991 թվականի մայիսի 16-ի՝ «ԼՂԻՄ լիազոր ներկայացուցիչների քաղաքական նախաձեռնությունը»: 136 ձայնով ընդունվեց ԼՂԻՄ լիազոր ներկայացուցիչների քաղաքական նախաձեռնությանն աջակցելու մասին որոշումը (տեքստը՝ «Ռեսպուբլիկա Արմենիա» թերթում, №130 (172), 17.07.91): Սակայն նմանօրինակ որոշումը դժգոհության ալիք առաջ բերեց որոշ պատգամավորների եւ հասարակության մի մասի շրջանում: Հավանաբար՝ դա է պատճառը, որ հուլիսի 16-ին ԼՂԻՄ լիազոր ներկայացուցիչների քաղաքական նախաձեռնությանն աջակցելու մասին Հայաստանի Գխ որոշումը վերանայվեց հայտարարության տեսքով (ամբողջական տեքստը՝ «Ռեսպուբլիկա Արմենիա» թերթում, №131 (173), 18.07.91):

[18] ԼՂՀ-ի հռչակման մասին Հռչակագիր, http://www.nkr.am/ru/constitution/9/

[19] Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Լեռնային Ղարաբաղի ադրբեջանցի բնակչության դիրքորոշումը: Չնայած ընտրություններ անցկացնելիս ադրբեջանցիների համար քվոտաներ էին հատկացվում, նրանք հրաժարվում էին ընտրություններին մասնակցելուց՝ գերադասելով իրենց բնակության տարածքներում տեղակայել ադրբեջանա-

կան ոստիկանության ջոկատներ: Այդ մասին տես՝ Գնամ, թե՞ չգնալ Հռոմ, http://theanalyticon.com/?p=9080#more-9080

Ավելի վաղ, 1990 թվականի մայիսի 20-ին, ԼՂԻՄ-ում անցկացվել էին Հայաստանի Գերագույն խորհրդի ընտրությունները: ԼՂԻՄ-ում դրանք կայացան 12 օկրուգներից 10-ում՝ արտակարգ դրության ռեժիմի պայմաններում: Եվ այդ ժամանակ երկու օկրուգում ադրբեջանցիները հրաժարվել էին ընտրություններին մասնակցելուց:

[20] ԼՂՀ-ի անկախության մասին Հռչակագիր, http://www.president.nkr.am/ru/nkr/nkr2

[21] Տվյալ ժամանակաշրջանը եւս ի ցույց դրեց Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի նկատմամբ մոտեցումների լուրջ հակասության փաստը: 1992 թվականի հունիսի 13-ին Հայաստանի նախագահը հայտարարեց Լեռնային Ղարաբաղի պաշտպանության ուղղությամբ վճռական միջոցներ ձեռնարկելու մտադրությունների մասին: Բայց օրակարգում հայտնվեց արդեն մեկ այլ կարգախոս՝ ԼՂՀ-ն ճանաչելու պահանջ: Երեւանում Դաշնակցություն կուսակցությունը կազմակերպեց հանրահավաք Շահումյանի անկման կապակցությամբ, իսկ հունիսի 21-ին՝ զանգվածային հանրահավաք՝ ԼՂՀ-ի ճանաչման եւ կառավարության հրաժարականի պահանջներով:

Հունիսի 29-ին հայկական հեռուստատեսությամբ ունեցած ելույթում նախագահ Լ.Տեր-Պետրոսյանը ՀՅԴ ղեկավարությանը մեղադրեց Հայաստանում իրադրությունն ապակայունացնելու փորձերի եւ նրան պատերազմի մեջ ներքաշելու մտադրությունների համար: Սակայն կրքերը չհանդարտվեցին: Հունիսի 30-ին Երեւանում տեղի ունեցավ ընդդիմադիր «Ազգային դաշինք» կուսակցության առաջին հանրահավաքը: Առաջադրված էր Հայաստանի կողմից ԼՂՀ-ի ճանաչման կարգախոսը: Հունիսի 30-հուլիսի 1-ը Հայաստանի Գերագույն խորհրդի նստաշրջանը քննարկեց հարցը, բայց որոշում չընդունեց:

1992 թվականի հուլիսի 8-ին սկսվեց ՀՀ Գերագույն խորհրդի նստաշրջանը, որտեղ ԼՂՀ-ն ճանաչելու մասին հարցն օրակարգում ներառելը անհնարին համարելու կապակցությամբ ԳԽ նախագահ Բ.Արարքցյանը հրաժարական տվեց: Հրաժարականը չընդունվեց: ՀՀ Գերագույն խորհուրդն ընդունեց մի փաստաթուղթ, որում ամրագրվեց հետեւյալ ձեւակերպումը. «Համարել ՀՀ-ի համար անընդունելի ցանկացած միջազգային եւ միջպետական փաստաթուղթ, որում Լեռնային Ղարաբաղը նշված կլինի Ադրբեջանի կազմում»: Տես՝Nagorno Karabagh: War and Politics (1990-1993). *War in Nagorno Karabagh and Domestic Conflict in the Armenian Society*, Manvel Sargsian, June, in Russian http://acnis.am/oldsite/old/publications/2010/Nagorno%20Karabagh%20-%20War%20and%20Politics%20(1990-1993).pdf

[22] Հայաստանի ղեկավարության քաղաքական աշխարհընկալման լավ ցուցադրություն է Քարվաճառից հայկական զորքերի դուրսբերման անհրաժեշտության փաստարկումը նախագահ Լ.Տեր-Պետրոսյանի կողմից՝ 1993թ. հունիսի 14-ին Ստեփանակերտում ԼՂՀ ղեկավարության հետ կայացած հանդիպման ժամանակ: «...ցայսօր Ղարաբաղն ու Հայաստանը (չեմ անջատում իրարից) եթե պատերազմում էին Ադրբեջանի դեմ և հաջող, մերժման դեպքում պիտի պատրաստ լինել կռվելու ամբողջ աշխարհի դեմ: Չի կարելի ծաղրել միջազգային հանրությանը, որը պատասխան է պահանջում: Այսօր դուք պիտի ապացուցեք, որ իշխանություն եք: Մենք ձեռք ենք բերում կոնկրետ թշնամի՝ Թուրքիան չէ դա, Ադրբեջանը չէ, Իրանը չէ: Ռուսաստանն է: 300 տարվա հայ-ռուսական հարաբերությունների ընթացքում այսքան անկեղծ ու դաշնակցային չեն եղել մեր հարաբերությունները, որքան վերջին մեկուկես տարում՝ Ելցինի և Տեր-Պետրոսյանի շնորհիվ: Եթե Ղարաբաղն այսօր կա ու գոյություն ունի՝ միայն Ռուսաստանի շնորհիվ: Ռուսաստանն այսօր խաղաքարտի վրա է դրել իր հեղինակությունը: Խաղաքարտի վրա է նաև Ելցինի հեղինակությունը: Աստված չանի, որ ձեռք բերենք Ելցինի պես հիշաչար մարդու անբարյացակամությունը: 40 օր հետո փամփուշտը վերջանալու է: 7 օր հետո վերջանալու է մթերքը: Բաթումից Ելցինի խոստացած նավը հետ է դարձել: Եթե Հայաստանը երեք օր սոված մնաց, կարող եք պատկերացնել, թե ինչ կլինի»:

http://analyticon.do.am/ARCHIVE/N2-arch.pdf:

Փաստորեն՝իր երկրի անվտանգության ապահովման գործում սեփական գործոնի դերը բացառապես արտաքին ուժերի (տերությունների) հետ է կապվում: Նրանց հետ փոխհարաբերությունների որեւէ այլ ձեւ, բացի նրանց կամքը կատարելուց (այն էլ այդ դերի՝ իր սուբյեկտիվ ընկալմամբ), չի գտնվում: Այն ժամանակվանից անցած 25 տարիները ցույց տվեցին, որ արցախյան հիմնախնդրի շուրջ քաղաքական հարաբերությունների իրական պատկերը բոլորովին այլ է՝ ամեն ինչ վերջացավ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մեկ բանաձեւի ընդունմամբ, Քարվաճառում իրավիճակի պատասխանատուներն անվանվեցին «տեղական հայկական ուժեր»: Առանձնահատուկ պահանջներ Հայաստանի Հանրապետության նկատմամբ ոչ ոք չներկայացրեց: https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/N93/247/73/IMG/N9324773.pdf?OpenElement

[23] Մադրիդյան սկզբունքներ, ամբողջական տեքստը տես՝http://fmgnews.info/47286-madridskie-principy-polnyy-tekst.html

[24] http://www.nkr.am/ru/constitution/9/

[25] Խորհրդանշական երեւույթ դարձավ Հայաստանի նախագահի եւ նրա ամբողջ քաղաքական թիմի հրաժարականը 1998 թվականին: Անկախ այդ հրաժարականի պատճառներից, այն ժամանակաշրջանի ներքաղաքական փոփոխություններում իրեն դրսեւորում էր աշխարհայացքային ճգնաժամը: Նախագահ Լ.Տեր-Պետրոսյանն ինքը հրաժարականը բնութագրեց որպես «խաղաղության կուսակցության պարտություն»՝ նշելով, որ գործը հայկական պետականության կազմավորման ամենախորքային փիլիսոփայությանն է վերաբերում (տես՝ http://ru.a1plus.am/1282980.html):

Սակայն, իրականում, գործ ունեինք օբյեկտիվորեն ձեւավորվող ռազմաքաղաքական իրողությունների թելադրանքի ներքո պետական քաղաքականության «փլուզման» փաստի հետ: Ինչպես ցույց տվեց ժամանակը, Հայաստանի պետական քաղաքականությունը որակական ոչ մի փոփոխություն չկրեց: Իշխանության եկած նրա հակառակորդները (այսպես կոչված՝ «պատերազմի կուսակցությունը») բոլորովին հրաժարվեցին ինքնիշխան քաղաքականությունից՝ կտրուկ սահմանափակելով ինքնուրույն որոշումներ կայացնելու հարցում երկրի հնարավորությունը: Իսկ ԼՂՀ-ն ենթարկվեց Հայաստանի իշխանությունների քաղաքական աննախադեպ թելադրանքին՝ զրկվելով նույնիսկ հակամարտության կարգավորման բանակցություններին մասնակցելու իրավունքից: Նման թելադրանքը ինքնիշխան տարածքի ակտիվության զսպման միակ լծակը դարձավ ինչպես ներքաղաքական առումով, այնպես էլ միջազգային ոլորտում:

Манвел Саркисян

Сила самоопределения: *Был ли предопределен геноцид армян в Османской империи?*

В статье делается попытка обоснования универсальной причины успешности и безуспешности народов и государств в деле обеспечения своей жизнестойкости в периоды радикальных изменений мировых порядков. Как показывает история, многим не удается найти себя в таких условиях, что приводит к потерям и национальным катастрофам. А происходит это тогда, когда в национальном сознании полностью отсутствуют понятия, способные обеспечить жизнеспособные свойства народа. На примере глобальных событий периода первой мировой войны и периода распада СССР автор аргументирует утверждение о том, что данные *понятия* сводятся к сфере Самоопределения и Суверенитета. Делается вывод, что Суверенитет, сформированный Самоопределением, порождает источник и достаточный ресурс Силы нации, способный обеспечить ее жизнеспособность и жизнестойкость. В случае недопонимания народом глубинной сути этих понятий, любые его действия, направленные на поиск спасительной силы ведут его только по пути потерь. Этим же объясняются причины национальной катастрофы армян в период распада Османской и Российской империй.

Manvel Sargsyan

The Power of Self-Determination: Was the Genocide of Armenians in the Ottoman Empire Predetermined?

The author makes an attempt to substantiate the universal reason for being successful or unsuccessful by the peoples and states in ensuring their viability in the periods of radical changes in the world order. As history proves, many of them cannot find themselves in such conditions, which leads to losses and national catastrophes. And this happens when concepts that can provide viable properties of the peoples are completely absent from the national consciousness. With the examples of global events in the periods of the First World War and the collapse of the USSR, the author argues that these concepts refer to the issues of Self-Determination and Sovereignty. And a conclusion is made that Sovereignty, formed by Self-Determination, generates a source and sufficient resources for the Nation's Power, capable to ensure its vitality and sustainability. In the case of a misunderstanding by the Nation of the deep sense of these concepts, any of its actions aimed at finding a saving power lead the Nation along the path of losses. This also explains the causes of the national catastrophe of Armenians during the collapse of the Ottoman and Russian empires.

Տնտեսական անվտանգության եւ տնտեսության զարգացման խնդրի շուրջ

ՀԱՄԼԵՏ ՉԱՔԱՐՅԱՆ

Հումանիտար գիտությունների ռուսաստանյան ակադեմիայի ակադեմիկոս, պրոֆեսոր, լրագրողների միջազգային միության անդամ

Տնտեսական ուղղվածության իրավախախտումներն ու հանցագործությունները ցանկացած պետության տնտեսական անվտանգության ելակետային հիմքն են: ԱՊՀ երկրներում՝ այդ թվում Հայաստանում, «ստվերային» տնտեսության զարգացումն ուղեկցվում է ձեռնարկատիրության զանգվածային քրեականացմամբ, տնտեսական հանցագործությունների աճը պատնեշելու համապատասխան օրենսդրական ակտերի ուշացումներով: Մոտավոր հաշվարկներով՝ տնտեսության շուրջ կեսը այսօր մեզ մոտ ստվերում է:

Մեր երկիրը ճգնաժամից դուրս բերելու եւ կայուն առաջընթաց ապահովելու համար անհրաժեշտ է գոնե երկու ուղղություններով միաժամանակյա եւ արդյունավետ գործունեություն: Մի կողմից՝ միջոցառումներ պիտի իրականացվեն խոչընդոտներ հարուցելու երկրից անլեգալ արտահանման դեմ, այսինքն՝ արտաքին տնտեսական գործունեության նկատմամբ վերահսկողության ու կարգավորման ուղղությամբ, եւ մյուս կողմից՝ պայմաններ ստեղծվեն բարենպաստ ներդրումային միջավայրի՝ հայրենական ու արտասահմանյան կապիտալի ներհոսքի ու շրջանառության համար, որն էլ ենթադրում է հանրակարգային վերափոխումների անցկացում:

Անկախ փորձագետների հաշվարկներով, օրինակ, դրսից ԱՊՀ երկրներ՝ այդ թվում Հայաստան եկող արժութային միջոցների մի զգալի մասն անլեգալ պաշարներ են: Այստեղից էլ՝ անդրսահմանային հուսալի պատնեշի ստեղծման առաջնահերթությունը, իրավապահ կառույցների որոշիչ դերը:

Տնտեսական անվտանգության կարեւորագույն խնդիրն, անշուշտ, մեր երկրի տնտեսական շրջանառության դոլարացումն է, որի համար պահանջվում են հստակ վերլուծություններ՝ մեր արժույթի նկատմամբ դոլարի գերակայությունների պատճառը խորապես հասկանալու համար: Այդ պատճառներն են՝

ա) Բառի լայն իմաստով՝ ստվերային շրջանառության սպասարկում առկա դոլարների շրջանառությունը չի ֆիքսում՝ ի տարբերություն անկանխիկ դրամների եւ ինչ-որ չափով նույնիսկ կանխիկ դրամների, քանի որ դրանք, վերջին հաշվով, հարկ է լինում ստանալ բանկերի միջոցով:

– տնտեսական գործունեության մի մասի թաքցնելը հարկումից,

– էկոնոմիկայի լեգալ մասի ֆինանսական ցուցանիշների նվազեցում, երբ ծախսերը ֆիքսվում են հաշվետվություններում, իսկ եկամուտների մի մասը ստացվում է չվերահսկվող դոլարային ձեւով՝ տարբեր տեսակների, այդ

թվում աշխատավարձի մաս-մաս վճարում,

– ձեռնարկությունների կառավարիչների կողմից շահույթի մի մասի յուրացում՝ ի հաշիվ բաժնետերերից ձեռնարկության ստացած եկամուտների թաքցման,

– կապիտալների անլեգալ արտահանում (որի համար ՀՀ դրամը պիտանի չէ, քանի որ այն փոխարկելի արժույթ չէ):

բ) Եկամտաբերության եւ ռիսկի միջեւ լավագույն հարաբերակցության ձգտում ֆինանսական ներդրումների համար (ոչ միայն խոշոր ֆինանսական ընկերությունների, այլ նաեւ քաղաքացիների անձնական մանր խնայողությունների վերաբերմամբ):

– դոլարի դրամային փոխարժեքի աճ, որը դոլարով ներդրումների շահավետության վառ դրսեւորում է: Մեր երկրի բանկերում դոլարային ավանդները տոկոսային եկամուտ են բերում, իսկ դրամական ներդրումները ֆոնդային բորսաների միջոցով ավելի քիչ, նույնիսկ բացասական շահավետություն ունեն եւ խելամիտ այլընտրանք չեն դոլարներին,

– դոլարն այժմ էլ դիտվում է որպես առավել կայուն արժույթ, քան, ասենք. դրամը եւ ռուբլին, իսկ դոլարային ակտիվներն ավելի քիչ ռիսկային են, որը հենց նրա առավելություններից է, քանի որ նրա քանակական համապատասխան ցուցանիշները կանոնավոր չեն հրապարակվում, իսկ դրա անաչառ տեղեկատվության բացակայությունը հօգուտ դոլարի է, որն էլ սուբյեկտիվորեն բարձրացնում է նրա հուսալիության գնահատականը: Հայկական տնտեսության դոլարացման հիմքում ընկած դոլարի նշված օբյեկտիվ առավելություններն ավելացնում են մեր երկրի ֆինանսական համակարգի կազմակերպման արատները: Այսպիսով՝

– դոլարը ֆինանսական շուկայի առանձին հատվածներում լիարժեք հաշվարկային միջոց է (այն կարելի է դնել բանկում եւ տոկոսներ ստանալ, հաշվից հաշվին փոխանցել, վերցնել կամ տրամադրել դոլարային վարկ եւ այլն),

– արտաքին տնտեսական հաշվարկների ոլորտում դոլարը գործնականորեն մենաշնորհային դիրքեր ունի, քանի որ ինչպես Հայաստանի, այնպես էլ ԱՊՀ մյուս երկրների արտահանումները հիմնականում վճարվում են դոլարներով: Սա հենց կապիտալի արտահոսքի հիմնական կազմակերպչական նախադրյալներից է, մեր եւ մյուս երկրների արժույթների թուլացման նախադրյալը, քանի որ դրական վճարային հաշվեկշիռը դրանց նկատմամբ պահանջարկ չի ծնում: Ոչ պաշտոնական աղբյուրները վկայում են, որ այս տարի կտրուկ ավելացել է նաեւ Հայաստանից կապիտալի արտահոսքը: Միայն 2017թ. հունվար-մայիս ամիսներին, Հայաստանից 356 մլն 683 հազար դոլարի կապիտալի արտահոսք է եղել, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավել է 42.6 մլն դոլարով: Դոլարի զգալի մասը՝ 144 միլիոնը, գնացել է ՌԴ, իսկ 64.4 մլն-ը՝ ԱՄՆ: Սա օրինական ճանապարհով երկրից դուրս բերված գումարներն են, էլ չենք խոսում ապօրինի եղանակով Հայաստանից դուրս բերված գումարների մասին, որոնք շրջանառվում են օֆշորային գոտիներում:

Անշուշտ, նշված ձեռնարկները՝ ուղղված ապադոլարացմանը, պիտի վերացնեն ինչպես մեր եւ մյուս երկրների տնտեսության մեջ դոլարի լայնորեն օգտագործումը, այնպես էլ դրան նպաստող ֆինանսական համակարգի թերությունները: Ահա թե ինչու պիտի փոխվեն մեր օրենսդրության շատ դրույթներ՝ նկատի ունենալով տնտեսության ստվերային մասի ոչ փոքր ծավալները: Դրանք պիտի վերաբերեն թե՛ հարկային բարեփոխումներին, թե՛ վերահսկողական մեխանիզմների ուժեղացմանը՝ հատկապես հարկերից խուսափողների նկատմամբ պատժամիջոցների ուժեղացմանը, եւ թե՛

տնտեսական գործունեության որոշակի տեսակների վարման փաստերին:

Տնտեսական անվտանգությունը ազգային անվտանգության կոնկրետ տեսակ է եւ նրա հիմնական հայեցակարգային դրույթները պիտի որոշիչ դառնան նաեւ տնտեսական անվտանգության ապահովման համար: Ցավոք, այս իմաստով ամեն ինչ դեռեւս բանավեճերի եւ փնտրտուքների փուլում է:

Հասունացել է անվտանգության եւ մասնավորապես տնտեսական անվտանգության մասին նոր օրենքի ընդունման անհրաժեշտությունը, որը թույլ կտա միասնական իրավական մոտեցում որդեգրել ինչպես ազգային անվտանգության, այնպես էլ նրա առանձին տեսակների նկատմամբ:

Իրավական ոլորտում, ըստ իս, կարեւոր թերություն պիտի համարել նաեւ մանր բիզնեսում եւ մանր ու միջին ձեռնարկություններում տիրող իրավիճակը: Չնայած ընդունված օրենքին, դա համարյա ոչինչ չփոխեց ձեռնարկատերերի այս խավի դրության մեջ, քանի որ վերջիններս փաստացի պաշտպանված չեն ոչ պետական «ռեկետից» (կաշառք, շորթում, կոռուպցիա) եւ ոչ էլ կազմակերպված հանցագործությունների քրեական կառույցների կողմից գործադրվող բռնություններից:

Ներկա պայմաններում կարեւոր է նաեւ քաղաքացիների եկամուտների արդյունավետ վերահսկողությունը, եկամուտների վերաբերյալ հայտարարագրումը, որը համապատասխան մարմիններ պիտի ներկայացնեն չափահաս բոլոր քաղաքացիները: Դա, անշուշտ, կարող է նպաստել հասարակության սոցիալական կայունացմանը:

Ոչ պակաս կարեւոր է եւ այն, որ ինչքան մեզ է հայտնի, լիարժեք չի գործում «փողերի լվացման դեպքում քրեական պատասխանատվություն սահմանելու մասին օրենքը»: Մինչդեռ արեւմտաեվրոպական տարբեր երկրներում նման օրենքներ գործում են դեռ 90-ական թվականներից: Այդ երկրների միջեւ կնքված պայմանագրերի համաձայն, օրինակ, մյուս երկրի ներկայացմամբ բռնագրավվում են հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցները, կալանք է դրվում դրանց վրա, իսկ հարկ եղած դեպքում փոխում են ավանդների գաղտնիքը: Անհրաժեշտության դեպքում էլ պայմանագրի կողմ երկրներին տրամադրվում է անհրաժեշտ տեղեկատվություն: Այլ կերպ ասած՝ հրամայական է դարձել հիմնարար այնպիսի օրենքների ընդունումը, ինչպիսիք են «պետական գաղտնիքի մասին», «Առեւտրական գաղտնիքի մասին» եւ այլն:

Ուրեմն, տնտեսության բոլոր հատվածների եւ սեփականության բոլոր ձեւերի ձեռնարկությունների համար արդիական է դարձել մի կողմից պետական գաղտնիքների պաշտպանությունը դրանք տնօրինել ցանկացողներից, իսկ մյուս կողմից՝ պետական եւ առեւտրական գաղտնիքների միջեւ ճիշտ հարաբերակցությունը, դրանք թանկարժեք ու շահավետ ապրանքի վերածելու ցանկությունը: Ի դեպ, սխալված չենք լինի, եթե ասենք, որ առանձին օտարերկրյա ֆիրմաներ, ինչպես նաեւ համատեղ ձեռնարկություններ հենց ստեղծվում են օտարերկրյա հետախուզությունների կողմից արդյունաբերական լրտեսության խնդիրների լուծման նպատակով:

Տնտեսական աճի հեռանկարներն ընդհանուր առմամբ թուլացել են ամբողջ աշխարհում: Զարգացող եւ անցումային տնտեսություններ ունեցող երկրների տնտեսությունները բախվել են այնպիսի խոչընդոտների, ինչպիսիք են՝ զարգացած երկրների ցածր տնտեսական աճը, հիմնական ապրանքատեսակների գների ցածր մակարդակը, ինչպես նաեւ համաշխարհային առեւտրի դանդաղ վերականգնումն ու թույլ կապիտալ հոսքերը: Հումքային ապրանքատեսակներ արտահանող եւ ներմուծող երկր-

ների տնտեսական բնութագրիչները զգալիորեն տարբերվել են: Տնտեսական պայմանները շարունակում են խնդրահարույց մնալ հումքային ապրանքներ եւ/կամ նավթ արտահանող երկրներում, որտեղ միջոցառումներ են իրականացվում տնտեսության իրավիճակը ցածր գների միջավայրին համապատասխանեցնելու ուղղությամբ: Թեեւ հումքային ապրանքներ եւ նավթ ներկրող երկրները առավել բարենպաստ դիրքում են, այնուամենայնիվ, գների նվազման բացասական ազդեցությունը ապրանքներ եւ նավթ արտահանող երկրների տնտեսական զարգացումների վրա ավելի մեծ եւ շոշափելի են, քան դրա դրական ազդեցությունը ներմուծող երկրներում:

Չնայած համաշխարհային տնտեսական աճի որոշակի արագացմանը, առաջիկա տարիներին, այնուամենայնիվ, նվազման ուղղությամբ ռիսկերը կպահպանվեն: Դրանց թվում ընդգծված են զարգացած երկրներից սպասվածից դանդաղ տնտեսական վերականգնման, զարգացող երկրներից կապիտալի արտահոսքի եւ դրանից բխող ֆինանսական շուկաների, տատանողականության, Չինաստանի տնտեսության կառուցվածքային վերափոխման գործընթացից ածանցվող համաշխարհային պահանջարկի հավանական նվազման, զարգացող երկրներում եւ Ռուսաստանում տնտեսական հիմնախնդիրների ու դանդաղ աճի շարունակման եւ ամբողջ աշխարհում աշխարհաքաղաքական անորոշություններից բխող ռիսկերը[1]:

2016թ. «Բրենթ» տեսակի նավթի միջին կիսամյակային գինը կազմել է 40.3 ԱՄՆ դոլար/բարել (նախորդ տարի գրանցված նվազման միտումը պահպանվել է): Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ այն նվազել է 30.6%-ով: Թեեւ տարեսկզբից արձանագրվել է նավթի գների որոշակի աճ, այնուամենայնիվ, դրանք դեռեւս գտնվում են ցածր մակարդակի վրա, ինչին նպաստող գլխավոր գործոնը նավթի համաշխարհային առաջարկի ծավալների ու պաշարների զգալի ավելացումն է:

2016թ. առաջին կիսամյակում շարունակվել է պղնձի եւ մոլիբդենի գների նվազման միտումը. պղնձի միջին կիսամյակային գինը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել է 20.7%-ով՝ մեկ տոննայի դիմաց կազմելով 4698.8 ԱՄՆ դոլար: Մոլիբդենի միջին կիսամյակային գինը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 24.4%-ով՝ մեկ տոննայի դիմաց կազմելով 15.3 հազար ԱՄՆ դոլար:

Կարճաժամկետ հեռանկարում, այլ հավասար պայմաններում, գունավոր մետաղների միջազգային գները կշարունակեն պայմանավորվել զարգացող երկրների տնտեսության զարգացման միտումներով, եւ գների էական աճ չի արձանագրվի:

Կիսամյակի ընթացքում հացահատիկի միջազգային գինը նվազման միտում է ունեցել: 2016թ. հացահատիկի միջին կիսամյակային գինը կազմել է 5.3 ԱՄՆ դոլար/բուշել՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազելով 10.7%-ով: Կարճաժամկետ հեռանկարում ցորենի միջազգային շուկայում ակնկալվում է գնի նվազում՝ պայմանավորված ավելցուկային առաջարկով, սակայն միջնաժամկետ հատվածում ակնկալվում է գնի կայունացման միտում:

2016թ. ոսկու կիսամյակային միջին գինը կազմել է 1220.5 ԱՄՆ դոլար՝ մեկ տրոյական ունցիայի դիմաց (նախորդ տարվա համեմատ արձանագրվել է փոքր-ինչ աճ՝ 1.2%): Կարճաժամկետ հեռանկարում համաշխարհային տնտեսության վերականգնման կանխատես-

1 Միջազգային զարգացումների եւ կանխատեսումների համար հիմք է ծառայել IMF, World bank, Economist Intelligence unit, Financial times, Bloonberg, RBC, The institute of international finance եւ այլ աղբյուրների տեղեկատվությունը:

վող տեմպերի պայմաններում ոսկու գների կտրուկ տատանումներ չեն ակնկալվում:

Անցնենք մեր իրականությանն առնչվող խնդիրներին: Խնդրահարույցը, ըստ իս, մեր պետական պարտքի հարցն է, քանի որ այն արդեն գերազանցում է 6 մլրդ դոլարը, իսկ համախառն ներքին արդյունքը գնահատվում է 10 մլրդ դոլարից քիչ ավելի: Առաջիկա տարիներին էլ մենք ավելի մեծ գումարներ ենք հատկացնելու պարտքի սպասարկման վրա: գամ գերազանցում է ՀՆԱ-ի աճի տեմպին: Գծանկարից երեւում է նաեւ, որ 2013 թվականից սկսած՝ մեր ՀՆԱ-ն նվազում է, այսինքն՝ մենք տնտեսական անկում ենք ունենում, իսկ պետական պարտքի աճի տեմպն ավելի է արագանում:

Այսինքն՝ պարտքի մեծացումը չի բերում տնտեսական զարգացման: Մենք պարզապես նորանոր պարտքեր ենք ներգրավում: Ուշագրավ են նաեւ Հայաստան ուղարկվող մասնավոր տրանս-

ՀՀ ՀՆԱ-ն ևև պետական պարտքը



Վերը բերված գծապատկերում մուգ սյուներով ներկայացված է մեր ՀՆԱ-ն 2009-2016թթ.: Ինչպես տեսնում ենք, անցած 8 տարիներին մեր ՀՆԱ-ն դոլարով հաշվարկված՝ 8.7 միլիարդից աճել, դարձել է 10.3 միլիարդ դոլար: Աճը կազմել է 18 տոկոսից քիչ ավելի: Նույն գծապատկերում բաց գույնով ներկայացված է մեր պետական պարտքը, որը կայուն աճել է եւ 2009թ. գրանցված 3.1 միլիարդ դոլարից 2016թ. հասել է 5.9 միլիարդի: Այսինքն՝ գրեթե կրկնապատկվել է:

Այլ կերպ ասած՝ մեր պետական պարտքի աճի տեմպը ավելի քան 5 ան-

ֆերտների ծավալների վերաբերյալ տվյալները:

Խնդիրն այն է, որ մասնավոր տրանսֆերտների մեծագույն մասը՝ ավելի քան 80 տոկոսը, Հայաստան է գալիս ՌԴ-ից: Եվ այդ հոսքերը հիմնականում կախված են ՌԴ-ում տիրող ֆինանսատնտեսական վիճակից: Երբ տնտեսությունը Ռուսաստանում աշխույժ է, փող շատ կա, տրանսֆերտներն էլ աճում են: 2014 թվականից սկսած՝ ՌԴ տնտեսության վիճակը ծանր է: Եվ դա ուղղակիորեն արտացոլվում էր այդ երկրից Հայաստան ուղարկվող տրանսֆերտների ծավալների վրա. դրանք անկում էին ապ-

Մասնավոր տրանսֆերտների ծավալների համեմատությունը ամսական կտրվածքով



րում: Սակայն անցած տարվա դեկտեմբերին, նախորդ տարվա նույն ամսվա համեմատ, արձանագրվեց աննախադեպ աճ:

Այդ աճը որոշ տատանումներով պահպանվեց մինչեւ այս տարվա մարտ (տես գծապատկերը): Սակայն ապրիլին արձանագրվեց նույն միտումը, ինչ արձանագրվում էր 2014 թվականից սկսած՝ տրանսֆերտների ծավալը կրկին կտրուկ անկում ապրեց:

Ըստ ՀՀ կենտրոնական բանկի հրապարակած տեղեկանքի, այս տարվա մայիսին մասնավոր տրանսֆերտների տեսքով Հայաստան է մուտք գործել 68 միլիոն դոլար (զուտ ներհոսքը): Անցած տարվա մայիսին մասնավոր տրանսֆերտների զուտ ներհոսքը ընդամենը 42 միլիոնէր: Այսինքն՝ կրկին կտրուկ աճ է տեղի ունեցել:

Հիշարժան է ԵՏՄ-ին Հայաստանի անդամակցության հարցը: Հայաստանն այդպես էլ ԵՄ-ի հետ չկնքեց ասոցացման, ինչպես նաեւ խորը եւ համապարփակ ազատ առեւտրի համաձայնագիրը:

Հայաստանը բավական ինտենսիվ բանակցություններ էր վարում ԵՄ-ի հետ ասոցացման, ինչպես նաեւ խորը եւ համապարփակ ազատ առեւտրի համաձայնագրերի վերաբերյալ:

Ըստ ՀՀ ֆինանսների նախարար ՎարդանԱրամյանի, ԵՏՄ-ին չանդամակցելու դեպքոսմ շատ ավելի ցածր տնտեսական աճ կունենայինք: «Երբ կայունացավ Ռուսաստանի տնտեսությունը, մեր տնտեսվարողները հարմարվեցին նոր խաղի կանոններին, անմիջապես այնտեղ աճ գրանցվեց, եւ այս տեսանկյունից ես կարծում եմ, որ մենք ունենք դրական էֆեկտներ ԵՏՄ-ին անդամակցությունից»,– ասել է նա:

Կառավարությունը խոստանում է 5% տնտեսական աճ ապահովել, առաջիկա 5 տարիներին 25%-ով բարձրացնել նվազագույն աշխատավարձը, գործազրկությունը նվազեցնել մինչեւ 12%, լուրջ ուշադրություն դարձնել հակակոռուպցիոն բարեփոխումներին: Մի բան ակնհայտ է, որ այս փաստաթղթի վրա բավականին աշխատանք է տարված, եւ այն կոնկրետ ոլորտներում կոնկրետ անելիքներ է մատնանշում:

Դժվար է պատկերացնել, թե ինչպես է ապահովվելու ծրագրի իրականացումը, եթե Հայաստանում չեն փոխվել արդեն 20 տարի շարունակ գոյություն

ունեցող խաղի կանոնները, եւ կառավարությունն ինչպես է ապահովելու իր ծրագրի իրականացումը, եթե չեն վերացել տնտեսության զարգացմանը խոչընդոտող քաղաքական պատճառները՝ մենաշնորհները, կոռուպցիան, արդարադատության բացակայությունը, երբ չկան անկախ դատարաններ, Արցախյան հիմնախնդիրը, որն ամեն րոպե սպառնում է վերածվել պատերազմի, եւ այսպես շարունակ:

Իսկ զբաղվածության խնդրի վերաբերյալ որոշ տվյալներ է ներկայացրել ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը:

Մասնավորապես՝ անցած ողջ տարվա եւ այս տարվա առաջին եռամսյակում, մինչեւ անցած տարվա 3-րդ եռամսյակ զբաղվածության մակարդակը որոշակի աճ է ունեցել: Սակայն արդեն չորրորդ եռամսյակում եւ այս տարվա առաջին եռամսյակում այն անկում է գրանցել: Եթե անցած տարվա առաջին եռամսյակում զբաղվածության մակարդակը կազմել է 48.4 տոկոս, ապա այս տարվա նույն ժամանակահատվածում՝ 47.7 տոկոս: Այսինքն՝ նվազել է 0.7 տոկոսով:

Գործազրկության մակարդակն այս տարվա առաջին եռամսյակում աճել է եւ, ըստ ԱՎԾ-ի, կազմել է 19 տոկոս, իսկ անցած տարվա նույն ժամանակահատվածում՝ 18.3 տոկոս:

Բայց ակնհայտ է, որ գործազրկության աճը եւ զբաղվածության նվազումը չեն տեղավորվում ներկայացված մակրոտնտեսական ցացանիշների շրջանակներում: Ընդ որում, զբաղվածության մակարդակի նվազում արձանագրվում է այն ժամանակահատվածում, երբ ՀՀ պետեկամուտների կոմիտեի խստացված վարչարարության արդյունքում ստվերային աշխատողների թվի զգալի կրճատում է արձանագրվում:

Բայց ԱՎԾ-ի ներկայացրած ցուցանիշը ցույց է տալիս, որ եթե նույնիսկ նոր աշխատատեղեր իրոք ստեղծվել են, ապա ավելի մեծ թվով «հին» աշխատատեղեր են փակվել:

Հրապարակված տվյալների համաձայն, օրինակ, այս տարվա ապրիլին միջին ամսական անվանական աշխատավարձը անցած տարվա ապրիլի համեմատ աճել է ընդամենը 1 տոկոսով, ինչը չնչին աճ է, եւ էլ ավելի քիչ, քան Հայաստանում արձանագրված գնաճը: Իսկ այդ տարվա մարտի համեմատ միջին անվանական աշխատավարձը նվազել է 1.4 տոկոսով: Մայիսին միջին աշխատավարձը, անցած տարվա մայիսի համեմատ, աճել է 2.7 տոկոսով, սակայն առաջին հինգ ամիսներին գրանցված աճն ընդամենը 1.9 տոկոս է:

Ուրեմն, մի կողմից Հայաստանում աշխատատեղերը կրճատվում են, գործազրկությունն աճում է, աշխատավարձերի չնչին աճ է արձանագրվում, իսկ մյուս կողմից, խնդրեմ, արդյունաբերության 14 տոկոս աճ, առեւտրի շրջանառության՝ 12.8 տոկոս եւ արտահանման շուրջ 21 տոկոս աճեր:

Այսպիսով՝ տնտեսական անվտանգությունը ենթադրում է տնտեսական համակարգի անխափան գործունեություն, պետության դերի եւ նշանակության հստակեցում, ազգային մշակույթում տնտեսական դինամիզմի գերակայություն:

Իսկ գլոբալացման ներկա փուլում Հայաստանի հիմնական ազգային շահերին են վերաբերում.

– միջազգային համագործակցության հավասարաչափ զարգացում եւ ձեւավորված համաշխարհային տնտեսության մեջ արժանի տեղի որոշում.

– սահմանադրական կարգի եւ մեր պետության տարածքային ամբողջականության պահպանում՝ միջազգային ահաբեկչության աճող սպառնալիքի պայմաններում.

– երկրի տնտեսական, քաղաքական ու սոցիալական կայունության

պահպանում, ճգնաժամից դուրս գալու արդյունավետ միջոցառումների իրականացում.

– սահմանադրական իրավունքների եւ ազատությունների, անձնական անվտանգության, կյանքի մակարդակի ու որակի ապահովում երկրի տարածքում.

Սրան հավելենք, որ ներկայում մեր երկրի հզորությունն ու բարեկեցությունը, ուրեմն եւ ազգային անվտանգությունը որոշվում են նախեւառաջ տնտեսության վիճակով: Տնտեսական անվտանգության ապահովման խնդիրն անհրաժեշտաբար մղվում է առաջին պլան:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Միեր Շահգելդյան, Ազգային անվտանգություն հասկացությունը, էությունը, ձեւավորումը, առաջնահերթությունները, Երեւան 2003, 70 էջ
2. Գագիկ Գագյան, Տնտեսական զարգացման հիմնադրույթները Ազգային անվտանգության համատեքստում, Երեւան 2003, 68 էջ
3. Права человека и интересы национальной безопасности, М. 1999
4. Писарев В. Д., Глобальная стратегия устойчивого развития: опасные тенденции и превентивные меры России, М. 1999
5. Е. Хрусталев, В. Цымбал, Военная безопасность России: замысли и реалии // мировая экономика и международные отношения, 2001, №1, с. 34/41
6. ՀՀ պետական բանկի ընթացիկ հաշվետվությունները
7. ՀՀ ԱՎԾ-ի հրապարակած նյութերը:

Гамлет Закарян

Об экономической безопасности и развитии экономики

Автор анализирует вопросы, связанные с экономической безопасностью, некоторые неотложные аспекты экономического развития нашей страны, в частности, сокращение теневой экономики и долларизации экономического оборота и четкого понимания приоритетов доллара.

Автор делает акцент на недопустимости незаконно выведенных денег из страны, а также принятие нового закона об экономической безопасности и необходимости дальнейших законодательных реформ.

В разделе о чистой экономике основное внимание уделяется вопросам увеличения государственного долга страны, публикации информации об объемах частных трансфертов и ликвидации политических причин и монополий, которые препятствуют экономическому развитию, решению проблем занятости и неотложному созданию новых рабочих мест.

Автор также привлекает внимание на новую программу правительства РА.

Hamlet Zaqarian

On economic security and economy's development

The author analyzes the issues related to economic security and several urgent aspects of our country's economic development, in particular the reduction of the shadow economy and the dollarization of economic turnover and the clear understanding of the dollar's priorities.

The author puts emphasis on the impermissibility of illegally withdrawn money from the country, as well as the adoption of a new law on economic security and the need for further legislative reforms.

The section on net economy focuses on the issues of increasing the public debt of the country, publicizing the information on volumes of private transfers, eliminating political causes and monopolies that hinder the economic development, solving of employment problem and the creation of new jobs as soon as possible.

RA government's new program is also being discussed.

Միաբանությունն ինչ ենք անելու *(շարունակություն)*

ՄԵՐՈՒԺԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Երեւանի պետական համալսարանի դասախոս

Հեղինակի խնդրանքով հոդվածի լեզվաոճական եւ մատուցման ձեւի առանձնահատկությունները նույնությամբ պահպանված են

(Սկիզբը՝ նախորդ համարում)

13.3 ՍՊԱՐՏԱԿԱՆ ԱԶԳ-ԲԱՆԱԿԸ

Ազգ-բանակի առաջին ցայտուն օրինակը Սպարտան ա, հունական հին պետություններից մեկը, մ.թ.ա. VI-I դարերում, Հունաստանի Պելոպոնեսի հարավային մասում:

Չնայած իր գոյության վերջում Սպարտան դարձավ օլիգարխական, այսինքն՝ հողերի մեծ մասը օլիգարխներինն էր, բայց իր համարյա ողջ ընթացքում Սպարտայի հողը պետության սեփականությունն էր, բաժանված մոտ մի հեկտարանոց մասերի, ու տրված մենակ լիիրավ քաղաքացիներին՝ սպարտացիներին:

Սպարտացիները որեւէ տնտեսական գործունեությամբ զբաղվելու իրավունքը չունեին, ու սրանց հողերը մշակում էին կախյալ *հելոտները*, ովքեր համարյա ստրկական վիճակում էին: Կախյալ վիճակում էին, համ էլ ազատ, բայց քաղաքացիական իրավունքներից զուրկ *պերիոյկները*:

Սրանք Սպարտայի տեղաբնիկներն էին: Իրանք՝ սպարտացիները, էկվոր էին, ոնց որ էկվոր էին ողջ հույները ու թափառական հնդեվրոպացիները (վաղնջական ժողովուրդները բոլո՛րն էին քոչվոր):

Հույների իրեք ալիք ա էկե Հին Հունաստան: Վերջին ալիքը դորիացիներն էին, ովքեր համ էլ սպարտացիների նախնիներն էին:

Բուն Սպարտան Լակոնիկան էր, ինչը, ոնց որ ասվեց, Պելոպոնեսի հարավում էր:

Սպարտայի քաղաքական գերագույն օրգանը *ապելան* էր, այսինքն, ժողովրդական ժողովը, ինչը մշտական ռեֆերենդումի ու համ էլ դատարանի պես մի բան էր: Հիշենք, որ Սպարտայի քաղաքացիների թիվը (Սպարտայի ամենալավ վախտերը) մի իրեք-չորս տասնյակ հազար էր:

Սպարտային էրկու թագավոր (*բասիլեւս*) էր ղեկավարում, մեկը՝ Ագիսյանների, մյուսը Եվրիպոնտյանների տոհմից: Բասիլեւսները հիմնականում գլխավորում էին բանակը, ու համ էլ մի քանի պաշտամունքային ծիսական ֆունկցիա ունեին: Երբ սպարտական բանակն արշավանքի էր հելնում, բասիլեւսներից մեկը մնում էր Սպարտայում:

Բասիլեւսների իշխանությունը բավական սահմանափակ էր, ու կարեւոր վճիռները հանում էին *գերուսիայի* (ծերակույտի) անդամները, ովքեր ընտրվում էին նշանավոր տարեց սպարտացիներից: Ժողովրդական ժողովն ընտրում էր 5 հոգանոց *էփորների* կոլեգիան, ինչը բարձրագույն հսկիչ օրգանն էր:

Սպարտայում, դասական շրջանում, ներքին գործածության փող չկար, եթե չհաշվենք փողի տեղը գործածվող երկաթի հաստ ու երկար ձողերը, որոնցից շատ կուտակելը հնարավոր չէր:

Ոսկին ու թանկարժեք մետաղներն ու քարերը պետական մակարդակով արհամարհված էին:

Իհարկե՝ պետությունը փող ուներ, բայց էտ փողը գործածում էր մենակ արտաքին առեւտրի համար ու մեկ էլ՝ տալիս էր արշավանքի հելած զորավարներին կամ դեսպաններին: Երբ սրանք հետ էին դառնում հայրենիք, պտի իրանց մոտի ոսկե փողն ու թանկարժեք առարկաները հանձնեին պետությանը:

Մնվելու ու հագնվելու հարցերում սպարտացիներն ահավոր ժուժկալ էին:

Սպարտացիների էրեխեքը մասնավոր չէին, հանրային էին:

Տղաներին 7 տարեկանից վեկալում էին ծնողներից ու մինչեւ 20 տարեկանը պահում էին ռազմական հատուկ ջոկատներում, որտեղ սրանց ռազմական գործ էին սովորեցնում, ու դաստիրակում էին խիզախության ու հայրենասիրության ոգով:

Տղաները զույգ-զույգ ընկեր էին դառնում, ովքեր շատ հաճախ կապված էին նույնասեռ սիրով, ինչը խրախուսվում էր պետական մակարդակով ու հեչ էլ անպատիվ բան չէր համարվում:

Աղջիկներին ֆիզիկական լավ կրթություն էին տալի, որ առողջ ու ամրակազմ էրեխա ծնեն:

Սպարտացիների բարոյաիրավական համարյա ողջ կանոնները բխում էին անհատական սեփականության բացակայությունից:

Օրինակ՝ մանուկների ու պատանիների գողությունը ամոթալի չէր համարվում ու նույնիսկ խրախուսվում էր, բայց գողության համար ԲՌՆՎԵԼԸ համարվում էր անպատվություն, ու բռնվածին ֆիզիկական խիստ պատիժ էին տալի՝ ճիպոտով ձաղկում էին:

Չնայած էս պատիժը չափազանց ցավագին էր, ու մանուկներից ոմանք մահանում էին, բայց նույնիսկ էս մանուկները ձգտում էին՝ ձեն չհանեն ու ամեն կերպ դիմանում էին ցավին, ինչը համարվում էր տղամարդկության նշան:

Հայտնի ա մի դեպք, երբ սպարտացի մանուկը շորի տակ փորի վրա թաքցրած ա ընում իրա սիրելի կենդանուն՝ աղվեսի ձագին, ու մեծահասակների ներկայությամբ ծպտուն անգամ չի հանում, չնայած աղվեսի ձագը ատամներով քրքրում ա երեխու փորը, ու մանուկն էս վերքից մեռնում ա:

ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ ԿԻՍԱՔԱՂՑ ԷԻՆ ՊԱՀՈՒՄ, ՈՐ ԳՈՂՈՒԹՅՈՒՆ ԱՆԵՆ ՈՒ ՃԱՐՊԿԱՆԱՆ:

Երբ մանուկներն ու պատանիները գողանում էին հելոտների կամ պերիոյկների ունեցվածքը, պատահում էր, որ սպանում էին սրանց, մանավանդ հելոտներին, ում մարդ չէին համարում:

Ժամանակ առ ժամանակ պատանիները խումբ էին կազմում ու գիշերները էթում էին արշավի, որ հենց հելոտ սպանեն: Հելոտ սպանելու համար էլ առանձին մի պատիժ չկար, **թե որ սպարտացի պատանին չէր բռնվում: Բռնվելիս էլ՝ պատիժը ձաղկելն էր**:

Սպարտացին, ճիշտն ասած, 7 տարեկանից մինչեւ կյանքի վերջը զինվոր էր ու ապրում էր մեն-մենակ՝ հանուն պետության, այսինքն, հանուն էտ **անբարոյակարգի**:

Սպարտայում գրականությունը, գիտությունը, փիլիսոփայությունն ու արվեստները արհամարված էին:

Երաժշտությունից կար մենակ ֆլեյտայի նվագը, ու էսի էլ էն բանի համար,

որովհետեւ մարտի ժամանակ սպարտացիների զորաշարը քայլում էր ֆլեյտաների նվագի հետ:

Ուրիշ տեսակ երաժշտություն (երեւի բացի «կիթառից»՝ քնարի պարզ տեսակը) հարգի չէր, թե չհաշվենք տղամարդկանց ռազմական խմբերգերն ու պարերը: Հարգի չէին նույնիսկ «Իլիականն» ու «Ոդիսականը», որ էն օրերին հռչակված էին հունական բոլոր պոլիսներում, ու համարյա չկար հույն քաղաքացի, ով սրանցից գոնե մի հատված անգիր չիմանար: Աթենացիներն արհամարհանքով ասում էին, թե սպարտացիներից ոչ մեկն էս պոեմներից ոչ մի հատված անգիր չգիդի, ու կարող ա՝ չի էլ կարդացե կամ լսե:

Սպարտացի կանայք չէին ողբում պատերազմում զոհված իրենց որդիներին:

Երբ սպարտացի կինը առնում էր մարտում որդու զոհվելու լուրը, տոնական շորեր էր հագնում ու հպարտ զարդարված դուս էր գալի քաղաքի հրապարակը, ու մյուս զոհվածների նույն ձեւով զարդարված մայրերի հետ տոնում էր իրա զավակի մահը, արհամարհանքով վերաբերվելով էն կանանց, ում որդին չէր զոհվե:

Ա՛յ թե մասնավոր սեփականությունը վերացնելն ի՞նչ անբարո այլանդակության ա հասցնում:

Սպարտացիները սպանում էին իրենց նորածիններին, եթե սրանք ֆիզիկական թերություն ունեին: Էս նորածիններին շպրտում էին անդունդը:

ՍՊԱՐՏԱՑԻ ՏՂԱՄԱՐԴՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՐ ՊԱՏԵՐԱԶՄ ԷԹԱԼՈՒ, ԹԵ ՈՐ ՀԼԸ ԶԱՎԱԿ ՉՈՒՆԵՐ:

Սա արվում էր, յանի ցեղի շարունակության համար:

Ինչ որ ա, սպարտական միաբան ազգ-բանակը կամաց-կամաց քչացավ ու մ.թ.ա. 3-4-րդ դարերում Սպարտայի քաղաքացիների թիվը մոտ 1000 էր, իսկ վերջում՝ 800 հոգի էր, ու սրանցից 100-ը օլիգարխ էր:

Ու հենց էդ վախտ էլ էս կատարյալ միաբան ազգ-բանակ Սպարտան պարտվեց ու վերացավ:

Կատարյալ «միաբան» ազգ-բանակի համ արտադրությո՛ւնն ա կրճատվում, համ բնակչության թի՛վը, որովհետեւ էս միաբանությունն անհնար ա առանց անհատական ունեցվածքը սահմանափակելու:

(Էսի բազմիցս ա հաստատվե, հաստատվել ա համ էլ ԼՏՊ-ի Հայաստանը «միաբանելու» օրերից, իսկ էսօր Հայաստանում էլ ա ակնհայտ: Ծնելությունն ահավոր ա կրճատվե, քաղաքացիներն էլ հրաժարվում են իրանց հայրենիքից ու հեռանում են երկրից: Իհարկե, էս պրոբլեմն էսքան պարզ չի, ու ծնելությունը լիքը ուրիշ բանից է՛լ ա կախված):

(Սրա համար ա, որ դասական հանճարեղ տնտեսագետները նոր զարգացող երկրներին խորհուրդ են տալի, որ սրանք ամեն կերպ շատացնեն իրանց բնակչությունը, որ նորմալ գործող ազատ շուկա ունենան, ու հզոր տնտեսություն ստեղծեն):

Մի զարմանալի բան կա: Թվում ա, թե սպարտացիների էս «պետականամետությունը» կամ «ազգայնամետությունը» ու «միաբան ազգ-բանակությունը» պիտի սպարտացիներին դաստիրակեր թունդ հայրենասիրության ոգով:

Բայց ամենատարօրինակն ու արտառոցն է՞ն հանգամանքն ա, որ **Հին Հունական աշխարհում ամենահեշտ կաշառվողն ու նույնիսկ իրա հայրենիքը դավաճանողը հենց սպարտացիներն էին, է՛ն սպարտացիները, ովքեր «տանը» փող չէին գործածում ու յանի արհամարհում էին հարստությունը, շքեղությունն ու պերճանքը**:

Ա՛յ, ըսենց էին սպարտացի իրոք որ զորավոր ու անսասան ռազմիկները: Էսքանը պատմեցի, որ քիչ հետո տենանք, թե մեր օրերի սոցիալիստներն ու նացիստները, որ ազգ-բանակ էին՝ ըստ իրանց էության, ինչքա՞ն-ինչքա՞ն բան

են վեկալե կորած-գնացած սպարտացիներից, իհարկե, Պլատոնի ու Հեգելի ու սրանց հետեւորդների միջնորդությամբ ու խորհրդով:

(Պլատոնը իր «Իդեալական Քաղաքի» տեսությունը շարադրելուց նկատի ա ունեցե հենց Սպարտան: Պլատոնի իդեալը Լիկուրգոսի օրենքներով ապրող արխայիկ Սպարտան էր):

13.4 ՌՈՒՍԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԱԶԳ-ԲԱՆԱԿԸ

1917 թվին Ռուսաստանի իրավիճակն ստիպեց, որ ցարը հրաժարվի իշխանությունից, ու էս երկրում «բուրժուական», այսինքն՝ դեմոկրատական հեղափոխություն եղավ: Իշխանությունն անցավ Դումային (պառլամենտին) ու սրա կազմած ժամանակավոր կառավարությանը: Ժամանակավոր կառավարությունը թուլ էր, Ռուսաստանն էլ կռվում էր Գերմանիայի ու սրան դաշնակից երկրների դեմ:

Երկրում սկսվեց անիշխանությունը, ինչը քիչ-քիչ խորացավ ու դառավ կատարյալ քաոս: 1917-ի հոկտեմբերի 25-ին (նոր տոմարով՝ նոյեմբերի 7-ին) սոցիալիստները, Լեւ Տրոցկու գլխավորությամբ, օգտվելով էս քաոսից, տապալին ժամանակավոր կառավարությունը ու կազմին նոր՝ **սոցիալիստական** կառավարություն, որի ղեկավարը դառավ Վլադիմիր Իլյիչ Լենինը, իրա գլխավորած բոլշեւիկյան կուսակցությունով:

Բոլշեւիկները սոցիալ-դեմոկրատական կուսակցության ամենածայրահեղ թեւն էին, ովքեր սոցիալ-դեմոկրատներից անջատվել էին 1902 թվին: Էն օրերին է՛լ, էսօր է՛լ ամեն գույն ու երանգի սոցիալիստներն ու կոմունիստները իրանց համարում էին (ու էլի համարում են) մարքսիստ, այսինքը՝ մարքսիստական «տեսության» հետեւորդն ու կրողն էին ու ե՞ն:

Երբ բոլշեւիկները Ռուսաստանում իշխանությունը խլին, ուզին՝ Մարքսի ասածներն իրականացնեն:

Բայց պարզվեց, որ **Մարքսի աշխատությունների մեջ սոցիալիզմ կառուցելու ոչ մի կոնկրետ ծրագիր, ոչ մի կոնկրետ քայլ չկա**:

Ու բոլշեւիկները հիշեցին Պլատոնին ու սրա «Իդեալական քաղաքի» «տեսությունը»: Պլատոնն էլ, էս «տեսությունը» շարադրելուց, նկատի ուներ հենց Սպարտան: Ուրեմն, բոլշեւիկներն ու հետագա ողջ սոցիալիստները (հետո, համ էլ նացիստները՝ Գերմանիայում ու ամեն տեղ) Պլատոնի՛ ծրագիրն էին իրականացնում, փորձում էին՝ սպարտական կարգերի պես համակարգ ստեղծեն, այսինքն՝ ստեղծեն ազգ-բանակ: Ու իրանց առաջին մի քանի անհեթեթ քայլով Ռուսաստանի առանց էտ էլ քաոսային վիճակը դարձրին ուղղակի դժոխք:

Բոլշեւիկները, ամեն գույն ու երանգի սոցիալիստների պես, մասնավոր սեփականության թշնամիներն էին: Բայց մասնավոր սեփականության լրիվ բացակայությունն անհնար ա դարձնում մարդկային համակեցությունը: Ուրեմն սոցիալիստները դեմ էին (ու de facto դեմ են) մարդկայնությանը, ինչքան էլ որ հակառակը պնդեին ու պնդեն:

Բոլշեւիկները սկզբում հայտարարին (դեկրետով), թե երկրի սահմանները վերացնում են: Հետո, նորից դեկրետով, վերացրին փողը, ինչը միանգամից քանդեց երկրի ողջ տնտեսությունը, ու բոլշեւիկները, ստիպված, փողը նորից վերականգնին:

Բոլշեւիկները համ էլ հայտարարին, թե սոցիալական արդարություն հաստատելու համար՝ ցարից ու կալվածատերերից հողը խլելու են, որ հավասար բաժանեն գյուղացիներին, իսկ գործարաններն էլ՝ «կապիտալիստներից» են խլելու, որ նորից՝ հավասար չափերով տան բանվորներին:

(Ոնց որ որ Սպարտական ազգ-բանակի կարգն էր: Ճիշտ ա, Սպարտայում գործարան չկար, ու զինագործական արհեստանոցներն էլ երեւի պետական էին):

Հետո հայտարարվեց, որ **ռազմական կոմունիզմ** ա հաստատվում, ինչը նշանակում էր, որ պետությունն իրավունք ունի անհատից խլելու սրա համարյա ողջ ունեցվածքն ու արտադրանքը՝ էտ անհատին թողնելով մենակ էնքան, որ էտի սովից չմեռնի:

Երբ սրա ու սրա պես ուրիշ ԱՆԲԱՐՈՅԱԿԱՆ (Հյումի ասածների իմաստով) քայլերի պատճառով երկրի ողջ տնտեսությունը քայքայվեց (օրինակ՝ մասնավոր առուտուրն արգելված էր), Լենինը, ստիպված, 1921 թվին հռչակեց իրա «տնտեսական նոր քաղաքականության» ծրագիրը՝ ՆԷՊ-ը (НЭП-ը, Новая экономическая политика-ն), ինչը թեթեւակի վերականգնում էր անհատական ունեցվածքը:

ՆԷՊ-ի շնորհիվ երկրի տնտեսությունը մի չորսը տարում համարյա վերականգնվեց, ու մարդիկ թեթեւացած շունչ քաշին (չնայած Հյումի իմաստով անբարոյականությունը հլը համատարած էր): Բայց մի քիչ հետո, 1928-29 թվերին, Ստալինը երկրով մեկ կոլեկտիվացրեց (համայնացրեց, պետականացրեց, այսինքն, վերացրեց) անհատական համարյա ողջ ունեցվածքը:

Ստալինը գյուղացուց խլեց է՛ն հողը, ինչով որ գյուղացիների մի մասին խաբե ու իրա կողմն էր քաշե Լենինը, ու ստեղծեց «կոլեկտիվ տնտեսություններ՝ կոլխոզներ» (Ստալինի մահից հետո համ էլ՝ «սովխոզներ՝ սովետական տնտեսություններ»: Սրանց տարբերությունները չնչին էին):

Գործարաններն արդեն պետական էին, ու գյուղացինե՛րն էլ, բանվորների պես, դառան օրավարձով աշխատող: Ա՛յ էս ձեւ, վերացնելով անհատական ունեցվածքը, բոլշեւիկները վերացրին՝ թե՛ օրենքը, թե՛ արդարությունն ու ազատությունը, թե՛ ազատ մրցությունը, ուրեմը, համ էլ նոր ու որակով ու էժան արտադրանք տալու ամենայն ցանկությունը:

Հետաքրքիր ա, որ բոլշեւիկները հասկանում էին, որ ազատ մրցությունը կարեւոր ա (բայց համ էլ վախում էին սրանից), ու բոլշեւիկները հայտարարեցին, թե ազատ մրցության փոխարեն հմի ընելու ա **սոցիալիստական մրցություն (սոցմրցություն)**: Այսինքը, յանի գյուղացիներն ու բանվորները պտի իրար հետ մրցեին «սոցիալիստական ձեւով», առանց որեւէ նյութական շահի սպասելիքի, մենակ **հանուն սոցիալիստական գաղափարի, հանուն «նոր, սովետական մարդու» պատվախնդրության**:

Մրցության էս ձեւը, իհարկե, ոչ մի անգամ էլ ոչ մի արդյունք չտվեց, որովհետեւ անհեթեթ էր, որովհետեւ շահ չունեցողը չի մրցի մենակ հանուն մի անտեսանելի «պետական շահի»:

Բա՛, սոցիալիստները որոշել էին՝ «Աստծուն» (բնությանը) գերազանցեն, ու ստեղծեն «նոր՝ սովետական, սոցիալիստական մարդ», ո՛չ ավել, ո՛չ պակաս: Էս նոր՝ սովետական մարդը պիտի ըլներ նոր՝ սոցիալիստական ազգ-բանակի հավատարիմ զինվորը:

Բայց դրանց ստեղծած էս նոր սովետական մարդը էղավ՝ **հնազանդ, ճորտամիտ, վախկոտ, ամեն ինչին հարմարվող, կաշառակեր ու կաշառատու, քաղաքացիական արիությունից զուրկ ու համարյա ամեն ինչով անբարո մի արարած:**

Ու հենց է՛ս մարդու ժառանգնե՛րն են, որ էսօր իրանք հենց իրանց ձեռը կրակն են ընգե ու չգիդեն, թե հենց իրանց կյանքը ո՛նց կազմակերպեն, որ մարդավարի ապրեն, որովհետեւ զգում են, որ էսօրվա կյանքն անմարդկային ա, բայց չգիտեն, թե խի՛ ա անմարդկային, չգիտեն էս անմարդկայնության պատճառը:

Մեր էսօրվա հետսովետական հասարակությունների մի զգալի մասը կազմված ա հենց էն «սովետական նոր մարդկանցից» (սրանցից մեկն էլ հենց ե՛ս եմ, գոնե՝ մի քիչ), ու էսի՛ ա մեր գլխավոր ու հիմնական դժբախտությունն ու ողբերգությունը, ու ոչ էնքան մեր էսօրվա «չարամիտ ու այլանդակ ղեկավարները» (ովքեր, անկասկած, չարիք են, բայց ախր **մե՛նք ենք սրանց վարձում, ընդ որում՝ «ընտրելով»**):

Բայց դառնանք մեր պատմությանը:

Մարդիկ բնությունից իրար հավասար չեն: Մեկը տաղանդավոր ա, մեկը՝ չէ: Մեկը եռանդուն ա, մեկը՝ չէ: Մեկն իմաստուն ա, մեկը՝ չէ եւն: Բայց բոլշեւիկները հաստատ որոշել էին, որ պտի հավասարություն ու արդարություն հաստատեն իրանց էս ազգ-բանակային պետության մեջ:

Ու բոլշեւիկները «սոցիալական արդարություն ու հավասարություն» ստեղծելու համար մենակ մի ելք ունեին՝ **պտի «անարդարներին ու հավասարությունը խախտողներին» կոտորեին ու արտաքսեին, ճիշտ ու ճիշտ՝ իրագործելով Պլատոնի ծրագիրը, որ ստեղծեն էս նոր՝ սոցիալիստական ազգ-բանակը**:

Սրա համար համակենտրոնացման ճամբարներ էին պետք: Մենակ Տրոցկու ու Լենինի ստեղծած ճամբարների թիվը 91 ա, ու սրանց մեջը միլիոններով կալանավոր կար:

Ռուսաստանի բնակչությունը 1913 թվին ընդամենը 160 միլիոն էր: Բոլշեւիկները, իրոք էլ, առանձին հետազոտողների ասելով, հենց 100 միլիոն մարդ էլ կոտորին, ու էսի՝ չհաշված Երկրորդ Աշխարհամարտում զոհվածները, ում «պաշտոնական» թիվը 20-27 միլիոն մարդ ա մենակ:

1960-ական թվականներին Սովետական Կայսրության բնակչությունը ընդամենը մոտ 300 միլիոն էր, այսինքն, բնակչության աճ համարյա չկար: Այնինչ, 20-րդ դարի առաջին երկու տասնամյակի Ռուսական կայսրությունը հողագործական երկիր էր, հողիությունն էլ արհեստական ձեւով չէին ընդհատում, ու մի տասը երեխան գյուղացու ընտանիքում սովորական բան էր:

Համեմատության համար հիշենք, որ Հնդկաստանի բնակչությունը 1913 թվին ընդամենը 200 միլիոն էր, իսկ էսօր միլիարդից անց ա: Ուրեմը, բոլշեւիկներն էտ ինչքա՞ն են կոտորե, որ աճ չի եղել:

(Էսօր Ռուսաստանի բնակչությունը նորից 142 միլիոն ա: (Չինաստանի օրինակը սրան չի հակասում, որովհետեւ շատ մեծ թվերի համար էս ասածս կարող ա ճիշտ չի, ու համ էլ՝ էտ վախտն ինչ իմանաս, թե ի՞նչ կըլնի):

Աքսյուցիչի պատմելով, երբ մի միլիոն կազակ գերի ընգավ, Լենինը հրամայեց, որ բոլորին կոտորեն, նույնիսկ է՞ն էրեխեքին, որ տղամարդու գոտկատեղից բոյով էին: «Կոտորե՛ք», ասում էր Լենինը, «անխնա՛ կոտորեք, քանի հլը փոդոցները լիքը դիակ ա, ու քանի հլը ժողովուրդն ուշքի չի էկե», որովհետեւ ինքը լավ գիդեր, որ ժողովուրդն ուշքի էկավ, իրա պես ճիվաղներին չի հանդուրժի, ու չի ուզենա, որ ողջ երկիրը դառնա ազգ-բանակ:

Ազգ-բանակ ստեղծելու ընթացքում բոլշեւիկներն ու՞մ էին կոտորում, արտաքսում ու աքսորում: Ի՞նչ չափանիշներով էին բոլշեւիկներն իրանց զոհերին ընտրում, որ «հավասարություն ու սոցիալական արդարություն» հաստատեն:

Բոլշեւիկ սոցիալիստները սպանում, աքսորում ու արտաքսում էին «անհավասարներին», այսինքն՝ է՛ն մարդկանց, է՛ն անհատներին, ովքեր չափազանց ազնիվ էին, տաղանդավոր էին, խիստ եռանդուն էին, չափազանց աշխատասեր ու նպատակասլաց էին, ու իրանց էս հատկություններով հասարակության մեջ առաջավոր դիրք ունեին՝ կա՛մ իրանց հարստությամբ,

կա՛մ իրանց գիտելիքներով ու անբասիր վարք ու բարքով, կամ իրանց քաղաքացիական արիությամբ, ու հենց սրանով էլ խախտում էին «ընդհանուր հավասարությունը», **ու ազգ-բանակի «ներդաշնությունը»:**

Մենակ 1928-33 թվերի կոլեկտիվացնելու ժամանակ կոմունիստները 5 միլիոն գյուղացիական ընտանիք աքսորին Սիբիր ու ուրիշ հեռավոր երկրամասեր (այսինքն՝ աքսորին մոտ 50 միլիոն մարդ, համարյա երեքից մեկին): Աքսորների ու կոտորածների ալիքներ եղան 1936-39 թվերին, 1946-49 թվերին եւն, ու էտ ալիքները դադարեցին մենակ Ստալինի մեռնելուց հետո:

1931-33 թվերին, Ստալինի հրամանով, Ուկրաինայի (ու մի քիչ էլ՝ Բելոռուսի) գյուղացիներից խլին սրանց ողջ հացահատիկն ու նույնիսկ բանջարեղենի սերմացուն, ու սրանց դատապարտեցին սովամահության, արգելելով նույնիսկ, որ սրանք հեռանան իրանց գյուղերից ու էթան Ռուսաստանի մյուս մասերն ու ողորմություն հավաքեն ու սովից չմեռնեն, որ Սովետական հսկա միության քաղաքացիները չիմանան, որ Ուկրաինայում ահավոր սով ա:

(Հացահատիկը ծախում էին արտասահմանին, որ ցույց տան, թե Սովետական երկիրն ինչքա՛ն բարգավաճ ա, ու սոցիալիստական կարգն ինչքա՛ն առավել ա մյուսներից):

Հուսահատ ու գազանացած գյուղացիները մորթում էին իրանց զավակներին, էփում ու ուտում էին: Սկզբում մորթում էին ամենափոքրերին, ու ավագ երեխաները լավ է՛լ գիդեին, **որ իրանց հերթն էլ ա գալու, որ շուտով իրանց էլ են մորթելու ու ուտելու:**

Բա ճիշտ չի՞ Ջոն Լոկը, ով ասում է. **«Եթե չկա մասնավոր սեփականություն, չկա արդարություն», ճիշտ չի՞ Հյումը, ով իր նշած նորմերը կոչում ա բարոյական, ճիշտ չեմ ես, երբ ասում եմ՝ չկա մասնավոր սեփականություն՝ չկա բարոյականություն**:

Բարոյակա՞ն էին Ստալինն ու կոմունիստական կուսակցությունը, երբ մի ողջ ժողովրդի դարձրել էին մարդակեր (էս սովը Հայաստանում էլ կար ու ահավոր էր, չնայած մարդակերության դեպքերի մասին տվյալ չկա):

Ի՞նչ ասես էն մարդկանց, ովքեր «հարգում» ու նույնիսկ «սիրում են» Լենինին, Ստալինին, Մաոյին, Պոլ Պոտին ու կոմունիստներին կամ սոցիալիստներին: Չինաստանի գլխավոր կոմունիստ, չինական ազգ-բանակի առաջնորդ Մաո Ցզե Դունը, մենակ կուլտուրական հեղափոխության օրերին, 50 միլիոն չինացի կոտորեց:

Պոլ Պոտը՝ Կամբոջայի կոմունիստների ստեղծած ազգ-բանակի առաջնորդը, «սոցիալիստական հավասարություն ու արդարություն ստեղծելու համար» կոտորեց իրա երկրի բարձրագույն կրթություն ունեցող բոլոր մարդկանց, հատիկ-հատիկ, թողալով մենակ մի ինժեներ ու էրկու բժիշկ (թե՞ հակառակը, լավ չեմ հիշում), սրանց էլ՝ մենակ ի՛ր անձնական կարիքների համար:

Սոցիալիստական ազգ-բանակի էսօրվա դասական օրինակ ա Հյուսիսային Կորեան, որի բնակիչները, ծերից ծեր վախկոտ, հնազանդ, ճորտ ու ստրուկ, մեծագույն մասով՝ կիսաքաղց «զինվորն» են էդ նույն ազգ-բանակի, այնինչ Հարավային Կորեան, ինչը հեչ էլ ազգ-բանակ չի, աշխարհի առաջավոր երկրներից ա:

Իրագործելով Պլատոնի ծրագիրը՝ բոլշեւիկները չէին խղճում նույնիսկ մանուկներին, աքսորելով համ էլ սրա՞նց, հաճախ էլ սպանելով սրանց: Էն օրերին բոլշեւիկների սիրած լոզունգն էր. «Պտուղը ծառից հեռու չի ընգնում», ու երբ հալածում էին մեկնումեկին, (այսինքը՝ աքսորում, գնդակահարում էին եւն) հալածում էին համ էլ սրա էրեխեքին ու ընտանիքի մյուս անդամներին ու բարե-

կամներին ու նույնիսկ՝ ընգերներին (համ էլ՝ որ «խրատ ըլնի սրանց ազգականներին ու մնացածներին, ու սրանք հանգարծ «չթպրտան»):

Ու էս կոտորածները, աքսորն ու հալածանքները իրավական տեսանկյունից արդարացնելու համար կոմունիստները փոխին Հյումի նորմերից երկրորդի մի հիմնական թեզը, հռոմեական իրավունքի անկյունաքարը, անմեղության (կանխա)վարկածը:

Անմեղության վարկածը հլը Հին Հունական դատարանում վիճող կողմերի համար ազնիվ մրցություն ապահովող հիմնական նորմն էր:

Էսի ենթադրում ա, որ եթե մեղադրյալի մեղքը փաստական ապացույցներով (անժխտելի հանցանշաններով ու անաչառ վկաների ցուցմունքներով) հաստատված չի, ուրեմը մեղադրյալն անմեղ ա ու պիտի ազատվի, նույնիսկ թե որ ինքը խոստովանում ա իր մեղքը, որովհետեւ հնարավոր ա, որ մեղադրյալն ինքն իրա վրա շառ ա անում (բանսարկում ա իրան):

Ստալինի հանձնարարությամբ սովետական իրավաբան (հետագայում՝ Սովետի գլխավոր դատախազ) Վիշինսկին սովետական օրենսգրքից հանեց անմեղության վարկածը, ու սրա փոխարեն մտցրեց օրենք, ինչն ասում էր, որ **մեղադրյալի մեղքը հաստատված ա, թե որ մեղադրյալն ինքը խոստովանում ա իրա մեղքը**:

Ու ստեղծեցին տխրահռչակ եռյակները, ովքեր երեք հոգով (մեծ մասամբ՝ ոչ իրավաբան), մենակ մեղադրյալի խոստովանության հիման վրա, շատ անգամ էլ՝ առանց էս խոստովանության, առանց դատական արդար մրցության, վճռում էին (մեծ մասով՝ տանջելով), թե մեղադրյալը մեղավոր ա, թե չէ, ու հենց իրանք էլ պատիժ էին սահմանում, մեծ մասամբ՝ **հինգ տարի, տասը տարի, անժամկետ աքսոր կամ գնդակահարություն**:

Ու էս **սոցիալիստական ազգ-բանակի անդամ անհատը չուներ ոչ մի իրավունք՝ ո՛չ խղճի, ո՛չ հավատի, ո՛չ կարծիք հայտնելու, ո՛չ տեղեկություն ստանալու, ո՛չ ազատ ստեղծագործելու, ո՛չ կենցաղը կազմակերպելու, ո՛չ ազատ տեղաշարժվելու** եւն, եւն:

Երկիրն անջատված մեկուսացած էր ողջ աշխարհից, ոնց որ ասում են՝ «էրկաթի վարագույրով», ու համեմատական ազատություն ունեին մենակ ու մենակ գլխավոր կոմունիստները:

Ու **մենակ ազգ-բանակի կոմկուսն էր որոշում (կոմունիստական կուսակցությունը), թե ով ի՛նչ ասի, ի՛նչ խոսի, ի՛նչ մտածի, ի՛նչ անի, ի՛նչ գրի, ի՛նչ երգի, ի՛նչ պարի, ի՛նչ հագնի, ի՛նչ սիրի, ի՛նչ նկարի, ո՛ւմ գովա, ո՛ւմ հայհոյի ու փնովի, ո՛ւմ պաշտպանի ու խրախուսի**:

Ու կոմկուսը խրախուսում ու քաջալերում էր՝ սուտը, խաբեբայությունն ու խարդախությունը, մատնությունն ու դավաճանությունն ու ամենայն անարդարությունն ու ստորությունը, թե որ սրանք ձեռնտու էին կուսակցությանը, ճիշտ ու ճիշտ, հետեւելով Պլատոնի խորհրդին:

Երբ էս բաները պատմում ես էսօրվա ջահելներին, չեն հավատում, որովհետեւ սրանք իրոք որ անհավատալի բաներ են: Բայց սրանք իրականություն են:

Թե որ էս տեսակ ազգ-բանակը չի համատարած անբարոյականությունը, բա էլ ո՞րն ա:

Այ, թե ինչի են հասնում մարդիկ, երբ ժողովրդին դարձնում են ազգ-բանակ:

13.5 ՆԱՑԻՈՆԱԼ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԱԶԳ-ԲԱՆԱԿԸ

Մի երկու խոսք նացիստական Գերմանիայի ազգ-բանակի մասին (1933-1945):

Երբ 1933 թվին գերմանական նացիոնալ-սոցիալիստները, Ադոլֆ Հիտլերի

գլխավորությամբ, անցան Գերմանիայի իշխանության գլուխը, երկրի անհատական համարյա ողջ նյութական սեփականությունն արդեն կենտրոնացրած էր մի քանի խոշոր մոնոպոլիայի ձեռը:

Այսինքն, արդեն լիքը պայման կար, որ ազգիստները Գերմանիան «միաբանեն» ու դարձնեն իսկական ազգ-բանակ: Բայց հոգեւոր էն կարգի ՈՒՆԵՑՎԱԾՔՆԵՐԸ, ոնց որ՝ **խոսքի, խղճի, կարծիքի ազատությունը, համ էլ՝ կյանքի իրավունքը, անհատական կենցաղը կազմակերպելու ազատության ու բազում ուրիշ իրավունքները**, քիչ՝ թե շատ, հլը կենտրոնացրած չէին:

Ուրեմն, Գերմանիան հլը միաբան ազգ-բանակ չէր, ու Հիտլերի խնդիրը երկիրը միաբանելն ու ազգ-բանակ դարձնելն էր:

Էս խնդիրն իրագործելու համար Հիտլերն ու նացիստները, առաջին հերթին, խլեցին անհատական հենց է՛ս ՈՒՆԵՑՎԱԾՔՆԵՐԸ, այսինքն՝ **խլեցին հոգեւոր ունեցվածքը՝ խոսքի, խղճի, հավատի ու ուրիշ ըսենց ազատություն-ունեցվածքները**:

Սրա համար Գերմանիայում արդեն լրիվ հիմք կար: Կար **Հեգելի փիլիսոփայությունը, այսինքը՝ Հեգելի «դիալեկտիկական մեթոդը», ինչը շիտակը ծռելու ու սխալ դարձնելու ու ամենայն անտրամաբանականն ու անհեթեթը տրամաբանականի տեղն անցկացնելու ու «միակ բարձրագույն տրամաբանական ճշմարտություն» ներկայացնելու մի գերխարդախ մեթոդ էր**, հենված Հերակլիտոսի մռայլ փիլիսոփայությանն ու Պլատոնի Իդեալական Պետության «տեսությանը»: [Տես՝ **Պոպեր Կ. Ռ.**, ***«Բաց հասարակությունը եւ դրա թշնամիները»,*** 1-ին ու 2-րդ հատորները, Հայաստան, 2001]:

Եթե Մարքսը Հեգելի «բացարձակ ոգի» կոչածը փոխարինեց «համաշխարհային անխուսափելի կոմունիզմ» կոչածով, Հիտլերն ու իրան նախորդած (ու համ էլ հաջորդած) ազգիստները «բացարձակ ոգին» փոխարինին «ազգային ոգով», ու իհարկե՝ «գերմանական ազգային ոգով»:

Գերմանական նացիստները հայտարարին, թե գերմանացիներն էս Գնդի ամենակատարյալ ազգն են, ու ծագում են արիացիներից ու հենց ամենալավ արիացիներն են որ կան, ու որ թե՛ Գերմանիայում, թե՛ ողջ աշխարհում ամեն ինչը պտի ենթարկվի ու ծառայի արիացիների էս ընտրյալ ցեղին:

Մնացած ողջ ցեղերն ու ազգերը (բացառությամբ՝ մի քանիսի) հայտարարվեցին ավելի ստոր ու նույնիսկ՝ **անասնական**:

Ու եթե **սոցիալիստների գերխնդիրը ողջ աշխարհը միաբանելն ու սոցիալիստական ազգ-բանակ դարձնելն էր, գերմանական նացիստների գերխնդիրն էլ՝ ողջ աշխարհը գերմանական միաբան ազգ-բանակ դարձնելն էր**: Այսինքը՝ գերմանական «արիացինե՛րը» պտի ըլնեին իշխող, իսկ մնացած ազգերը՝ անասնական վիճակի հասցրած ստրուկ, հելոտ ու պերիոյկ:

Ու գերմանացիներն ամե՛ն-ամե՛ն ինչ արին, որ իրանց էս նպատակն իրագործեն, ու ռուսական (համ էլ՝ չինական, հյուսիս-կորեական, կամբոջական ու ուրիշ) սոցիալիստների պես, մազաչափ անգամ չխորշեն ոչ մի նողկալի ու անմարդկային գազանությունից ու ոճրագործությունից:

Մի երկու խոսք «արիացի» տերմինի մասին:

Հին իրանցիներն իրանց երկիրն անվանում էին ***Արիա*** (***Արյա, Արան, Էրան, Իրան***: Ովքեր չեն հավատում, թո նայեն Հր. Աճառյանի ***Արմատական Բառարանը***): Իրանց էլ անվանում էին՝ ***արիացի, էրանցի, իրանցի:***

Ուրեմն՝ **արիացի-ն ընդամենը նշանակում ա իրանցի**:

Հին աշխարհում, Եգիպտոսի, Բաբելոնի ու Ասորեստանի փառավոր օրերից

հետո, Պարսկական կայսրությունը շատ մեծ հեղինակություն ուներ, ու նույնիսկ հին հույներից ու հռոմեացիներից շատերն էին հիանում պարսկական քաղաքակրթությամբ ու պարսիկներին համարում էին օրինակելի (ավագանուն, իհարկե):

Երբ գերմանական նացիստներն ասում էին, թե իրանք ծագում են արիացիներից ու արիացի են, հենց աշխարհակալություն ստեղծող իրանցիների՞ն (համ էլ հռոմեացիներին) նկատի ունեին, որովհետեւ իրանք է՛լ էին ուզում՝ աշխարհակալություն ստեղծեն:

Բայց շատ արագ ***«արիացի»*** բառի էս իմաստը մոռացվեց, ու էսօր իրանց արիացի են համարում ամե՛ն գույն ու երանգի նացիստները՝ ռուսական, ճապոնական, չինական, իտալական, հունական, անգլոսաքսոնական, հայկական, քրդական ու նույնիսկ՝ նեգրական:

(Սա իրականություն ա: Ով չի հավատում, թո կարդա, օրինակ, **Էռնեստ Գելների *«Ազգերն ու ազգայնականությունը»*** գիրքը (2003, Հայաստան հր.)):

Մեր օրերի աֆրիկյան նորագույն պետություններում նեգրական տարբեր ցեղերը իրարից միլիոններով մարդ են կոտորում, էն մահանայով, թե մեկը մյուսից «ավելի ընտիր ա, ավելի արիացի ա»:

Կարճ ասած՝ էսօր «իրան հարգող ազգը» պտի անպայման հայտարարի, թե ինքն արիացի ա, **ոնց որ թե արիացիները հատուկ տեսակի ընտիր կապիկներից ծագած մի ցեղ ըլնեն**, ում սերունդները կատարյալ են ու արժանի՝ աշխարհին տիրելու՝ **հենց մենակ է՛ն պատճառով, որ էս ընտիր կապիկների հետնորդներն են**, իսկ մյուս ազգեր՝ «հեչ, եսիմ ինչ բառադի-մառադի կռիսմռիսից են առաջացե» ու արժանի են ամենայն արհամարանքի, ու համ էլ՝ արժանի են՝ ոչնչանալու ու ոչնչացնելու, թե որ էս «ընտիր կապիկների հետնորդների» ուժը պատի:

Ու մեր հայկական «արիացիներն» էլ, երբ իրանց հպարտ-հպարտ արիացի են հռչակում, թո նախ հիշեն, որ **ընդամենը ասում են, թե իրենք կա՛մ իրանցի են, կամ էլ՝ «ընտիր կապիկների հետնորդ»**, որովհետեւ էս էրկու հնարավորությունից բացի, երրորդը չկա, ուղղակի չկա:

Ու առհասարակ, **ի՞նչ կարեւոր ա, թե ո՛վ, ե՛րբ ու ումի՛ց ա առաջացել**: Անցածն անցած ա, ու էսօր կարեւորը ներկա՛ն ա:

Ավելի լավ ա՝ մտածենք, թե մենք էսօր ո՛վ ու ի՛նչ ենք, ու թե որ տենանք, որ էսօր մենք էնքան էլ մի բան չենք, գուցե փոխվե՞նք ու մի քիչ լավանա՞նք: Հը՞:

Որովհետեւ, **թե որ մենք հենց է՛ն գլխից մեզ համարենք «համաշխարհային փայլուն ազգ», ուրեմն՝ էլ կարիք չունենք փոխվելու ու կատարելագործվելու, մնում ա, որ ձեռներս ծալենք ու նստենք ու վայելենք**, եթե իհարկե՝ «էդ կեղտոտները թույլ տան»:

Իսկ էդ «կեղտոտները»՝ թե՛ դրսինները, թե՛ ներսինները, թույլ չեն տալի, ու մենք, հես ա, կորելու ենք էթանք, էլ համարյա բան չմնաց, թե որ, իհարկե, «չմիաբանվենք ու ազգ-բանակ չդառնանք»:

Գերմանական ազգիստներն իրանց ժողովրդի հոգեւոր ողջ ունեցվածքը խլելուց հետո հայտարարին, թե հրեաները ստորին ռասա են (հելոտ կամ պերիոյկ են), ու երկրի բոլոր հրեաների նյութական ողջ ունեցվածքը խլին, ու հրեաներին էլ հավաքին կոնցլագերներում (համակենտրոնացման ճամբարներում), ու սկսին սրանց ծրագրային կոտորածը:

Հրեաներին գնդակահարում էին, կամ հատուկ խցերում ոչնչացնում էին թունավոր գազերով, դարձնում էին բժշկական ու կենսաբանական փորձերի կենդանի, ստերիլացնում էին, այսինքն՝ վիրահատելով՝ զրկում էին սերունդ ունենալու կարողությունից, ու

սրա պես ուրիշ հազար ու մի գարշելի ու նողկալի բան էին անում:

Հետագայում նացիստներն էս բաներն անում էին համ էլ սլավոններին ու Ե՛Ն ազգերին, ում հայտարարում էին «ստորին ռասա»:

Բնութագրական ա, որ Հիտլերը, խրախուսելով ու քաջալերելով իրա զինակիցներին, որ սրանք չվախենան հնարավոր ապագա պատասխան տալուց ու դատաստանից, շեշտում էր, թե «հմի (այսինքը՝ նացիստների օրոք) ոչ մեկն էլ արդեն չի հիշում երիտթուրքերի կազմակերպած հայերի ջարդը (գենոցիդը, ցեղասպանությունը), ուրեմը, տարիներ անց՝ ոչ մեկը չի հիշելու համ էլ հրեաների գենոցիդը» (հոլոքոստը):

Իրոք էլ՝ չնայած Երկրորդ աշխարհամարտից հետո Գերմանիայի նացիստական առաջնորդներին դատին ու պատժին, էսօր աշխարհում քչերն են հիշում՝ թե՛ հայերի գենոցիդը, թե՛ հրեաների հոլոքոստը (նկատի ունեմ լայն հասարակությունը, մանավանդ՝ ջահելներին):

Ու սարսափելի ա, որ անընդհատ նոր գենոցիդ ա ըլնում, ընդ որում, «դեմոկրատական կարգ տարածելու» ցուցափեղկի տակ (օրինակ՝ Կոսովոյինը կամ նեգրական գենոցիդներն Աֆրիկայում):

(Շատ հետաքրքիր ա, որ հրեաների էսօրվա Իսրայելի «ազգ-բանակը» չի ճանաչում հայերի հրեշավոր գենոցիդը, չնայած ասում ա, թե հրեաների հոլոքոստը հրեշավոր էր):

Էս գարշելի ու սոսկալի բաներն անելուց՝ նացիստներն Է՛լ, թուրքերն Է՛լ, կոմունիստներն Է՛լ, կղերական ֆունդամենտալիստներն Է՛լ, իրագործում էին Պլատոնի «պետությունը մաքրելու» ծրագիրը, ինչն արդարացնում էին Հեգելի փիլիսոփայության վրա հիմնված «գաղափարախոսություններով»:

Սրանցից՝ նացիստականի ստեղծողներն էին՝ Ֆիխտեն, Հերդերը, Շպենգլերը, Նիցշեն, Հիտլերն ու ուրիշները:

(Մեր Նժդեհի «գաղափարախոսություն» կոչվածն է՝լ ա սրանց գրվածքներից թխված: Ինչքա՞ն են իրավացի էն մարդիկ, ովքեր Նժդեհին համարում են «հանճարեղ»: **Նժդեհի պայքարը թուրքերի դեմ անկասկած ա արժան ամենայն հարգանքի, բայց սա չի նշանակում, թե Նժդեհի նացիստական հայացքները պտի համարենք սուրբ ճշմարտություն: Որովհետեւ Նժդեհի նացիստական հայացքները հանճարեղ համարողը, ստիպված, պիտի Հիտլերի ու Հիտլերի պես արյունարբու հրեշների հայացքներն էլ համարի հանճարեղ**):

Հիտլերը (հետեւելով Պլատոնի խորհրդին) վերացրել էր, օրինակ, համ էլ գերմանացի կանանց ամուսնական կենցաղի անհատական ունեցվածքը, օրենքով պարտադրելով, որ կանայք չմերժեն ռազմաճակատից արձակուրդ էկած զինվորներին:

Բայց գերմանական նացիստները «զարգացրել էին» Պլատոնի խորհուրդները: Օրինակ, երբ նացիստները միլիոններով մարդ էին կոտորում (իրանց ասելով՝ ստորին ռասաներից), ձգտում էին՝ առավել օգուտ քաղեն իրանց էս «պլանավոր աշխատանքից», ու **սպանած մարդկանց կաշվից կանացի ձեռնոց ու պայուսակ էին արտադրում, ճարպից սապոն էին արտադրում, մազերով դոշակ էին խցում** եւն:

Այ՛, սա՛ էր նացիստական միաբան ազգ-բանակի բարոյականությունը, ինչին էսօրվա ազգիստները, «ամոթխած», ասում են «ազգայնական բարոյականություն», ու ազգիստները (թե՛ գերմանական, թե՛ թուրքական, թե՛ ուրիշ) իրանց էս «բարոյականությունն» ու սրա վրա հիմնված «գաղափարախոսությունը» համարում են գերագույն ու աստվածատուր, պնդելով, թե հենց սրա՞նք են միաբանելու ու փրկելու ազգն ու հենց սրա՞նք են ազգի «երջանիկ ու լուսավոր ապագան» ապահովելու:

Ազգիստական գաղափարախոսությունն ահավոր վարակիչ ա:

Ազգիզմը, կամ ուրիշ անունով ասած՝ ցեղապաշտությունը (ցեղակրոնությունը, ազգայնամոլությունը եւն) շատ հին բան ա ու հատուկ էր հնագույն ողջ ցեղերին: Բայց **հնագույն ցեղերից մենակ հին հրեաներն էին, ովքեր նացիզմը գրել էին իրանց «Հին Կտակարանում» ու դարձրել էին քաղաքականության միջոց, քաղաքական գաղափարախոսություն**:

«Հին Կտակարանը» լիքն ա Աստծո «ընտրյալ ժողովրդի, ընտրյալ ազգի» հիշատակությամբ, ում որ Եհովան պիտի «շատացնի ու դարձնի ծովափի ավազի հատիկներից կամ աստղերից էլ շատ, իսկ մնացածը ազգերին էլ (gentile-ներին) պիտի դարձնի հրեաների ստրուկը»:

Ու էս նպատակի համար **Եհովան չի խորշում ոչ մի անբարո ու արյունարբու հանցագործությունից, կոտորելով հրեաներին «նեղացրած» ժողովուրդների թե՛ մեծահասակներին, թե՛ մանուկներին, ու նույնիսկ՝ դրանց անասուններին, շներին ու կատուներին**:

Հիսուսի ստեղծած գաղափարախոսությունը՝ «Նոր Կտակարանը», վերացրեց ազգային խտրությունն ու անհանդուրժողությունը, իրա հովանավորությունը խոստանալով ողջին, **մենակ մի պայմանով, որ հավատան ու չուրանան իրան (Եհովայի պայմանն էլ՛ էր էսի, բայց Եհովան էսի պահանջում էր մենակ հրեաներից)**: Հին քրիստոնեությունը հենց սրա համար էր (հուդաիզմի հետ միասին) առաջին կրոնը, ինչը բացարձակ չէր հանդուրժում ուրիշ ոչ մի կրոն:

Ու Հիսուսն Է՛լ մարդկանց միաբանում էր քրիստոնեական կրոնի շուրջը, ըստ էության, ստեղծելով մի նոր՝ համաշխարհային «քրիստոնեական ազգ-բանակ» (հիշենք, օրինակ, խաչակրաց արշավանքները կամ Հռոմեական պապական կայսրությունը):

Նացիստների գլխավոր պայմանը՝ նացիստական գաղափարախոսությանը ու մանավանդ՝ ազգայնական առաջնորդներին (ֆյուրերներին), այսինքն՝ «ազգի հերոսներին» ու սրանցից կազմված «քաղբյուրոներին» անտրտունջ ու անշեղ հնազանդվելն ա, իսկ գլխավոր լոզունգն էլ հետեւյալն ա. **«մեկ ազգ, մեկ լեզու, մեկ մշակույթ, մեկ հայրենիք», այսինքն, միաբան ազգ-բանակ:**

Բայց **էս լոզունգն ինքնին՝ գործողության ծրագիր ա, ընդ որում, սարսափելի ու ինքնակործան ծրագիր ա, որովհետեւ էս լոզունգը, ավտոմատ, տվյալ ազգին հակադրում ա մնացած բոլո՛ր ազգերին ու ժողովուրդներին, այսինքն՝ պատերազմ ա հայտարարում ողջ աշխարհին**:

Ու էս լոզունգն իհարկե՝ հակադիր ա **օրենքի առաջ բոլորի հավասարության սկզբունքին,** որովհետեւ ըստ էս սկզբունքի՝ այլազգիներն ու էս լոզունգին չհետեւողները երկրորդ սորտի ու անպայման վնասակար մարդ են համարվում:

Ուրեմն՝ **ազգիզմի գլխավոր սկզբունքը լրի՛վ ա հակադիր Հյումի ասած բարոյականության հիմնական նորմերին, կնշանակի՝ համ էլ բարոյականությանն ու բարոյակարգին՝ դեմոկրատիային**: Ու էս լոզունգը նշանակում ա, որ տվյալ երկրի այլազգիները, «ազգի ներքին թշնամիներն են, ու պիտի երկրից արտաքսվեն կամ կոտորվեն», կամ էլ՝ պտի ճորտի ու ստրուկի վիճակում ըլնեն:

Մնացած ազգերն էլ՝ երկրի «արտաքին թշնամիներն են», ովքեր միշտ կան: (Ճիշտն ասած, ազգայնականների կարծիքով, թե որ սրանց էլ կոտորելու հնար ըլներ, շատ լավ կըլներ, բայց «անտերը չի ստացվում, որովհետեւ էտ սրիկաները, օրինակ թուրքերն ու չինացիները, ահավոր շատ են ու մեզնից էլ շատ հզոր են»): Հենց սրա համար ա, որ նացիստական պետությունների գլխավոր լոզունգներից մեկն էլ՝ միաբանության լոզունգն ա:

«Միաբանվե՛նք, միաբանվե՛նք ու դառնանք ազգ-բանակ», անընդհատ գոռում են նացիզմի կողմնակիցները: Բայց.

Միաբանությունը լավ ա ու պետք ա մենակ պատերազմի վախտը, ու մենակ ճորտությունից ու ստրկությունից ազատվելու պայքարի վախտը, երբ ուզում ես, որ հենց քու հայրենիքը նորից նվաճես էդ հայրենիքը զավթած անբարո գող ու թալանչուց:

Ու իհարկե, միաբանությունը պետք ա բարոյական հարցերի առումով, որովհետեւ բոլորս էլ պտի միաբան ընդունենք Հյումի նշած նորմերն ու սրանցից բխող վարքի ողջ կանոնները:

Խաղաղ վախտը էս ասածներիցս բացի ուրիշ բանի համար միաբանություն պահանջելը հա՛մ անհեթեթ ա, հա՛մ վնասակար, որովհետեւ հակառակ ա ազատ մրցության սկզբունքին, այսինքը՝ հակառակ ա անհատական ազատությանն ու Հյումի ասած բարոյական նորմերին, ու խի՛ստ կրճատում ա նյութական ու հոգեւոր բարիքների արտադրությունը, ու ի վերջո, հասցնում ա ընդհանուր աղքատության ու թշվառության:

Ասել եմ արդեն, որ տարբեր ազգերի էսօրվա նացիստները հա ասում են, թե իրանք «ազգի լուսավոր ապագան կառուցելու ծրագիր ունեն», բայց **էս ծրագրերը հա էլ էնքան երկարաժամկետ են ու էնքա՛ն են անորոշ, որ սրանք ստուգելն անհնար ա**, ու էտքան տարի հետո կամ ծրագրի հեղինակնե՛րն են մեռածգնացած ըլնում, կամ ժողովո՛ւրդն ա մոռացած ըլնում էդ ծրագրի մասին:

Կամ էլ՝ էդ ծրագիրն էնքան վիթխարի դժվարություններ ունի, որ տվյալ պահին հաղթահարելի չեն, որովհետեւ «իրադրությունը նպաստավոր չի», ու պտի մենակ ու մենակ հեռավոր ապագայում հաղթահարվեն:

Սրա համար էլ՝ «**ժողովուրդն առայժմ պիտի համբերի ու ամեն տեսակ զրկանք քաշի ու, որ ամենակարեւորն ա, պիտի հնազանդ լսի իրա առաջնորդներին, «մինչեւ իրադրությունը դառնա նպաստավոր», ու իրանց էլ փող տա, որ էդ լուսավոր ապագայի ծրագրերն ավելի լավացնեն»:**

Ու միաբան ազգ-բանակային պետությունն անընդհատ միջամտում ա անհատների տնտեսական ու հոգեւոր գործերին ու, ի վերջո, ուղղորդում ու ղեկավարում ա նույնիսկ ամենահարուստներին, թելադրելով սրանց, թե ինչ ու ոնց արտադրեն, ու ինչ ու ոնց մտածեն:

Ըսենց էղավ նացիստական Գերմանիայում, ուր Ադոլֆ Հիտլերին իշխանության գլուխ հասցրին հենց խոշոր մոնոպոլիստները: Բայց երբ Հիտլերը երկրի ողջ իշխանությունը կենտրոնացրեց իրա ձեռը, խոշոր մոնոպոլիստները, ուզած-չուզած, հնազանդ ենթարկվան Հիտլերին ու սրա մերձավորներին:

Էսօրվա նացիստները, այսինքը՝ սոցիալիզմի զենք ու զրահ հագած ծպտյալ ազգայնամոլները, կոմունիստների պես, քաղաքակրթության անհաշտ թշնամիներն են (**նացիոնալիստները, համարյա միշտ, զինվում են մարքսիզմի որեւէ մի (շատ անգամ քողարկված ու առաջի հայացքից աննկատելի) տեսակով, ու սրա տիպիկ օրինակն էսօրվա քրդերն են, բայց սրանք համ էլ (համարյա միշտ ու բոլոր սոցիալիստների պես) հայտարարում են, թե իրանք դեմոկրատ են**):

Ու թե որ սրանք ողջ աշխարհը չեն կործանում, հենց իրա՛նց երկիրն են կործանում, որովհետեւ, ի վերջո, տնտեսությունը քանդուքարափ են անում, ու թե՛ ժողովրդի մեծագույն մասին, թե՛ բոլոր երկրներին հանում են իրանց դեմը:

13.6 ՄԱՀՄԵԴԻ ՀԻՄՆԱԾ ԱԶԳ-ԲԱՆԱԿՆԵՐԸ

Մահմեդի ուսմունքի հիմքը հետեւյալն ա:

Մարդ չպիտի ընկնի սեփական շահի ու բարեկեցության հետեւից: Ճիշտ կըլնի,

եթե մարդ իր ունեցվածքը կիսի ուրիշների հետ, ու այնպիսի հասարակարգ ստեղծի, ուր թույլերին ու անպաշտպաններին հարգանքով վերաբերվեն: Ու եթե իր ցեղն էս հասարակարգը չստեղծի, ասում էր Մահմեդը, կկործանվի, որովհետեւ կխախտի կեցության ամենակարեւոր օրենքները:

Բայց կասկած չկա, որ **ունեցվածքն ուրիշների հետ կիսելու պատվիրանը հակառակ ա անհատական անձեռնմխելի ունեցվածքը սեփականատիրոջ ուզած ձեւով տնօրինելու Հյումի նշած նորմին,** չնայած խիստ հրապուրիչ ա, ու խիստ մարդկային ու բնական ա թվում, որովհետեւ կան մարդիկ, ովքեր համարում են, թե «բոլոր մարդիկ եղբայր են, ու որեւէ երկրի ողջ ժողովուրդը, ու նույնիսկ ողջ մարդկությունը, մի էն տեսակ ընտանիք ա, ոնց որ որեւէ առանձին ընտանիքն ա»:

Բայց ինչ էլ ասեն էս մարդիկ կամ ազգիստական, կրոնական ու սոցիալիստական խոշոր ու մանր քարոզիչները, **սեփական ունեցվածքն ուրիշների հետ կիսելու պատվիրանն անմարդկային ա ու անբարո, որովհետեւ հակառակ ա Հյումի նշած բարոյական նորմերին, ու ընդունակ ա կործանելու ողջ քաղաքակրթությունը՝ կրճատելով ու քանդուքարափ անելով ազատ մրցությունն ու ողջ տնտեսությունը, ու թշվառացնելով մարդկության մեծ մասին**:

Ու ինչ էլ ասեն պոետներն ու վիպասաններն ու քաղգործիչներն ու ուտոպիստները, **մարդն ունակ չի սիրելու անծանոթներին ու նրանց հետ երբեւէ էնպես չի վարվի, ոնց որ իրա հարազատների հետ ա վարվում**:

Անծանոթներին եղբայր համարելու պահանջը (սրան ասում եմ՝ եղբայրության իմպերատիվ, հրաման, պահանջ) հակառակ ա, օրինակ, անհատական ունեցվածքը սրա տիրոջ ուզած ձեւով տնօրինելու նորմին, որովհետեւ մարդու զգացմունքներն է՛լ են անհատական ունեցվածք:

Ըստ էության՝ եղբայրության իմպերատիվը հենց քրիստոնյաների ու մահմեդականների ու բոլոր գույն ու երանգի ազգիստների, սոցիալիստների ու կոմունիստների **բոլոր մարդկանց հավասարության պահանջն ա**: Էս պահանջը, ի վերջո, **հասցնում ա նյութական բարիքները բոլորին հավասար բաժանելու «սոցիալական արդարության» կործանարար պահանջին**:

Ու էս պահանջն անիրագործելի ա, ուղղակի էն պատճառով, որ **մարդիկ իրար հավասար չեն**:

Մեկն ավելի տաղանդավոր ա, քան մյուսը, մեկն ավելի ճարպիկ ա, քան մյուսը, մեկը գեղեցիկ ա, մյուսը՝ տգեղ, մեկը եռանդուն ու նպատակասլաց ա, մյուսը՝ ծույլ ու թափթփված, եւն, եւն:

Եղբայրության ու բոլորի հավասարության իմպերատիվն ուտոպիստական պատվիրան ու պահանջ ա:

Էս պահանջն իրագործելու բոլոր փորձերը, որ արվե ու արվում են հին ու նոր միաբան ազգ-բանակային երկրներում, հա է՛լ խիստ կրճատել են էս երկրների նյութական ու հոգեւոր բարիքների արտադրությունը, շատ անգամ ուղեկցվելով արյան հեղեղներով ու անմարդկային «բարոյականությամբ», ու էս երկրների ժողովուրդներին հասցրե ու հասցնում են ծայրահեղ թշվառության:

Էս երկրների արյունալի փորձը ցույց տվեց, որ **անհնար ա, որ բոլոր մարդկանց եղբայրության իմպերատիվն ու բոլորի հավասարության պահանջը դառնա էնքան մի բարոյական նորմ, ինչին չհակասող իրավական նորմերի հիման վրա մարդավարի ու բարոյական հասարակարգ կառուցվի**:

Սա հասցնում ա հետեւյալ անխուսափելի ու անառարկելի եզրակացությանը.

Բոլոր մարդկանց եղբայրության ու բոլորի հավասարության պահանջը, առանձին-առանձին՝ թե միասին, անբարոյական պահանջ ա, որովհետեւ վերացնում ա բարոյական ավանդա-

կան նորմերը (ազնվությունը, ճշմարտախոսության ազատությունը, քաղաքացիական պարտքը եւն), ու մարդկանց մեծ մասին հասցնում ա թշվառության, զրկում ա ազատությունից ու շատ հաճախ էլ՝ զրկում ա կյանքից:

Լրիվ ուրիշ ու լրիվ արդարացի պահանջ ա՝ **օրենքի առաջ** բոլոր-բոլորի հավասարության պահանջը, ինչը բխում ա Հյումի նշած առաջին ու երրորդ նորմերից: Էս պահանջն արդեն լրիվ բարոյական պահանջ ա, որովհետեւ ազատ մրցություն ա հաստատում, իսկ ազատ մրցության միջոցով էլ՝ նյութական ու հոգեւոր բարիքներն արդա՛ր ա բաշխում:

Երբ էս բարիքներն ազատ մրցությամբ չեն բաշխվում, այսինքն՝ երբ սրանց բաշխողը մա՛րդն ա կամ մարդկանց խո՛ւմբը, ոնց որ քիչ թե շատ սոցիալիստական երկրներում ա արվում, բաշխումն արդեն **անպայման անարդար ա ու կախված ա բաշխողի քմահաճույքից**: Էս անարդարությունն էլ, ի վերջո, հասցնում ա քաղաքացիական անհամաձայնության:

Նորից դառնանք իսլամին: **Իսլամ բառը նշանակում է՝ ենթարկվելը, հնազանդությունը, իսկ հետագայում էլ՝ մեկնաբանվեց որպես Ալլահի կամքը**: Մուսուլմանը կամ մահմեդականը էն անձն ա, ով իր ողջ էությամբ ու կեցությամբ հանձնվել ա Ալլահի կամքին ու հնազանդ ա Ալլահի Է՛ն պահաջին, թե մահմեդական մարդ-արարածը պիտի ուրիշ մահմեդական մարդկանց հետ վերաբերվի արդարությամբ, հավասարությամբ ու կարեկցանքով: Բայց մահմեդականը համ էլ Ալլահի միաբան ազգ-բանակի հավատարիմ զինվորն ա:

Իհարկե՝ էս արդարությունը, ինչին կասեի «Մահմեդական սոցիալական արդարություն», հաստատում ա Ալլահը, այսինքն՝ Ղորանը կամ հոգեւորականները, իսկ թե ինչի ա հասցնում հավասարության պահանջը, արդեն ասվեց: Ինչ վերաբերում ա բոլոր-բոլորին կարեկցելուն, պիտի ասվի, որ սա **մաքսիմալիստական պահանջ ա**:

Ավելի ճիշտ ու ռեալիստական ա մինիմալիստական պահանջը՝ բոլոր-բոլորին կարեկցելու փոխարեն՝ **մարդ արարածը պիտի ոչ մեկին վնաս չտա, այսինքն՝ ոչ մեկի նյութական ու հոգեւոր ունեցվածքը չխլի կամ չվնասի**:

Էս առումով՝ լրիվ ճիշտ ա Լյուդվիգ ֆոն Միզեսը, երբ ասում ա. **«Եթե մարդը պահպանում ա հասարակական համակեցության կանոնները, էդժամ էս մարդը, հենց միայն էս պատճառով, լրիվ բարոյական մարդ ա»**: Ըստ էության՝ սա Ոսկե կանոնի կամ Կանտի նշանավոր իմպերատիվի ձեւակերպումներից մեկն ա. «Մի արա ուրիշներին էն բաները, ինչը չես ուզում, որ քե՛զ անեն»: Ես կարծում եմ, որ եթե մեկնումեկը հանկարծ սրտանց կարեկցի բոլոր-բոլորին, սիրտը կպայթի:

Բացի սա, **իսլամն անհատից խլում ա թե՛ սրա ազատությունը, թե՛ կամքը, թե՛ հոգեւոր անհատական ունեցվածքի բոլոր-բոլոր տեսակները, որովհետեւ մահմեդականը պիտի ենթարկվի մենակ ու մենակ Ալլահի՛ կամքին ու գործի մենակ ու մենակ Ալլահի՛ ուզած ձեւով**:

Ալլահի՛ ուզած ձեւն էլ մենակ «Ալլահի հոգեւոր ծառաները», այսինքն, իսլամի կղերականները գիտեն, ուրեմն, մահմեդականը պիտի անտրտունջ ենթարկվի սրանց, որ միաբանություն ըլնի:

Մահմեդը ազգ-բանակային «ցեղ», ազգ-բանակային տոտալիտար հանրություն էր ստեղծում, ու իր հանրության անդամներին հնազանդությանը վարժեցնելու համար էլ՝ ստիպեց, որ անդամները օրը երեք անգամ գետնատարած աղոթք անեն (հետագայում՝ օրը հինգ անգամ):

Սա շատ կարեւոր ա, որովհետեւ սա, ըստ էության, Պլատոնի ծրագիրն ա, ինչը Մահմեդը կրկնում ա Պլատոնից մոտ 1100 տարի հետո, ու Մահմեդից մոտ

1100 տարի հետո էլ՝ Հեգելն ա Գերմանիայում կրկնելու: Սա նշանակում ա, որ իսլամական ազգ-բանակային հանրությունը մի տոտալիտար հասարակարգ ա:

Սա նշանակում ա, որ իսլամական **ազգ-բանակի առանձին անդամը՝ անհատը, ոչինչ ա**, ու որ էս անդամի կյանքի միակ ու գերագույն նպատակը ողջ հանրության բարեկեցությունն ա: Իսկ **կրոնական պետության մեջ սա նշանակում ա, որ ողջ հանրությունը մի վիթխարի եկեղեցի ա** (հիշենք, որ «եկեղեցի»-ն հունարեն բառը նշանակում ա՝ ժողով):

Ի տարբերություն քրիստոնեական եկեղեցու, ինչը Նապոլեոն Բոնապարտի ռեֆորմից հետո արդեն առանձին ա աշխարհիկ հարցերից ու, մանավանդ, իրավունք չունի խառնվելու կրթության հարցերին (խոսքը ՀՀ-ի մասին չի), ու նվիրված ա մենակ պաշտամունքին, իսլամական մզկիթը զբաղվում ա մահմեդականների կյանքի բոլոր-բոլոր հարցերով:

Ըստ Ղորանի՝ սրբազանն ու աշխարհիկն է՛լ բաժան-բաժան չեն, կրոնականն ու քաղաքականն է՛լ անջատ չեն, սեռականն ու պաշտամունքայինն է՛լ առանձին չեն: Ամբողջ կյա՛նքն ա սուրբ, ուրեմն՝ պիտի ընդգրկվի աստվածային ու միաբան ազգ-բանակի ոլորտը:

Ու ըստ Ղորանի՝ **իսլամի նպատակը միաբանությունն ա, այսինքն՝ ողջ կյանքն իր բոլոր կողմերով հանդերձ մի հանրության մեջ միավորելն ա, մի ազգ-բանակ ստեղծելն ա, ու մահմեդականները հենց սրանով են միավորվում Աստծո հետ**:

Եվրոպական քրիստոնեական տոտալիտար երկրների եկեղեցի-պետությունների համար հանրության էս միաբանությունն ու անհատի էս ոչնչականությունն էնքան ճակատագրական չէղավ, որովհետեւ սրանց բնակիչները, քիչ թե շատ, վարժվել էին Հին Հունական ու Հռոմեական դեմոկրատական նորմերին:

Այսինքն, ոնց որ ասվեց, Եվրոպայում, քիչ թե շատ, կենցաղը համարում էին անհատական ունեցվածք, ու էս վարժանքը բուֆերի դեր խաղաց ու, ի վերջո, ստիպեց, որ եկեղեցուն հեռացնեն պետական գործերին խառնվելու ու կրթության ասպարեզներից ու, նորից՝ քիչ թե շատ, դեմոկրատական կարգ հաստատեն:

Բայց ոնց որ Լյուդվիգ ֆոն Միզեսն ա ասում, **«Արեւելքը (մանավանդ Մահմեդական Արեւելքը) երբեք չի մշակել ու էդպես էլ չմշակեց հասարակության մեջ անհատի ազատության սկզբունքը, ու Արեւելքն Արեւմուտքից հենց սրանո՛վ ա տարբերվում»:**

Սա էսօրվա իսլամական երկրների խոշորագույն ու ճակատագրական ողբերգությունն ա:

Էսօրվա իսլամական համարյա ամեն մի երկիրն էլ մի վիթխարի ազգ-բանակ ա, ու էս երկրների անհատներն էլ, ուզած-չուզած, էս ազգ-բանակի զինվորն ու հլու հնազանդ հպատակն են:

13.7 ԻՍԼԱՄԱԿԱՆ ԱԶԳ-ԲԱՆԱԿՆԵՐԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Իսլամի ուսմունքը ոչ իսլամականների, այսինքն՝ գյավուրների (անհավատների) նկատմամբ երեւի նույնքան անհանդուրժող ա, ինչքան Հին Կտակարանինը (մասամբ էլ՝ Նորինը), ու Նոր Կտակարանի պես՝ Ղորանում է՛լ ոնց որ թե ազգային խտրություն չկա: Բայց ազգային էս խտրությունը չկա մենակ իսլամական հանրության ներսում, այսինքն՝ բուն իսլամական երկրում:

Ըստ Ղորանի՝ կա էրկու «ազգ», մահմեդականների «ազգը», այսինքն՝ տվյալ երկրում իսլամն ընդունածների հանրությունը, ու անհավատ գյավուրների «ազգը»: Ու Ղորանը, ճիշտ ու ճիշտ ազգիստների հիմնական լոզունգի պես, (այսինքն, «մի ազգ, մի երկիր, մի մշակույթ» լոզունգի պես, իսկ լեզվի ընդհանրութ-

յունն էստեղ, հասկանալի պատճառով, չի պահանջվում), ողջ աշխարհը բաժանում ա երկու մասի, երկու «տան»:

Առաջին «տունը» – «Իսլամի» կամ «խաղաղության տունն» ա, այսինքն՝ տվյալ իսլամական երկիրը, իր ազգ-բանակով (սկզբնական շրջանում՝ մահմեդականների զավթած երկրները): Երկրորդ տունը՝ «Պատերազմի տունն» ա, այսինքն՝ ոչ մահմեդական գյավուրների երկրները, որ հլը պիտի նվաճվեն:

Ոչ իսլամական բոլոր-բոլոր երկրների հետ հավերժական պատերազմի էս սկզբունքը լարված կծկված զսպանակի կամ դանդաղ գործողության ռումբի պես դրված ա իսլամի ուսմունքի հենց հիմքում:

(Էս սկզբունքը շատ-շատ էր հարազատ արաբական քոչվոր ցեղերին, որովհետեւ էս ցեղերի հիմնական արհեստներից մեկը՝ ավազակությունն ու թալանն էր, քարվան կտրելը, էս դարձվածքի բուն իմաստով, կամ, արաբերեն ասած՝ «ղազու»-ն:

(Եթե արաբ ցեղերից մեկնումեկը էթում էր, որ ուրիշ մի արաբական ցեղի թալանի, հոգ էր տանում, որ մարդ չսպանի, վախենալով վենդետայից, այսինքն՝ արյան վրեժից: Հենց ինքը՝ Մահմեդը, առանց խղճի որեւէ խայթի, զբաղվում էր թալանով, քանզի թալանը «հայրերի սրբագործված» ավանդույթն էր ու բոլորովին էլ դատապարտելի բան չէր համարվում: Բնութագրական ա, որ հետագայում թալանչի զինվորն արդեն համարվում էր՝ հանուն իսլամի սրբազան պատերազմի զինվոր):

Ուրեմն՝ իսլամը ծագել ա քրիստոնեությունից, ու մահմեդականները շատ բան են փոխ առել քրիստոնյա աշխարհից; (Հետաքրքիր ա, որ արաբները նույնիսկ չադրայի՛ գործածությունն են փոխ առել Բյուզանդիայի քրիստոնյաներից):

Սկզբում, Արաբական խալիֆաթի կազմվելու առաջին տասնամյակներին, իսլամը շատ ավելի հանդուրժող էր, քան չորրորդ դարի քրիստոնեությունը: Պետական իշխանությունը նվաճած **քրիստոնյաները** ոչնչացնո՛ւմ էին «հեթանոսական», այսինքն՝ ոչ քրիստոնեական արվեստն ու գիտությունը, իսկ առաջին մահմեդականները սովորո՛ւմ էին իրենց նվաճած երկրների ժողովուրդներից, յուրացնում էին սրանց մշակույթը:

(Սրա հիմնական պատճառը երեւի մահմեդականների փոքրաթվությունն ու խիստ հետամնացությունն էր, ու իրանք սա շատ լավ էին գիտակցում):

Հենց մահմեդականնե՛րն սկսեցին եվրոպական Վերածնունդն ու Լուսավորչությունը: Հենց արաբնե՛րն էին, որ նվաճելով Հնդկաստանը, հնդիկներից փոխ առան թվանշանները գրելու համակարգն ու սա տարածեցին Եվրոպայում, որտեղից էլ սա տարածվեց ողջ աշխարհում: Հենց մահմեդակա՛ն գիտնականներն են հորինել «քիմիա, ալգեբրա» կամ «ալջեբրա» բառերն ու իսլամական գիտնականները զգալի զարգացրել էին էս գիտությունները: Ու հենց մահմեդականնե՛րը հայտնագործին Հին Հունական ոչ կանոնական համարվող գիտությունը ու սա փոխանցեցին միջնադարյան Եվրոպային:

Բայց իսլամը վերացրել էր անհատական հոգեւոր ունեցվածքը, ավելի ճիշտ, հոգեւոր ունեցվածքը հանրայնացրել էր ու միաբան ազգ-բանակ էր ստեղծե, ու էս հանգամանքը, վաղ թե ուշ, պիտի իր ազդեցությունն ունենար ու ունեցավ է՛լ:

Իսլամական երկրները քիչ-քիչ «փակվեցին» ու դարձան լրիվ տոտալիտար, տեղ-տեղ հասնելով ծայրահեղությունների: Մահմեդական երկրների առաջընթացը խիստ դադարեց, ու Իսլամական Աշխարհը էսօր դեմոկրատական համարվող երկրներից չափազանց հետ ընկավ:

Հետ ընկավ համարյա ամեն առումով, թե՛ արտադրական կարողությունների, թե՛ գիտատեխնիկական առաջընթացի, թե՛ արվեստի, երաժշտության ու գրականության ասպարեզներում:

Ու ամենասարսափելին այն հանգամանքն ա, որ էսօրվա իսլամական ազգ-բանակների մի մասը ոչ մահմեդական աշխարհը համարում ա «Պատերազմի Տուն», այսինքն՝ իր արդեն մահացու թշնամին, (մանավանդ Իսրայելը հիմնելուց ու ԱՄՆ-ի (ու համ էլ ուրիշների) 60-ամյա արտաքին անբարո քաղաքականությունից հետո) ուրեմն՝ համ էլ ոչնչացնելու արժանի:

Ու քանի որ իսլամական ազգ-բանակներից արդեն ատոմային ռումբ ունեցող էլ կա ու շուտով երեւի էլի՛ կըլնի, էս Գնդի առանց էն էլ սարսափելի վիճակն շատ ավելի սարսափելի ա:

Միակ ելքը, ավելի ճիշտ, մեր միակ հույսը պիտի լինի ինչ-որ բարոյական՝ մի ինչ-որ ընդունելի ձեւով մահմեդականներին համոզելը, որ սրանք իրենց եկեղեցուն չթողնեն, որ խառնվի պետության ու կրթության հարցերին:

14. Ո՞Վ Ա ՄԵՂԱՎՈՐԸ

ՃՈՐՏԸ.– Գիդեՙք, ինչքան բան կանեի, թե որ ընձի հրամայեին:

ԿԱՐԵԼ ՉԱՊԵԿ

Մեր էս «հայեցի մտածողության» իրական էությունը հետեւյալն ա:

Մենք մեր էս իրոք որ թշվառ ու ողորմելի վիճակի մեղավորներին ման ենք գալիս մենակ ու մենակ դրսում, մենակ ու մենակ մեզնից (ու շատ անգամն էլ՝ մեր երկրից) դուրս:

Մենք մեղավոր ենք համարում՝ առաջվա (մեկ-մեկ էլ՝ էսօրվա) պարսիկներին, առաջվա հույներին ու հռոմեացիներին ու հետո էլ՝ արաբներին:

Մենք մեր էս աղետալի վիճակի մեղավորն ենք համարում թուրքերին, ու էն էլ՝ 800 տարի, հրեաներին ու մասոնների (տարբերակ՝ ջհուդամասոնների) ու ռուսներին ու ամերիկացիներին ու անգլիացիներին ու գերմանացիներին ու ֆրանսիացիներին:

Մենք մեղավոր ենք համարում Լենինին, Ստալինին, Աթաթուրքին, Ֆրունզեին, Պետրոս Մեծին ու Եկատերինա 2-րդին, Պուտինին են, եւն, եւն:

Ում ասես, որ մենք մեղավոր չենք համարում (բացի երեւի նեսեցներն ու չուկչիներն ու Ավստրիալիայի ու մեկ էլ՝ Ձամբո-Մամբո ցեղի բնիկները): Ամեն տեղ ու ամեն ինչի մեջ ման ենք գալիս մեր էսօրվա վիճակի ու ապագա ահավոր վտանգների մեղավորներին:

Ու բնութագրական ա, որ շատ անգամ, նույնիսկ երբ հասկանում ենք, որ մեր թշվառությունների հիմնական պատճառը մեր էսօրվա իշխանավորների ստեղծած պետությունն ա (պետերի խմբի միաբան «ազգ-բանակը», ինչն իրո՛ք մի թալանչի ազգ-բանակի պես ա գործում), սրանց ասում ենք «թուրք» կամ «թրքի գործակալ» կամ էլ «ջհուդամասոնական գործակալ»:

Ու երբեք ոչ մեկիս մտքով չի անցնում, որ կարող ա մեղավոր ըլնենք հենց մե՛նք, որ մեր սեփական ճորտության ու թշվառության պատճառը **մեր իսկ անկեղծ մոլորություններն ու նախապաշարմունքներն ու անտեղյակությունն են, որ մեր համար անսահման թանկ թվացող ուտոպիական, անիրականալի երազների հետեւից ընկնելը երեւի կործանարար ա**:

Մենք մեզ թույլ էլ չենք տալիս կասկածելու, որ շատ հնարավոր ա, որ էս կործանարար «միաբանող գաղափարախոսության» հիմնադիրները, օրինակ՝ համ էլ մեր «հանճարեղ» համարվող հայ գրողներից մի քանիսն են:

Մենք, շատ-շատ ագամ, մեծամոլ ու մեծամիտ ենք, սնահավատ ու նախապաշարված ու, հազար ափսոս, երբեմն էլ խավարամոլ ու ստրկամիտ ու, հազար ափսոս, շատ անգամն էլ ահավոր վախկոտ ենք:

Մենք, շատշատ հաճախ, **մանկամիտ ենք**:

Սրանից քիչ առաջ շատ կլսեիր. «Մենք փայլուն ազգ ենք, մենք համաշխարհային ազգ ենք»: Վերջերս արդեն ուրիշ բան ես լսում. «Որպես ազգ՝ բանի պետք չենք» (այսինքն՝ «միաբանող ազգային գաղափարախոսություն» չունենք):

Բայց երբեւէ լսե՞լ եք, որ մեկնումեկն ասի. «Ես փայլուն մարդ եմ, ես համաշխարհային մարդ եմ, ես անպետք մարդ եմ» (տես Կարել Չապեկի՝ Բառերին գերի վերնագիրը):

«Միաբանող գաղափարախոսությունները» մեզ ձեռ են տալի հենց էն բանի համար, որ ԱԶԱՏՈՒՄ ԵՆ ԱՆՁՆԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ:

Իլֆն ու Պետրովն ասում են, որ խեղդվողների փրկության գործը ամեն մի խեղդվողի անձնական գործն ա: Մտածելու բան չի՞: Մտածելու ժամանակը չի՞:

Ժամանակը չի՞, որ ընդունենք, որ մենք անիվ հայտնագործող չենք, մանավանդ, որ այդ անիվը վաղուց հայտնագործել են:

Նորից ու նորից եմ ասում.

Էլի՛ եմ հարցնում: Ասենք թե՝ միաբանվանք: Միաբանվանք ու շարք կանգնեցինք ու մի հատ էլ գերազնիվ ու գերխելոք ֆյուրեր ճարեցինք (էս ապրանքից ոչ միայն Հայաստանը չունի, այլեւ ողջ աշխարհը, բայց մի որպե համարենք, թե ճարել ենք): Հետո էլ էսօրվա իշխանավորներին քշինք ու դատցինք ու իրանց ունեցվածքն էլ խլինք:

ԱՍԵՔ, ԽՆԴՐԵՄ, ՀԵՏՈ ՈՒՆՉ ԵՆՔ ԱՆԵԼՈՒ:

Շարք-շարք հարձակվելու ենք Թուրքիայի՞ ու Չինաստանի՞ վրա ու ջնջելո՞ւ ենք դրանց, որ Ծովից-ծովը սարքե՞նք:

Ֆ. Ա. ՀԱՅԵԿԻ ՈՒ Լ. Հ. Է. ՄԻԶԵՍԻ ԿԱՐԵՎՈՐ ԳՐՔԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

«Գիտական տեսությունը ոչ թե էն պատճառով ա հաղթում, որ դրա հակառակորդները համոզվում են, որ էդ տեսությունն ա ճիշտ ու լուսավորվում են, այլ որ էդ հակառակորդները քիչ-քիչ մեռնում վերանում են, իսկ նոր սերունդն էդ տեսությունը (բառացի) մոր կաթի հետ ա յուրացնում»:

ՄԱՔՍ ՊԼԱՆԿ

HAYEK. F. A. (FRIEDRIECH AUGUST VON HAYEK)

(ԷՆ ԵՐԵՔ ԱՄԵՆԱԿԱՐԵՎՈՐ ԳԻՐՔԸ, ՈՐ ԲԱՐՈՅԱԿԱՐԳ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԻՏԻ ՊԱՐՏԱԴԻՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԵՆ)

1. ***Law, Legislation and Liberty: a New Statement of the Liberal Principles of Justice and Political Economy***, London, Routledge And Chicago, Chicago University Press.
   (i) Vol. I, ***Rules and Order***, 1973;
   (ii) Vol. II, ***The Mirage of Social Justice***, 1976;
   (iii) Vol. III, ***The Political Order of a Free People***, 1978.

ԼՐԱՑՈՒՑԻՉ, ԲԱՅՑ ՈՉ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆՆԵՐԸ

2. ***The Road to Serfdom***, London, Routledge, 1944 And Chicago, Chicago University Press, 1944.
3. ***The Constitution of Liberty***, London, Routledge, 1960 And Chicago, Chicago University Press, 1960
4. ***Denationalization of Money***, London: Institute of Economic Affairs.
5. ***The Fatal Conceit: The Errors of Socialism***, London, Routledge, 1988 And Chicago, Chicago University Press, 1989.

ФРИДРИХ АВГУСТ ФОН ХАЙЕК

(ԷՆ ԵՐԵՔ ԱՄԵՆԱԿԱՐԵՎՈՐ ԳԻՐՔԸ, ՈՐ ԲԱՐՈՅԱԿԱՐԳ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԻՏԻ ՊԱՐՏԱԴԻՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԵՆ)

Право, законодательство и свобода
(1) Правила и порядок;
(2) Мираж социальной справедливости;
(3) Общество свободных (Политический порядок свободного народа)

ԼՐԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ

Дорога к рабству
Пагубная самонадеянность
Конституция свободы
Частные деньги

MISES L. (LUDWIG HEINRICH EDLER VON MISES)

«Մտածելու ունակություն ունեցող մարդու ու էս ունակությունից զուրկ մարդու արանքը անանցանելի անդունդ կա»:

ԼՅՈՒԴՎԻԳ ՖՈՆ ՄԻԶԵՍ

1. ***Socialism: An Economic and Sociological Analysis*** (1922, 1932, 1951)
2. ***Liberalismus*** (1927, 1962)
3. ***Bureaucracy*** (1944, 1962)
4. ***Human Action: A Treatise on Economics*** (1949, 1963, 1966, 1996)
5. ***The Anti-Capitalistic Mentality*** (1956)

ЛЮДВИГ ФОН МИЗЕС

1. **Социализм**
2. **Либерализм**
3. **Бюрократия как запланированный хаос**
4. **Человеческая деятельность**
5. **Свобода и собственность**

Меружан Арутюнян

Что будем делать с объединением?

Эта статья, “Что будем делать с объединением?” относится к лозунгу: “Мы все должны обязательно объединиться и стать нацией-армией, поэтому нам нужна национальная идеология, объединяющая нас для того, чтобы противостоять вековым угрозам, окружающих нас.” Показано, что идея национальной объединяющей идеологии ошибочна, антидемократична и пагубна, если только она не призывает объединиться вокруг тех основных моральных и правовых нормах, на которых основано открытое гражданское демократическое общество. Приведены несколько исторические и современные примеры, показывающие, что построение нации-армии всегда было пагубно для данной нации. В конце статьи приведена краткая перечень великих либертарианцев – Людвига фона Мизеса и Фридриха Августа фона Хайека на английском и русском, чтобы армянский читатель имел возможность познакомиться с основными либертарианскими идеями.

Meruzhan Harutyunyan

What Are We to Do with Unity?

The paper, *What Are We to Do with Unity?* deals with the slogan, “we must unite and become a nation-army, and hence we need a national ideology uniting us, to oppose all the perennial dangers besieging us.” It is shown that the idea of national unity is entirely false, antidemocratic and disastrous unless it calls to unite for the basic moral and law rules upon which a civil or open and democratic society is founded. A few historical and modern examples are presented to show the fatal consequences of going astray from the libertarian principles and building an army-nation which has always been destroying the given nation. At the end of the paper a brief list of a few works by the great libertarians, Ludwig von Mises and Friedriech August von Hayek, is presented—in English and Russian—for the Armenian general reader to get acquainted with the main libertarian ideas.

Հայաստան-2017, հուլիս-սեպտեմբեր. փաստեր, իրադարձություններ

1 հուլիսի

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի պատգամավորները հրապարակել են միջնորդություն՝ վեհաժողովի նախագահ Պեդրո Ագրամունտի լիազորությունները դադարեցնելու մասին: Սա այդ կառույցի պատմության ընթացքում ղեկավարի հանդեպ ինպիչմենտի գործընթաց սկսելու առաջին դեպքն է: Քվեարկությունը տեղի կունենա ԵԽԽՎ-ի՝ հոկտեմբերին կայանալիք հաջորդ նստաշրջանում: ԵԽԽՎ նախագահին պաշտոնանկ անելու նախաձեռնությամբ պատգամավորները հանդես են եկել այն բանից հետո, երբ Ագրամունտի գլխավորությամբ մի պատվիրակություն, որի կազմում եղել են նաեւ ՌԴ Պետդումայի ներկայացուցիչներ, մեկնել է Սիրիա: Նրա պաշտոնանկությունը պահանջել է նաեւ ԵԽԽՎ-ում Հայաստանի պատվիրակությունը, որի անդամները Ագրամունտին բազմիցս մեղադրել են Ադրբեջանի հետ գործարքների գնալու եւ Բաքվից նվերներ ստանալու համար:

3 հուլիսի

Երեւանի Ավան եւ Նոր-Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում մեկնարկեց «Սասնա ծռեր»-ի գործով 18 մեղադրյալի մասով առաջին դատական նիստը: Սա առանձին վարույթով քննվող գործ է, եւ կքննվի արտագնա:

Մյուս 14 անդամների գործերը ես քննվում են արտագնա՝ նույն դատարանում:

4 հուլիսի

Առավոտյան մեկնարկած Ազգային ժողովն այսօր արտահերթ նստաշրջանում քննարկեց Սեւանից հավելյալ 100 միլիոն խորանարդ մետր ջուր բաց թողնելու նախագիծը, որով առաջարկվում է ներկայիս տարեկան 170 միլիոն խորանարդ մետրի փոխարեն լճից բաց թողնել 270 խորանարդ մետր ջուր: Լրացուցիչ ջրառի անհրաժեշտությունը կառավարությունը հիմնավորում է էներգետիկ եւ ոռոգման կարիքներով: Մինչդեռ բնապահպանները պնդում են, որ լրացուցիչ ջուր բաց թողնելու նախաձեռնության հիմնական պատճառներից են ռուսական կապիտալով աշխատող ՀԷԿ-երի համար հավելյալ շահույթներ ապահովելը, ձկնաբուծարանները ջրով ապահովելը, լճափի մասնավոր կառույցները, այդ թվում՝ առանձնատները ջրից պաշտպանելու ցանկությունը: Աժ նիստին զուգահեռ՝ ավելի քան յոթ տասնյակ կազմակերպությունների կողմից ստեղծված «S.O.S. Սեւան» նախաձեռնությունը բողոքի ակցիա անցկացրեց խորհրդարանի շենքի մոտ:

5 հուլիսի

Լեռնային Ղարաբաղի պաշտպանության նախարարության հաղորդմամբ՝ հակառակորդի նախահարձակ ակտիվությունը ճնշելու համար ՊԲ առաջապահ զորամասերը ժամը 20:31-20:40-ի սահմաններում ստիպված են եղել ձեռնարկել պատասխան գործողություններ, ինչի արդյունքում վնաս է հասցվել Ալխանլու գյուղում տեղակայված կրակակետին: ՊԲ համապատասխան ծառայությունների տվյալներով՝ հակառակորդն ունի կորուստներ: Հայկական կողմը կորուստներ չի ունեցել:

11 հուլիսի

Բրյուսելում՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների նախաձեռնությամբ

եւ ներկայությամբ, հանդիպեցին Հայաստանի ու Ադրբեջանի արտգործնախարարներ Էդվարդ Նալբանդյանը եւ Էլմար Մամեդյարովը: Պաշտոնական հաղորդագրության համաձայն՝Հայաստանի ԱԳ նախարարը հանդիպման ժամանակ ընդգծել է շփման գծում իրավիճակի կայունացման անհրաժեշտությունն ու այդ նպատակով շեշտել Վիեննայի եւ Սանկտ Պետերբուրգի գագաթաժողովներին ձեռք բերված պայմանավորվածությունների իրագործումը:

15 հուլիսի

ԿԸՀ-ն իր արտահերթ նիստում մերժեց «Օհանյան-Ռաֆֆի-Օսկանյան» դաշինքի դիմումը, որով պահանջվում էր մեկ ընդհանուր բազայում միավորել ապրիլի 2-ի ընտրությունների ժամանակ տեղամասերում հատուկ սարքերով ստացված մատնահետքերը, իսկ այնուհետեւ՝ ԵԱՀԿ դիտորդական առաքելության եւ իրենց մասնագետների անմիջական մասնակցությամբ ստուգել՝ արդյոք կան մատնահետքերի համընկնումներ: Դիմումը մերժելուց հետո դաշինքի լիազոր ներկայացուցիչն «Ազատության» հետ զրույցում նշեց, որ դեռ հստակ որոշում չունեն՝ կապված վարչական դատարան դիմելու հետ, նաեւ հավելեց, որ իրենց մասնագետներն այժմ աշխատում են ցուցակների հետ՝ փորձելով բացահայտել կրկնաքվերակության դեպքերը:

17 հուլիսի

Երեւանում տեղի ունեցավ հավաք եւ երթ՝ ի աջակցություն «Սասնա ծռերի» անդամների: Մեկ տարի առաջ այս օրը զինված խմբի անդամները վաղ առավոտյան գրավեցին Էրեբունու ոստիկանական գնդի տարածքը եւ այն իրենց վերահսկողության տակ պահեցին երկու շաբաթ: «Սասնա ծռերի» անդամները հուլիսի 31-ին հանձնվեցին իրավապահներին: Երթին մասնակցում էին նաեւ ընդդիմադիր քաղաքական գործիչներ:

18 հուլիսի

Լեռնային Ղարաբաղի արտաքին գործերի նախարար Կարեն Միրզոյանը եւ պաշտպանության նախարար Լեւոն Մնացականյանն ընդունեցին ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ դեսպան Անջեյ Կասպշիկին: Հանդիպման ընթացքում կողմերը քննարկեցին ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչի գրասենյակի կողմից ԼՂ Պաշտպանության բանակի եւ Ադրբեջանի զինված ուժերի շփման գծում իրականացվող դիտարկումներին վերաբերող մի շարք հարցեր: Անդրադարձ կատարվեց նաեւ վերջին շրջանում Ադրբեջանի զինված ուժերի կողմից հրադադարի պայմանակարգի ինտենսիվ խախտումներին: Վերջին շրջանում, հատկապես հուլիսի սկզբին շփման գծում լարվածության սաստկացումից հետո, միջնորդները փորձում են առավել աշխուժացնել առնվազն Հայաստանի եւ Ադրբեջանի արտգործնախարարների մակարդակով հանդիպումները:

19 հուլիսի

Բակո Սահակյանը վերընտրվեց Լեռնային Ղարաբաղի նախագահ: Ընտրությունը կայացավ Ղարաբաղի Ազգային ժողովի հատուկ նիստում: Բակո Սահակյանի օգտին քվեարկեց 28, նրա միակ մրցակից, Ստեփանակերտի նախկին քաղաքապետ, պատգամավոր Էդուարդ Աղաբեկյանի օգտին՝ 4 պատգամավոր: Բակո Սահակյանը Լեռնային Ղարաբաղը ղեկավարում է արդեն տասը տարի եւ կշարունակի ղեկավարել նաեւ անցումային եռամյա փուլում՝ մինչեւ փոփոխված Սահմանադրության ամբողջապես կյանքի կոչվելը:

20 հուլիսի

Կառավարությունն այսօրվա նիստում հավանություն տվեց հայ-ռուսական միացյալ զորախումբ ստեղծելու համաձայնագիրը վավերացնելու մասին

օրենսդրական նախաձեռնությանը եւ այն սահմանված կարգով կներկայացնի Ազգային ժողով՝ հաստատման: Փաստաթղթի բացատրությունում նշված է, որ միացյալ զորախումբը նախատեսված է Կովկասյան տարածաշրջանում ռազմական անվտանգություն ապահովելու համար: Այն կոչված է կանխելու եւ հետ մղելու Ռուսաստանի ու Հայաստանի դեմ հնարավոր զինված հարձակումը տարածաշրջանի սահմաններում:

23 հուլիսի

Նշվեց Հայ Առաքելական եկեղեցու հինգ տաղավար տոներից մեկը՝ Քրիստոսի Պայծառակերպության տոնը: Qahana.am կայքի տեղեկացմամբ՝ Հայ Առաքելական Սուրբ եկեղեցին Պայծառակերպության տոնը նշում է նաեւ Վարդավառ անվանումով, որի ժամանակ ժողովրդական սովորույթներից է միմյանց վրա ջուր ցողելը:

3 օգոստոսի

Կառավարությունն ընդունեց «Թվային Հայաստան» հիմնադրամ ստեղծելու եւ դրա կանոնադրությունը հաստատելու մասին որոշում՝ նպատակ ունենալով բարձրացնել կառավարման արդյունավետությունը, ապահովել թափանցիկություն եւ բարենպաստ բիզնես միջավայր ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ: Հիմնադրամի ստեղծումը պայմանավորված է ՀՀ թվային օրակարգի իրագործման անհրաժեշտությամբ:

5 օգոստոսի

Աշխատանքային այցով Թեհրան ժամանած Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը ներկա գտնվեց Իրանի վերընտրված նախագահ Հասան Ռոհանիի երդման պաշտոնական արարողությանը: ՀՀ նախագահի աշխատակազմի հասարակայնության եւ տեղեկատվության միջոցների հետ կապերի վարչության հաղորդմամբ՝ երդման արարողությունից հետո Սերժ Սարգսյանը հանդիպում ունեցավ Հասան Ռոհանիի հետ, որի ընթացքում անդրադարձ եղավ էներգետիկայի, մասնավորապես՝ գազի եւ էլեկտրաէներգետիկայի, ինչպես նաեւ տրանսպորտի ու հաղորդակցության բնագավառներում, այդ թվում՝ Հայաստանի եւ Իրանի տարածքներով Պարսից ծոցը Սեւ ծովի հետ կապող միջազգային տրանսպորտային ու տարանցիկ ուղիների օգտագործման կարեւորությանը:

8 օգոստոսի

Այս տարի օգոստոսի 8-ի դրությամբ Հայաստանից արտահանվել է շուրջ 27.8 հազար տոննա ծիրան՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 19.3 հազար տոննայի դիմաց: Այդ մասին հաղորդում է գյուղատնտեսության նախարարության տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժինը:

10 օգոստոսի

Շուրջ 20 օր հացադուլի մեջ գտնվող «Սասնա ծռեր» խմբի անդամներ Վարդան Գերավետյանն ու Տիգրան Մանուկյանը դադարեցրեցին հացադուլը: Վերջիններս հացադուլ էին հայտարարել՝ ներկայացնելով մի շարք պահանջներ. այդ թվում՝ «Սասնա ծռեր» խմբի անդամներին, նաեւ Անդրիաս Ղուկասյանին, Գեւորգ Սաֆարյանին, Շանթ Հարությունյանին եւ Սարի թաղի բախումների գործով կալանավորված բնակիչներին ճանաչել քաղբանտարկյալներ: Բացի դրանից՝ «Նուբարաշեն» ՔԿՀ-ում պահվող «Սասնա ծռերին» ընդհանուր բանտախցերից տեղափոխել առանձնացված խցեր:

12 օգոստոսի

Ազգային վիճակագրական ծառայության տվյալներով նախագահ Սերժ Սարգսյանի պաշտոնավարման ընթացքում՝ 2008-2017 թվականներին Հայաս-

տանի մշտական բնակչությունը պակասել է ավելի քան 250 հազար մարդով: 2008-ի հունվարի 1-ին երկրի մշտական բնակչության թվաքանակը 3 միլիոն 230 հազար է եղել, այս տարվա հուլիսի 1-ի դրությամբ՝ 2 միլիոն 979 հազար: Եթե նշված 250 հազարը բաժանենք նախագահ Սարգսյանի պաշտոնավարման ինը տարիներին, ապա ստացվում է, որ յուրաքանչյուր տարի Հայաստանի բնակչությունը պակասել է շուրջ 28 հազարով:

14 օգոստոսի

Քննչական կոմիտեի հաղորդմամբ՝ Արարատի մարզային քննչական վարչության Վեդիի քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ՝ «Խոսրովի անտառ» պետական արգելոցի տարածքում բռնկված հրդեհի դեպքով: Նախնական տվյալներով՝ 200-250 հա տարածքում այրվում է բուսածածկ եւ անտառածածկ տարածք:

16 օգոստոսի

Հայաստանի վարչապետ Կարեն Կարապետյանը ոչ պաշտոնական այցով մեկնեց Լեռնային Ղարաբաղ: Ըստ Ղարաբաղի կառավարության պաշտոնական կայքէջի, Կարեն Կարապետյանին Շահումյանի շրջանում դիմավորել է ԼՂՀ վարչապետ Արայիկ Հարությունյանը: Վարչապետները նախ ծանոթացել էին Վարդենիս-Մարտակերտ մայրուղու շինարարական աշխատանքներին՝ կարեւորելով այդ ճանապարհի նշանակությունը թե՛ ռազմավարական, թե՛ հարակից շրջանների սոցիալ-տնտեսական զարգացման տեսանկյուններից, ապա մասնակցել են Քարվաճառ քաղաքի մերձակայքում հիմնվող ջրի գործարանի հիմնարկեքին:

18 օգոստոսի

ԱՄՆ Սենթ-Լուիս քաղաքում կայացած Grand Chess Tour արագ շախմատի գերմրցաշարում հայ գրոսմայստեր Լեւոն Արոնյանը դարձավ մրցաշարի միանձնյա հաղթողը: Մոլորակի ուժեղագույն շախմատիստներից մեկը համարվող Լեւոն Արոնյանն անցած ապրիլին դարձել էր նաեւ Նորվեգիայի Ստավանգեր քաղաքում կայացած Norwey Chess շախմատային գերմրցաշարի միանձնյա հաղթողը, որի ընթացքում առավելության էր հասել, մասնավորապես, աշխարհի չեմպիոն Մագնուս Կարլսենի, նախկին չեմպիոն Վլադիմիր Կրամնիկի եւ հավակնորդ Սերգեյ Կարյակինի նկատմամբ:

21 օգոստոսի

Հունահռոմեական ոճի ըմբշամարտիկ Արթուր Ալեքսանյանը հաղթեց աշխարհի չեմպիոնի տիտղոսի համար ընթացող մենամարտում: Ըմբշամարտի աշխարհի առաջնության 98 կգ քաշային կարգի եզրափակիչում Ալեքսանյանի մրցակիցն էր Ռուսաստանը ներկայացնող Մուսա Եվլոեւը: Այսպիսով՝ Ալեքսանյանը դարձավ աշխարհի եռակի չեմպիոն: Նա Եվրոպայի եռակի չեմպիոն է, ինչպես նաեւ 2012 թվականի Օլիմպիական խաղերի բրոնզե եւ 2016 թվականի Օլիմպիական խաղերի ոսկե մեդալակիր:

21 օգոստոսի

Կյանքից հեռացել է ականավոր արձակագիր, դրամատուրգ, հրապարակախոս եւ թարգմանիչ Պերճ Զեյթունցյանը: Այդ մասին տեղեկացնում «Արմենպրեսը»: Զեյթունցյանը եղել է «Հայֆիլմ» կինոստուդիայի խմբագիր, այնուհետեւ հեռուստաֆիլմերի «Երեւան» ստուդիայի գլխավոր խմբագիր, 1975-1986 թվականներին՝ Հայաստանի գրողների միության քարտուղար, 1991-1992 թվականներին՝ Հայաստանի մշակույթի առաջին նախարարը: Հեղինակ էր 12 պիեսների, որոնք բեմադրվել են Երեւանի թատրոններում: Գրքերը թարգմանվել են 11 լեզուներով, այդ թվում՝ ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, արաբերեն:

23 օգոստոսի

«Հայ-ռուսական հարաբերություններն ամրապնդվել են ամենալուրջ ձեւով»: Այսօր Սոչիում Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի հետ հանդիպմանը նման հայտարարություն է արել Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը: Նա նշել է նաեւ, որ Հայաստանը ՌԴ-ի հետ համագործակցում է անվտանգությանը եւ տնտեսությանն առնչվող հարցերով:

24 օգոստոսի

Վեցերորդ գումարման Ազգային ժողովն ավարտեց նախօրեին մեկնարկած արտահերթ նիստի աշխատանքները: Խորհրդարանը երկրորդ ընթերցմամբ եւ ամբողջությամբ ընդունեց արտահերթ նիստը նախաձեռնողի՝ կառավարության ներկայացրած՝ Հայաստանի կառավարության կառուցվածքի մասին, Քննչական կոմիտեի մասին, Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին, Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին, Պետական տուրքի մասին օրենքներում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին օրինագծերը:

28 օգոստոսի

Սերժ Սարգսյանն ընդունեց Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) գլխավոր քարտուղար Յուրի Խաչատուրովին, ով պաշտոնը ստանձնելուց հետո առաջին անգամ էր այցելել Հայաստան: Նախագահի կայքէջի փոխանցմամբ՝ նախագահը եւ ՀԱՊԿ գլխավոր քարտուղարը քննարկել են «ընդհանուր առմամբ ՀԱՊԿ պատասխանատվության գոտում եւ, մասնավորապես, Հարավային Կովկասում խաղաղության, կայունության եւ անվտանգության ամրապնդմանն առնչվող հարցեր»:

1 սեպտեմբերի

Պաշտոնապես բացվեց Վարդենիս-Մարտակերտ ճանապարհը: Հանդիսավոր միջոցառմանը մասնակցել են նաեւ Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի նախագահները: Ծրագրի ընդհանուր արժեքը, ըստ «Հայաստան» հիմնադրամի, կազմել է մոտ 17 մլրդ դրամ, որից 7,5 միլիարդ դրամը հատկացրել է Հայաստանի կառավարությունը, մոտ երկու միլիարդ էլ՝ Լեռնային Ղարաբաղի կառավարությունը:

Ճանապարհը, որը Լեռնային Ղարաբաղի իշխանությունների բնորոշմամբ՝ «ռազմավարական նշանակություն» ունի, հիմնադրամի 25 տարվա գործունեության ընթացքում իրականացրած ամենախոշոր ծրագիրն է: Նոր մայրուղին սկիզբ է առնում Գեղարքունիքի մարզից եւ Արցախի Շահումյանի շրջանով ձգվում մինչեւ Մարտակերտի շրջան: 114.6 կմ երկարությամբ ճանապարհն ունի 10 եւ ավելի մետր լայնություն:

4 սեպտեմբերի

ՉԺՀ պաշտոնական այցի շրջանակներում ՀՀ պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանն այսօր հանդիպել է Չինաստանի պաշտպանության նախարար Չան Վանցյուանին: Հայ-չինական բանակցություններում կողմերը քննարկել են փոխգործակցությունը երկու երկրների համար զինվորական մասնագետների պատրաստման եւ հումանիտար ոլորտում: Համաձայնություն է ձեռք բերվել պաշտպանական եւ անվտանգության հարցերում հայ-չինական փոխգործակցությունը խորացնելու, փոխադարձ շփումներն ինտենսիվացնելու ուղղությամբ: Վիգեն Սարգսյանը շնորհակալություն է հայտնել չինական կողմին՝ տարիներ շարունակ Հայաստանի պաշտպանական ոլորտին անհատույց օգնություն տրամադրելու համար:

5 սեպտեմբերի

Երեւանի ավագանու Կրթության, մշակույթի եւ սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովը ձայների մեծամասնությամբ բացասական եզրակացություն տվեց «Ելք» խմբակցության անդամների կողմից առաջարկված փողոցների անվանակոչության վեց նախագծերին:

7 սեպտեմբերի

Լեռնային Ղարաբաղի Ազգային ժողովի հատուկ նիստում տեղի ունեցավ Ղարաբաղի նախագահ Բակո Սահակյանի երդման հանդիսավոր արարողությունը: Ըստ ԼՂՀ նախագահի պաշտոնական կայքէջի, Բակո Սահակյանը երդում է տվել Սահմանադրությամբ սահմանված կարգով եւ ստանձնել երկրի ղեկավարի պաշտոնը:

9 սեպտեմբերի

Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին երկրորդի, Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Կիրիլ Պատրիարքի ու Կովկասի մահմեդականների վարչության նախագահ շեյխ-ուլ-իսլամ Ալլահշուքյուր Փաշա Զադեի՝ նախօրեին Մոսկվայի Ս. Դանիելի պատրիարքանիստ վանքում տեղի ունեցած եռակողմ հանդիպումից հետո տարածաշրջանի հոգեւոր առաջնորդները հանդես են եկել համատեղ հայտարարությամբ. «Հայ եւ ադրբեջանցի ժողովուրդները մշտապես ապրելու են կողք կողքի, այդ իսկ պատճառով չկա այլընտրանք, քան խաղաղությունն ու համագործակցությունը: Աղոթում ենք խաղաղության պահպանման եւ հակամարտության հետ առնչված բոլոր հումանիտար խնդիրների շուտափույթ լուծման համար եւ առ այդ հորդորում մեր ժողովուրդների քաղաքական եւ հասարակական գործիչներին»,- մասնավորապես ասված է հայտարարությունում:

10 հունիսի

Սերժ Սարգսյանն ընդունել է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Իգոր Պոպովին (Ռուսաստան), Ռիչարդ Հոգլանդին (ԱՄՆ), Ստեֆան Վիսկոնտիին (Ֆրանսիա) եւ ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջեյ Կասպշիկին: Զրուցակիցները քննարկել են ղարաբաղյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման գործընթացին վերաբերող հարցեր: Անդրադարձ է եղել ղարաբաղա-ադրբեջանական ուժերի շփման գծում եւ Հայաստան-Ադրբեջան պետական սահմանին տիրող իրավիճակին, այդ թվում՝ առաջնագծում վերջին շրջանում տեղի ունեցած միջադեպերին: Հանդիպման մասնակիցները կարեւորել են բանակցային գործընթացում հակամարտության խաղաղ կարգավորմանն ուղղված հանձնառություններին կողմերի հավատարմությունը, ինչպես նաեւ բարձր մակարդակով ձեռք բերված պայմանավորվածությունների կատարումը: Ավելի վաղ համանախագահները Երեւանում հանդիպումներ են ունեցել նաեւ ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի եւ պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանի հետ: Տարածաշրջանային այցի շրջանակներում միջնորդներն առաջիկայում կլինեն նաեւ Ստեփանակերտում եւ Բաքվում: